17
Q-88

3663

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ
Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ

2004

Հ. Հ.
ԳՐԱԴԱՐԱՆ
2004

2014 17/Ա-88 ար 206 Ձ 353-ԱՀ

# ԴԱՐԱՍՏԱՆ ԽՐԱՏՈՒՑ

Քաղեալ 'ի գրոց իմաստասիրաց Ջա-
նիւք Ազնուական Գէորգայ
Արծրունեայ:

'Ի վայելս Մանկանց Հայաստանի:

'Ի Հայրապետութեան Տեառն
ԵՓՐԵՄԻ Սրբազնասուրբ
Կաթուղիկոսի ամ՟ Հայոց:

Հրամանաւ Գերարժան Սրբազնութ՟ն
Տ՟ն ՆԵՐՍԻՍԻ Առաքելագործ Ար-
հիեպիսկոպոսի և Առաջնորդի Հայոց
Վրաստանի և այլոց:

ԹԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ"

'Ի Տպարանի Ներսիսեան Դպրոցին:

1830 ՏՓԽԻՍ ՌՄՀԹ

171

Քաղցրութիւն զխրատ և ըզ-
գիտութիւն ուսո՛ ինձ ։

Սաղմոս. ճժը. 66.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբազան Եղբարք մարթացան ընտ-բնոր ինչ թողուլ յառաքինութէ զնէ հայրենեաց և ազգի իւրեանց ՚ի դէպս գիտութեան և հրահանգութեան ազգաօգուտ իրաց . այլ եւ նուաստս՝ զի չունիմ զգրականական գիտութիւ-այնքան՝ զի արարից ինչէն զնորագոյն մատեանս գիտութեան ; վասն որոյ յետնամասն եղեալ ժողովելոյ զգրաւոր Եւրոպայական խրատուց և դաւանութեանց հնոց Փիլիսոփայից և Աստուա-ծաբանից . զորս ընթերցայ և ընտրանօք քաղելոյ զպիտանի օգտակարս Եւրոպացւոց մարդկան . որպէս զի կարօղ լիցի ամենայն ոք մատչել ուղղավարել զկանոնս մարդկային բնութեան իւրոյ : Քանզի արդարև ոչ թէ վասն գիտնականաց անձանց իմաստ-նոց է արարեալս այս աշխատութիւն ժո-ղովելոյ զբանս գիտութե , որոց թէ կամք իցեն առ ՚ի երկրորդել՝ չմեղանչեն եթէ ունիցին զնոյն . այլ և ընծայեմ զայս յընթերցասէր նոր-ուսասէր մանկանց և այլոց Եղբարց թերավարժ հայրենակցաց իմոց , և աղաչեմ զի յանարժանս համարել . կամ ՚ի տառ և ՚ի պայքար անուանէ մտանել պարսաւելով զերկս իմ . որոյ վասն և խնդրեմ ՚ի նոցանէ ներողութիւն անվարժու-թեանս յատմն .

Իսկ յայսմանէ ձեռնարկեալ է իմ կազմել Գիրս հարուր պատմութեանս և ըստ նմին շար-

իւր-

Եարհացոյցս մասին ընդ Հայաստանի և Ասա-
պարականի և այլոց անծանօթ գաւառաց
Աշխարհաց. նաև զամենայն ճանապարհորդու-
թեան և շրջագայութեան իմ ընդ քաղաքս՝
և ընդ Բնակիչս այնոցիկ. և ծանօթութիւն ընդ
վարուց և բարուց նոցա. որք և փութամ ի լոյս
ածել յօգուտ իմասնաւորէր հայրենակցաց իմոց,
ևեթ յանձնեցայց Տէր.

Բան Վաղարշապատու առ Սէրծանող.

Ի խնդիր ելի մտօք կաթոգին,
շրջել ը͞ ~ ՚ի հրճուանս անձին.
բնութին ուսոյց ինձ ճանապարհ դիւրին,
փութալ տեսանել զհաճոյս իմ սրտին.
Գրեմ ձեզ ահա եղբարցդ Հայկածին,
խնդրեմ քաղցրութ͞ լսել իմ բանին.
պատմեմ զդիպուածս մովոխ վլճիկին,
զերեմունս հոլովմանց մեծ կայծին բուղդին.
Որ ինձ նեղութ͞ փորձանք բազմադին,
՚ի հայրենիս իմ ընդ իս անցին.
զի՞նչ օգուտ էք ինձ սիրել զհայրենին,
յուսալէտս վաստնել զքանքար շնորհին.
Ուստի զգայի մտօք մարդկային,
Թէ չէք ձեր բնակել յայլազգեաց միջին.
Թողի զիմ զհայրենեաց բաժին,
՚ի սպառ թօթափել չարքայ զհետ բուղդին.
Ռամից գիտելեաց մեծուն երկրին,
անտեղեակ դրից, ծովու, ցամաքին.
զիմ գիծ տեսութ͞ առ կէտ հայրենին,
սահման դատէք ծագաց աշխարհին.
Գարնանային եկեր յառոյդ հասակին,
ոսկեքօղ զգուանք նինջ արշալուսին.
քաան ամենիւք երկու ընդ նմին,
ելի յիմ երկրէ պանդխտել ինքնին.
Եհաս ձայն առ իս ձայն բնաբանին,
ինձ բառականիս որ տեղս իմ նորին.

շրջ.

շրջիլ եւ ոլորտս իւր հողագընտին,
ընտրեալ ինձ տեղի բնակիլ 'ի նմին.
ՅԱսիայի մասն եւ Պարսկաստանին,
'ի Պարսից ծովէ Մարմարականին.
'ի Կասպից ծովէ ցմերձ Պոնտոսին,
բարս և վարս ազգացն առի 'ի գինին.
Բայց երգ երգոց նկարք իմ դրչին,
վերառեալ տանեն ՅԵւրոպացին.
համբաւ իմաստից որք հռչակեցին,
կրթուն անձանց և հանճարք նոցին.
Ոչ էր լայնածաւալ 'ի Ռուսաստանին,
'ի տալ Գերմանեայ եւ Գաղղիային.
Անգղեայ Հոլանդեայ եւ Պօլօնիային,
Շուէցիր Սպան եւ Աւստրիային.
Բախճան չէս կրթէր 'ի հայեցուածին,
իմաստ զգօնութիւն բնակչաց նոցին.
ուսմունք գիտուն և հրահանգին,
որք յառաջագոյն տխմար ոք էին.
Որով ըզգացի զաղէտ մեր ազգին,
Թէ քանի՛ աղքատ եմք յուսման մասին.
ըզմիմեանս ատեմք նախանձու չարին,
այլոց հարազատ ատող զմերային.
Դիւծեալ դառնութե աչօք լալագին,
իբրև զմայրենի եւ երկիր քարշին.
կորուսեալ զանուն մեծ Մաքանագին,
ողորմ և յիմար կեան թշուառագին.
Նմին պարգևատուն Ա.Ծ. տէր Հոգին,
տացէ նոյն շնորհս որպէս եւ նոցին.

բաշխ.

բաշխեալ զգիտութիւն մեր Հայոց ազգին,
առնել միմեանց սէր չ՚հ առ Հայրենին.
Նիւսեսցին մեզ փառք յաղթանակ կրկին,
Թէ ջանք և սէր մեր բոլորոքեալ վառին.
մեզ աղխեալ դրունք շնորհաց բացցին,
և չիջեալ սիրտք մեր ուսմամբ արծարծին.
Որում ցանկայ աչք մարդոյս իմներքին,
վասն Հայաստանի և որդւոց նոցին.
զոր թէ ո՛չ տեսցեն աչք իմ զցանկալին,
ոսկերքս զուարճասցին ՚ի գերեզմանին.
Յիշատակ կացցէ այս ապագային,
հոգւով իմ ցանկալս բարուն ազգին.
որք թէ ունիցին զմիտս բանականին,
փութով թևասցին շնորհօք երկնային.

## Սահման քաղաքավարութեան ամենայն հասարակէ. ընկերութեան ընդ միմեանս.

ԱՄԵՆԱՅՆ ՓԻԼԻՍՈՓ-այք և իմաստունք անձինք քաղաքավարութեան բանս սովորութեամբ առեալ են 'ի տեղի առաքինութեան, որ ուղղէ և վայելչացուցանէ զբանս և զգործս մարդկան ի արտաքին և քաղաքական կենաց, զի է մասն բարեխառնութեան, ըստ որում 'ի գործողութիւնս մարդկան դնէ զօրինաւոր չափ և զվայելուչ եղանակ. ուղղելն և վայելուչ գործելն են կրկին պաշտօնք քաղաքավարութեան, զի այս առաքինութիւն կարգէ նախ՝ յուղղել և 'ի սրբել զբանս և զգործս մարդկան յարտաքին թերութեանց և յանախորժ խորթութեանց. և միւս ևս՝ որ հետևակ է առաջնոյն, առ ուսուցանել և առաջնորդել մարդոյ յազնուական շնորհս բա-

նից

նից և գործոց. ունելով յամենայնի շահ և կանոն զվայելուչն, որում հնարէ նմանեցուցանել զվարմունս մարդկան ընդ միմեանս կենակցութեամբ.

Քաղաքական կանոնք կոչին ՚ի քաղաքավարութեան, որք ՚ի հասարակի հային առ ամենայն գործողութիւնս և վարմունս մարդկան միանգամայն, և համարին իբր ուղղիչ և կառավար համօրէն մարդկային կենակցութեանց. զի նոքօք և եթ հնար է զգօնամիտ մարդոյ տիրապէս ուղղել և վայելչացուցանել զամենայն գործս և զբանս իւր յամենայն ընթացս քաղաքավարութեան. այսպիսի կանոնք թէպէտ և մարթին լինել բազմապատիկ ըստ իւրաքանչիւր տեսակի մարդկային գործողութեանց, այլ որ գլխաւորքն են ՚ի նոսա և յաւէտ պիտանիք՝ զայնս միայն նշանակեսցուք աստանօր.

Առաջին կանոն քաղաքավարութեան զոր աւանդեն իմաստունք՝ է այն, զի պարտ է ամենայն ումեք արթուն մտօք ուշադիր լինել այնմ ամենայնի, զոր հանդերձեալ է խօսել կամ գործել. քանզի այր անխորհուրդ նման է անպարիսպ քաղաքի, յասել իմաստնոյն. Որպէս քաղաք կործանեալ ՚ի պարսպաց և

ան-

ընդարձակ էղէ, նոյն՝ դոյր, որ ոչ խորհրդոյն գործեղէ ‖ . Սիրաք . ԻԷ . 28.

Վասն զի 'ի մարդկային կենակցութիւնս բազմապիսի Թերութիւնք և տմարդութիւնք սովոր են յառաջ գալ յանմտածութենէ, յորոց առ 'ի զգուշանալ՝ պիտոյ է մարդոյ յամ՟ի զգաստ և հսկող լինել 'ի վերայ բանից և գործոց իւրոց, զի մի ինչ խօսեսցի կամ գործեսցէ անխորհուրդ և ըստ բերման բնութեան, այլ դիտելով և կշռելով արասցէ զամ՟.

Երկրորդ՝ պարտ է ամենայն մարդոյ քննել և տեսանել ոչ միայն զբան՝ զոր հանդերձեալ է ասել կամ առնել, զի իցէ բարի և վայելուչ. այլ և արժան է հայիլ յեղանակն առնելոյ. նախ՝ զի վայելչապէս և ըստ կարգի արասցէ. և երկրորդ՝ զի գործօղն 'յառնել իւրում այնպիսի օրինակաւ վարեսցի, որ իցէ յանկաւոր և պատշաճ իւրում վիճակի և հասակի, զի ո՛չ ամենայն գործողու՟ Թէպէտ և վայելչականք՝ ամենեցուն են 'ի դէպ, զո՛ր օրինակ չէ՛ արժան մեծամեծաց՝ ծերոց և չափահասից 'ի կենցաղավարելն ընդ հաւասարս կամ ընդ ստորինս՝ վարել զայնպիսի շարժմունս

յար-

յարգութեան , զոր անձն է տղայոց և կրտսերագունից առնել առ վերնագոյնս· որպէս համբուրել զձեռս , կամ մատուցանել զառաջին և զպատուաւոր տեղին և այլն· բայց եթէ հանդամանք վիճակի իշխանութեան կրտսերոյն զնոյն պահանջեսցէ· Նոյնպէս չէ օրէն մանկանց և ստորագունից 'ի վաղուլն ընդ հաւասարս կամ ը վերնագոյնս՝ զծերոց և զմեծամեծաց վարմունս գաղափարելով 'ի գործ ածել· Ըստ այսմ և գիւղականաց անվայելուչ է ը կարգի ազնուականաց շարժիլ և վարիլ՝ այլ պարտէ ամենեցուն մի դնել՝ զի վայելչական արասցեն զպաշաճաւոր վիճակի իւրեանց·

Երրորդ՝ պարտէ քաջ դիտել 'ի ժամանակն՝ ,, յառիթն և 'ի տեղին յորում գործէ ոք, խօսի և կենակցէ· զի թէպէտ և գործ ինչ կամ խօսք կամ շարժմունք իցեն մարդավարականք և վայելուչք, սակայն թէ լինիցին 'ի պարագայից ժամու և առթի, կամ յանյարմար տեղւոջ՝ համարին տմարդութիւնք, զոր օրինակ 'ի կամիլ ուրուք շնորհակալ լինել զուարճէ վասն երախտեաց նորա, եթէ գտցէ զնա 'ի սուգ կամ 'ի տկարութեան մարմնոյ, կամ զբաղեալ յան_

յաջողութեան ինչ գործոց, չէ՛ օրէն առ-
նել զայն յայնժամ. զի յայսպիսի առիթս
և 'ի ժամանակս՝ յաւէտ մխիթարութեան
և քաջալերութեան կարօտի բարեկամն՝
քան շնորհակալութեան.

Զորրորդ՝ պա՛րտ է միտ դնել սո-
վորութեանց Եւրոպիացւոց. որք վայե-
լուչ համարեալ է ամենայն կերպիւ քաղա-
քավարութեան նոցին, զի 'ի տեսանել
բարեկամաց զմիմեանս՝ բանալ գլուխ
և խոնարհիլ իւրերաց. միմեանց ձեռն ըն-
կալնուլ և սիրահար բարեկամութեամբ
շարժել զձեռս, և 'ի հրաժարելն խնդրել
'ի միմեանց չմոռանալ զբարեկամութիւն,
կամ արժանի լինիլ կրկին միմեանց տե-
սութեան, քանզի այս քաղաքավարութիւն
օտար գոլով 'ի սովորութեն Արևելեայց և
անգործածելի առ նոսա իբր տմարդութիւն
և ծաղրածութիւն համարի. ուստի պա՛րտ է
խոհական անձին քննել և իմանալ, և
ըստ տեղւոյն և քաղաքին և ազգին 'ի
գործ արկանել ըստ սովորութեանց նոցին.

Հինգերորդ՝ որովհետև հա՛րկ է
մարդկային ընկերութեան կենակցութիւն
ունել ընդ բազումս, որոց վիճակ՝ հասակ
և հանգամանք բնութեան անհնա՛ր է,
թէ լիցին միօրինակ. նմին իրի պա՛րտ է
մար-

մարդոյ յամենայնի 'ի վարմունս իւր
միտ դնել և հայիլ, թէ ընդ որս և ա-
ռաջի որոց կենցաղավարի. որպէս զի ըստ
այնմ յարմարեսցէ զանձն վայելուչ օ-
րինակաւ վարիլ ընդ նոսա. առ որ 'ի
նպաստ վարժութեան գիտել արժան է.
Նախ՝ զի զոր օրինակ պէսպէս են մար-
դիկ բնութեամբ, նոյնպէս և ս այլ և այլ են
բնական բերմունք և ախորժակք նց զոր
ունին առ զանազան իրս: Իբր զի՝ ոմանք
բնապէս ցանկան մեծութե՝ փառաց և իշ-
խանութեան, այլք՝ ընչից և ստացուածոց.
իսկ կէսք՝ կերակրոց, ըմպելեաց և զբօ-
սանաց, և այլք՝ այլոց իրաց, առ որս իցեն
հակամիտեալ 'ի բնէ. վասն որոյ և յամե
ձկտին խնդրել զայնս՝ զորս ախորժեն,
բայց քանզի անհնար է նոցա յամենայնս
իրս և յամենայն տեղիս զնոյն գտանել.
փափաք նոցա և ցանկութիւն յայնպիսին
ուղղի՝ զոր հնար է նոցա ընդունիլ յայ-
լոց. վասն որոյ տեսանեմք յաշխարհէ,
զի որ ընչասէրն է՝ կամ որ փափաքէ
ստացուածոց յայնպիսի տեղիս, ուր ոչ
գոյ յոյս օգտի, զոր օրինակ 'ի հասարակ
կենցաղականութեան, սէրն ընչից ձգտէ
երբեմն 'ի սէր պատուոյ և մեծարանաց.
վն որոյ և այնմ փափաքէ և զնոյն խնդ-
րէ.

րէն. մին իրի պարտ է ամենայն ումեք խոր-
համով գիտել, զի 'ի կենակցիլն ը̄ այլս.
յորժամ ոչ կարէ լինել զբուն ախոր-
ժակ նոցա, մի՛ արասցէ կա՛մ ասասցէ զայն-
պիսի ինչ, որով տացի առիթ քստմնելոյ.
Երկրորդ՝ գիտել արժան է, զի զոր օրի-
նակ բնութիւն տայ մարդոյ յօժարել առ
զանազան իրս, նոյնպէս առնէ և հասակն.
վասն որոյ և տեսանեմք՝ զի ծերք այլ
իրաց ցանկան, և մանկունք այլում իրի,
այլն նման գործէ և վիճակ մարդոյ, զի
այլ է բաղձանք մեծատանց, և այլ աղ-
քատաց. այլ՝ քաղաքացւոց, և այլ շինա-
կանաց. այլ՝ իմաստնոց, և այլ՝ տգիտաց,
և այլ՝ ստրկաց. այլ՝ եկեղեցականաց, և այլ՝
աշխարհականաց. այլ՝ հիւանդաց, և այլ՝
առողջաց. զնոյն է տեսանել և յայլ և այլ
արհեստաւորս իսկ. զի ըստ պէսպէս և
ըստ զանազան գործոց, յորս պարապին,
համահանգէտ այնմ՝ իղձս և յօժարու-
թիւնս կրեն 'ի սրտի, զոր գիտելով մար-
դոյ՝ պարտի 'ի կենակցութիւնս իւր խո-
հական ընտրութեամբ և մտադիր արթ-
նութեամբ գիտել և կշռել զիւրաքան-
չիւրոցն բնութիւն՝ զվիճակ և զայլ հան-
գամանս, զի կարասցէ վայելուչ կարգօք
վարել ընդ ամենեսեան. ապա յայն առ 'ի

իրաց

Քրատ ընդհանրական պայծառ է զգուշանալ յասելոյ կամ 'ի գործելոյ առաջի այլոց զայնպիսի ինչ՝ որ իցէ նողկալի կամ անհաճոյ. և զգուշութիւն բերէ զգայութեց, կամ այլ յիշատակել զանախորժս, կամ ընդդէմ ելանէ սիրոյ և պատուոյ այլոց, ես և որ կարգի 'ի վնաս ընկերին.

Վեցերորդ՝ պայծառ է միտ դնել՝ քաղաքավարական շարժմանց և խոնարհական արարողութեանց, զոր Իտալիացիք կոչեն ( Չէրէմօնի ) որով ընծայի ումեք պատիւ և յարգութիւն. սակայն գիտել արժան է՝ զի կրկնակի լինի այն, առաջինն է՝ որ լինի 'ի պարտուց, որպիսի է պատիւն և մեծարանքն՝ զոր պարտի առնել փոքրն առ մեծն. որպէս ծառայք առ տեարս. որդիք առ ծնողս. և հպատակք կամ ժողովուրդք առ իշխանն և առ առաջնորդ իւրեանց, և վասն սորին նոքա առնել 'ի բնական իրաւանց, զորովք եթէ զանց արասցեն անիրաւեն առ նոսա. քանզի 'ի նուաստագունից առ մեծամեծս՝ ոչ այնչափ քաղաքավարութիւն պահանջի, որչափ խոնարհ հպատակութիւն. իսկ երկրորդն է՝ որ լինի 'ի սիրոյ և վասն մարդավարութեան զոր 'ի կիր առնուն մարդիկ 'ի կենցաղավարութեան. և 'ի

սոյն և պարտաւորին, ոչ 'ի Հարկէ՝ զի է կամաւորական ինչ, այլ վասն վայելչութեան որովհետև է վայելուչ սովորութիւն ինչ գործածութ՟ մտեալ 'ի մարդիկ, զոր և չառնելն համարի տմարդութիւն մեծ. սակայն պարտ է խնամով դիտել և զգուշանալ, զի մի՛ յայսպիսի քաղաքավարական շարժմունս և յարդութիւնս՝ զոր առնէ ոք, անցցէ ը՟ չափ. այլ արասցէ զպատշաճականն ևեթ, զոր վարեն առաւելագոյնքն և խելահասքն 'ի մարդկանէ, քանզի այսպիսի վարմունք թէ ըստ չափ անցանիցեն՝ համարին մարդելուզութ՟ի, ծաղրածութ՟ի և թեթևամտութիւն՝ քան զորս չէք տգեղ ինչ և անարժան 'ի մարդ աղնուատոհմ. սակայն և այս հաւատալի է, զի որովհետև 'ի մէջ մարդկան ախորժական են այսպիսի վարմունք և ներելի է թէ առ փոքր մի աւելազանց լիցին՝ քան թէ նուազ. քան զչափն. բայց յայնմանէ ևս պարտ է զգոյշ կալ, զի մի՛ ըստ անխոհեմ դերձակաց 'ի 'ի կամիլն ձևել զգաճկոն սիրոյ և քաղաքավարութեան առ կարի իմն լայնուն և երկայնութեան՝ ելցէ վերարկու տըմարդութեան, զի ամ՟ի օրէն է ունել զիւր կոպար և սահման պատշաճաւոր. Իրդ՝

պա՛րտ է մարդոյ ՚ի քաղաքավարին շարժ-
մունս զգուշանալ նախ՝ ՚ի լկտի՝ յաճախ
և յանարժան բեկբեկմանէ մարմնոյ, գլխոյ
ձեռաց և ամ̃ անդամոց. կամ է հակա-
ռակ այսմ՝ ՚ի լոյծ ՚ի դանդաղ շարժ-
մանէ. այլ պարտի ջանալ՝ զի ամ̃ շարժ-
ուածք իւր լիցի հանդարտ, համեստ
և վայելուչ, որ տեսողաց իցէ ախորժելի.
Երկրորդ՝ ՚ի բանս յարգութեան և պատ-
ուոյ պա՛րտ է զգուշանալ ՚ի կարի նե-
թևեթ՝ չափազանց և յաւելորդ խօսից,
կմ̃ ՚ի գծծութեամբ նուաստացուցանելոյ
զանձն, որ զզուելի է իմաստնոց, մանաւանդ
վեհաբարոյ անձանց.

Եօթներորդ՝ առ ՚ի կանոնաւորել
մարդոյ զկեանս իւր ըստ վայելուչ կարգի
քաղաքավարութեան, և ախորժելի ըն-
ծայել զայն յաչս այլոց, պա՛րտ է յաւէտ
զայն լինել ուշադիր, զի ՚ի կենցաղավա-
րութիւնս մի՛ լիցի զհետ խնդրելոյ զհա-
ճոյս անձին, կամ վարելոյ ըստ կամաց
և յօժարութեան բնութեան իւրոյ. այլ
մանաւանդ միտ դիցէ հաճել զկենակիցս
իւր, խորհելով յա̃մի՝ զինչ իրք վայելչա-
կանք իցեն՝ է որ ախորժեն առաւելագոյնքն
՚ի մարդկանէ. և զինչ՝ որ ընոսին խրտնե-
ղուցանէ, զի այնու դիւրաւ մարթասցէ

՚ի միտ

'ի միտ առնուլ, թէ յորոց ի բաց պարտ է իցէ խորշել, և զորս առնել արժան իցէ. այս արթնութիւն և աչալրջութիւն՝ որով ուղղեն ամենայն գործք մեր. (յաւել Կիկերոնի) ոչ գոյզն ձիրք է բնութեան և բանի, զի 'ի կենդանիս՝ միայն մարդն իմանայ, թէ զինչ իցէ կարգն. զինչ իցէ վայելուչ. և զինչ եղանակ գործոց և բանից. . . զայս համեմատութիւն, բնութի և բանն 'ի տեսութենէ աչաց 'ի տեսութի հոգւոյն փոխադրեալ՝ ևս քան զևս արժանավայել համարի պահել, զգեղեցկութիւն, զբարեյարմարութիւն և զկարգաւորութի 'ի խորհուրդս և 'ի գործս. և զգուշանայ՝ զի մի ինչ անվայելս գործեսցէ ։

Խրատական և բարոյական բանք՝ հանեալք յիմաստասիրական գրոց և 'ի պատմութեանց հնոց առ ուղղութիւն վարուց և բարուց մարդկան։

---

### ա. Հրաժարումն 'ի շքեղանաց աշխարհի։

Զսխալէ Արիստոտէլ՝ յասել իւրում, թէ մենացեալն կամ ած ոմն է, և կամ անբան ոք. այսինքն կամ բոլորովին է անիմաստ, որ յամէ երկնչի. կամ բոլորովին մեծամիտ, որ զամենայն արհամարհէ։ Նա և ոչ խռովեն զառանձնութիւն նր սիրելի բարեկամք՝ զի նոյն են ընդ նմա։

### բ. Թէ պարտ է երիտասարդաց լինել ունկնդրա-ծոց հետևողաց։

Սոկրատէս փիլիսոփայ սկիզբն արարեալ իւրոց գիտնաւոր խօսից ընդ միումն յիւրոց համբակաց, եհաս նմա յանկարծակի գուժկան, թէ Սոփրոնիսկոս որդի քո մեռաւ։ Յայտ է ամենայն մտաւորի թէ բարբառ նորա և գոյն և արիւն փախեան 'ի սրտէ. և կսկծագին ցաւք

ցուք թէ ոչ զկենաց՝ գէթ զխօսից նո՛ր կտրեցին զթել: Բայց և այնմ Սոկրատ անխռով զսկսեալ խօսսն տարաւ 'ի գլուխ, և ապա ասէ. Ո՛վ Երեւելիցուժ տալ Սոփրոնիսկոսի հայրենասիրութեան պարտիս: Եւ այս է արժան իմանալ. թէ իմաստութիւն միայն է ազատ. և այլք ամենեքին ծառայք:

Գ. Մեծութիւն և ազնուութիւն սրտից մարդկան.

Փոքրիկ անդամ է նաւի՝ ղեկին. բայց ամենայն փոքրիկ շարժումն ղեկի շարժէ զմեծ զայն մեքենայ լայնատարր շրջանաւ յաջ և յահեակ: Եւ ամենայն փոքրիկ շարժումն սրտի որ կայ 'ի մէջն՝ պատճառէ 'ի շրջանակ մրդկային մարմնոյ՝ շարժմունս մեծամեծս, որում՝ նըման ծովու Ովկիանոսի տուաւ 'ի բնութէ սեպհական ինչ և կարգաւորեալ հոսումն, որ կոչի տեղատուութիւն և մակընթացութիւն, զի կալցի յերերի, ո՛չ տղայ յօրորի. յիւրում շարժման 'ի քուն լիցի. բայց թէ 'ի ցըրտասարսուռ հողմոց հիւսիսոյ, և 'ի տապախառն հողմոց հարաւոյ յուզի, ոչ ևս կարացեալ զուսպ կալ, է՛ զի գայ՝ և է՛ զի գնայ. է՛ զի յամպս վերանայ, և է՝ զի յանդունդս իջանէ: Նոյն տե-

սու-

տութիւն և սրտի մշտնջենաւոր լինի և բնաւոր շարժումն պատշաճող խառնուածոյ անհատին, լայնեալ և կծկեալ բազմօրինակ չափու, 'ի տուրևառութե շնչոյ և 'ի ծաւալել զկենսականն ջղիս ընդ ամենայն մարմին:
Բայց թէ յուզի նա 'ի հողմոց կրից՝ յայնժամ օտարոտի լայնմամբ կամ կծկմամբ այլայլի զհամեմատուն բնաւոր շարժմանն՝ այլայլէ զգայարանս. և այնչափ են փոփոխութիւնք սրտի, որչափ և կրից: Տեսարան լինէր զուարճալի, եթէ ընդ ապակի ինչ 'ի կրծոց անտի հնար լինէր երևել շարժմանց սրտին՝ իբրև ժամացուցացն: Եթէ բմբռնողականն առաջի առնէ զառարկայ ինչ սիրելի, սիրտն գլխովին խանդակաթ՝ յառաջ մատչի, և ընդարձակի գիրկս արկանել նմա. և թէ զառարկայ ինչ ատելի, սիրտն գլխովին զզուանօք կծկի և որպէս թէ փախչի: 'Ի կարի իմն ուրախութեան, կայթէ սիրտն և ոստոստէ, և 'ի վիշտս ամփոփի և լքեալ երևի: 'Ի բարկութե՝ սիրտն եռայ, և արիւն 'ի դուրս տայ. և յերկիւղի սառի և բաբախէ և դողայ. և առհասարակ են արտաքին գործք ներքին շարժմանց սրտի: Նաև նման

ովկիանոսի ընդ լայնատարր կ՟ն ծաւալէ արագ ընթանայ և շրջի յամենայն տեղիս. նաև տրտմի և զուարթանայ.

Դ. Աշխարհն և մարմին թշնամի են մարդկան.

Աշխարհս և մարմին ոչ յայլ ինչ պարապին՝ եթէ ոչ մարտնչին ը մեզ, զի բոլոր կեանք մեր տրտմութեամբ անցանէ.

Ե. Առաքինութեան Առաւելութիւն.

Առաքինութիւնն առնէ զօտարն ընտանի. և մոլութիւն զընտանին դարձուցանէ յօտարականութիւն.

Զ. Արժանաւոր տապանագիր Թագաւորի.

'Ի Կեփրոս կղզին 'ի լեառն Արկադեայ կայր դամբարան մի Թագաւորի միոյ յոյժ հռչակաւորի, դթածի, և ողորմածի. կայր շուրջանակի զգերեզմանաւն հելլենական լեզուաւ գրեալ այսպէս.

Ես վասն իմ միշտ ընկալայ ըզխորհուրդս զայս. զայն՝ զոր կարէի առնել բարութեամբ, ոչ երբէք արարի չա_

րու_

բութեամբ, զայն առ որ կարէի հասա-
նել խաղաղութեամբ, ո՛չ երբէք 'ի կիր արկի
պատերազմութեամբ. զնա՝ զոր կարէի յաղ-
թել աղաչանօք, ո՛չ երբէք զարհուրե-
ցուցի սպառնալեօք. զնա՝ զոր կարօղ էի
խրատել ընդ ազդեցութեամբ, ո՛չ երբէք
պատժեցի գանիւք և ձաղանօք. զնա՝ զոր
կարէի շահիլ 'ի գաղտնի առանձնա-
բար՝ ո՛չ երբէք պատժեցի հրապարակաւ.
նմ̃՝ զորս պատժեցի հրապարակաւ՝ նախ
ազդ էի արարեալ 'ի գաղտնի. և վերջա-
պէս ո՛չ երբէք պատժեցի զոք՝ որում
յառաջագոյն ո՛չ էի ներեալ և թողեալ
զյանցանս չորից անգամ: Այս ցուցիմ
այժմ վասն նմ̃ զորս պատժեցի. և ունիմ
զմեծ ուրախութիւն վասն նոցա՝ որոց
ներեցի, քանզի ծնայ որպէս մարդ՝ ըզ-
մարմին իմ աստ ուտեն որդունքն, և մ̃
զի կեցի որպէս առաքինի՝ հանգչի հո-
գի իմ ընդ դիսն:

Է. Թէ դժուարին է կրթել զուսեալ յոյժն:

Տիմոթէոս ուսուցիչ քնարերգութեան
կրկին վարձս խնդրէր յաշակերտաց ան-
տի՝ որք կանխաւ աշակերտեալ էին ան-
դէտ քնարահարի, զի դիւրագոյն է ու-

սու-

սուցանել զչուսեալ բարին, քան մո-
ռացուցանել զուսեալ յոռին։

### Է. Վասն զբաղման խորհրդոց։

Ամուլ են խրատք՝ որք գտանեն զմիտս 'ի վատթար սննդենէ խոտորեա-ցեալ չար սովորութեամբք. զի կրկին աշ-խատութեան պէտք են՝ խլելոյ զչար ար-մատս և սերմանելոյ զբարեբեր սերմանս։

### Թ. Չարաճարոյք յաջողեալ ոչ կարեն ճարել գործել։

Դեռածին մոլութիւն գլխովին ընդ ձեռամբ է ծնողին. բայց իբրև ա-ճէ ըմբոստանայ առ ծնօղն և ծերացեալ ընդ մարդոյ՝ այնչափ զօրանայ, որչափ մարդ տկարանայ։

### Ժ. Բանսարկու և չար անձինք ապականեն զանձինս։

Դիւրին է միոյ մոլելոյ ախտաւո-րել զբազում բարեկեցիկս. քան բազում բարեկեցկաց շրջել 'ի բարի զմի ոք մոլի։

Խո-

ԺԶ. Խոնարհութիւնն բարձր է քան զհպարտութիւն:

Տեսանեմք զիմաստունս պատռա-տուն ձորձով մուրանալ առ դրունս խոհեմաց:

ԺԷ. Պահպանել դժուար է ստանալ քան զամենայն ինչ:

Որ տայ զինչս՝ պահէ առ իւր զպատիւ. որ մերկանայ զպատիւ՝ պահէ զազատութիւն. որ կորուսանէ զազատութիւն, պահէ զկեանս. բայց որ տայ զկեանս, տայ զամենայն, բաց յառաքինութենէ՝ զոր ընդ իւր տանի. և բաց 'ի համբաւոյ՝ զոր թողու յերկրի:

ԺԸ. Պատուեցէք և գրեցէք ոչ Երջանկան Ժառանգել բարի համբաւոյ:

Ճշմարիտ է՝ թէ վաղ մեռանի համբաւ, եթէ ոչ հաստէ զնա 'ի կեանս շունչ գովելեաց, և սակաւ թուի՝ թէ չունի թևս գրչաց անուանի մատենագրաց:

Պոպէ

ԺԴ. Պարծանք առաքինի նախնեաց երախտիք է յետնոց.

Ոչինչ բամբիռն թօթափէ զքուն քնեալ որդւոյ, որպէս նուագ ներբողից քաջաց նախնեաց.

ԺԵ. Առաքինին գնալով գնայ և զօրանայ:

Յորժամ Աղեքսանդր զէն առնոյր զանձամբ՝ դողայր գլխովին, այլ յետ զգենլոյ դողացուցանէր զամենեսին.

---

ԺԶ. Ի ձայն եղջեր փողոյ շունք որսականք հաչեն. այլ շունք՝ որ առանձին կաղկանձեն. նոյնպէս ի հնչել մարտադրգիռ փողոյ, արին խայտայ, և վատասիրտն սասանի. նորա դէմք՝ զուարթ և աշխոյժ, սորայս ոգեսպառ և կիսակենդան: Միումն թուի օր հարսանեաց, միւսումն՝ հանդէս յուղարկաւորութեան.

ԺԷ. Որ կորուսանէ զպատկառ, կորուսանէ և զյարգ անձին.

Բռնաց փիլիսոփայ ուսուցանէր քաջազանց՝ չերկնչել՛ի յարձակմանէ աւուրծուց, և երկնչել յամօթոյ անարգ գործոց. զի որ կորուսանէ զամօթ, այլ ոչ ևս ունի պատիւ։

ԺԸ. Փորձ ճարտասանեան ճարտարոյ։

Փորձաքարն ցուցանէ զյարգ ոսկւոյ, և ոսկին ցուցանէ զյարգ անձին։

ԺԹ. Նա է ճշմարիտ իմաստուն՝ որ չափաւորայ իւրովքն։

Զափաւոր բերան անբերկիւղ գը-նացուցանէ զնաւս, իսկ անչափ բերան ընկղմեցուցանէ։ Այնպէս մարդ՝ որ ունի բոլորովին զչափ անձին, թէ յուտելն և թէ յըմպելն և թէ յառնելն զամենայն գործս իւր՝ հաստատուն լինի յամենայն գնացս իւր. իսկ քան զկարն առաւել ձկտելն ընկղմեցուցանէ զկեանս և զժամանակ իւր։

Մէ-

Ի̄. ՍԻՋԱԿ ՀԵՆՑԱՂԱՀԱՐՈՒԹ̄ ԸՍՏ ԿԱՐԳԱՑ.

Հարստութ̄ և ոսկի է̄ ստացողին փոխեն զբնութիւնն. 'ի ձեռս շռայլի է նախատ ինչ. 'ի ձեռս ագահի է անպի-տան ինչ, բայց 'ի ձեռս առատաձեռնի է գործ բարի և գլխովին կամաւոր. զի 'ի պարգևել իւրում՝ մեծապէս բերկրի. և թէ չէ ձեռնհաս՝ տխրի: Իբրև զի շռայլն միշտ յուսայ, թէ նմա ինչ ո՛չ պակա-սեսցի. և ագահն միշտ երկնչի թէ ամ̃ ինչ նմ̃ պակասեսցի. յայսմանէ՝ բուն հասակ առատաձեռնին լինելոյ է միջասահման, ո՛չ կարի շռայլ և ո՛չ կարի ժլատ՝ այլ թէ չափաւոր. իսկ մեծագործութիւնն է յատուկ անուն յաւիտենական.

Առաւել առատաձեռն լինի ան-զաւակն, քան զայն՝ որ ունի զզաւակ. Զի թէպէտ առատաձեռն հայր է հայ-րենեաց և բարի առնէ քաղաքացւոց՝ ոմ̃ իւրոց որդւոց, բայց և այնպէս իղձն ա-ռաքինական ո՛չ բառնայ զկարգ բնական։ Ան որոյ բառնալ յիւրոց և պարգևել օտարաց՝ ո՛չ է առատաձեռնութիւն, այլ անիրաւութիւն . և չտալ օտարաց 'ի պարգևել իւրոց՝ ոչ է գործ առատաձեռ-նութ̄,

նուն, այլ՝ պարտք արդարութեան ։ Ի վախճանի առատաձեռնն ասէ՝ լաւ է ճոխացուցանել քան ճոխանալ ։ Ժլատն ասէ՝ լաւ է վայելել քան այլում պարգևել ։ Այլ արժանի գովութե է կշիռն չափաւորութեան՝ որով բարուոք կենցաղավարին կեանք մարդկան ։

Շռայլն մեռանի ի բարեկամօք և թափուր ՚ի դրամոց ․ ագահն մեռանի ի դրամօք և թափուր ՚ի բարեկամաց ։ Վասն վաճառականաց նաւարկէ թռուցիկ առագաստիւ բախտի ։ Վասն մեծամեծ կալուածոց կախեալ կայ զամպոց ։ Վասն մեծամեծ իշխանաց է հանք ամկւոյ, երբ չէ ոչ պակասին նոցա հարկք, թէ ոչ պակասին ժողովուրդք ։

Թէ արևն չէր լուսատու, չէր արև ։ և թէ իշխանն ոչ օգնէ, չէ իշխան ։ Թէ արևն անցուցանէր օր մի՝ անլոյս, այն օր ոչ լինէր տիւ, այլ մթին գիշեր, և թէ իշխանն անցուցանէ օր մի, յորում չօգնէ այլոց, այն օր կորուսեալ է վասն նորա, որպէս ասէր Տիտոս որդի Վեսպիանոսի յայնմ աւուր յորում բարի ինչ չէր արարեալ ․ Սիրելիք, զօրս զայս կորուսի, զի

ոչ

ծէ գործեցի ինչ՝ որպէս իշխան։

Իւրաքանչիւր ոք սիրէ զիւր մտացն ծնունդ. և այժմ մեծ համարի և անշքուէ վատնել զիւր ինչս առ 'ի կատար համ-բուցանել զայլոց խորհուրդս ըստ տխմար հաւու՝ որ 'ի թուխս նստի 'ի վերայ ձուոց, որ ոչ իւր իցեն։

Պօղոս Եմիլիոս ասէ, նոյն արուեստ է քաջ կարգել զպատերազմ, և քաջ յար-դարել զսեղան, զայն յահարկութիւն թշնամեաց, և զայս 'ի ձգել զսէր քա-ղաքացեաց։

ԽԱ. ՅԱՂԱԳՍ ՀԱՆՃԱՐՈՒԹԵԱՆ ՀՈՐԵԱՆ ՈՐՔ ԵՐԵՒԵԼԻՔ։

Միդաս արքայ Փռիւգացւոց որ շինեաց զԱնկիւրիայ քաղաքն Գաղա-տացւոց, ասեն թէ՝ էր արծաթասէր յոյժ և ոսկեմոլ։ Արդ ըղձացաւ սա, թէ յոր ինչ և մերձեսցի՝ ոսկի լինիցի, և կատարեցաւ խնդիր սորա, և յոր ինչ մերձենայր ձեռամբ կամ բերանով՝ ոսկի լինէր. և այնպէս ամենայն ինչ նմա ոսկի էր, այլ ուտել ոչ կարելով՝ մահուամբ կորուսեալ լի-նէր. զի տուեալ նմա կերակուր՝ 'ի ձեռն

քե

բերանոյն ոսկիացեալ լինէր. վասն որոյ ապականեցաւ սովով։

Ամենայն ոք սիրէ զիւր ինչս և առաւել սիրել զայն հարկաւոր է, որ պահպանիչն է կենաց մերոց։

ԻԵ. Թէ որչափ է ուղղադատ լինել 'ի քննաչյուլեան։

Տեսեալ զապակի 'ի մասին ազնուականի՝ համարի թէ իցէ անդամանդ (թր. էլմաստ.) և զանդամանդն 'ի մասին գռեհկի՝ կարծէ լինել ապակի. Ըստ այսմ առ բռնմն՝ մոլութի վեհանձանց պատուի ոմ առաքինութի, և առաքինութի ցածուց քամահի՝ որպէս մոլութիւն։ Այս այն է ճշմարտութի՝ որոշել ընդ մէջ նոցին, տալ արժանւոյն զպատիւ, և զվարկ արժանաւորութեան նր։

ԻԶ. Աստուածութիւն ընդ համբերատարեցուցանել նորաց։

Արի իմն դիւրին է առն մտաւորի՝ գիտել 'ի ձեռն բերել զմարդանմիտ՝ ընտրել կին գեղեցիկ, ազնուական, և հարուստ. բայց և պարկեշտ, իմաստուն

Է և

և հանդարտ. Այն է միայն դժուարին,
Թէ ո՞ւր գտանիցի։

ԺԴ. Վասն հասարակաց հարկին.

Ուր է հպատակ, անդ է և հարկ. և ամենայն հարկ՝ ընաւորապէս ցաւ բերէ հարկատուի. որպէս եթէ հատցի մի կենդանի 'ի մարդկային մարմնոյ. Բայց որպէս հիւանդն յանձն առնու զհուր ցաւ; յորժամ ճանաչէ այն՝ որ հատանի, պահպանէ զմարմինն. սոյնպէս հարկն ընդունական լինի կամաւոր. յորժամ տեսանեն զայն կարգեալ առ հասարակաց օգուտ, 'ի խաղաղութեան կամ 'ի պատերազմի։ Այլ և քաղցր եղանակ պահանջողութեան առնէ զհարկն քաղցրելի. Պերիկլէս յորժամ կամէր նոր ինչ հարկս հանել յաթենացւոց՝ յառաջագոյն ուրախ առնէր զնոսա հասարակաց խրախութեամբք և մեծահանդէս տօնախմբութեամբք, և թատերական հանդիսիւք, և յորժամ ջեռանէին յուրախութեան, ապա առաջի առնէր զտխուր խնդիրն, ըստ օրինի ճարտար երակահատի՝ որ մեղկ շօշափ շփէ զբազուկն, մխէ զնշտրակն յերակն և առնու արիւն անցաւ. սոյնպէս ամենայն

ոք պարտ է կակղութեամբ դատանել զելս դժուարին իրաց։

### ԻԶ. Սահման հաշտեցողութեան։

Մարդիալէս լատին բանաստեղծն ասէ. թէ դիւրին է ինձ առնուլ 'ի բերան կայծ ինչ վառ, քան զոյգ ինչ հարախօս ապականիչ այլոց և զուարճախօսու- թեանց։

### ԻԷ. Սահման զգաստ հանգստութեան տա- նուտեառն։

Սոկրատէս ասէ. տանուտէրն մտցէ յանկողինն յետ ամենեցուն, և յարիցէ յանկողնոյ յառաջ քան զամենեսին. զի 'ի քուն լինել նորա՝ ծառայք դարան գործեն։ Մի կալցի առ իւր ծառայս ամուսնացեալս, զի ամենայն կենդանւոյ՝ որոյ է ծնունդ, բնութիւնն ուսուցանէ լինել գող։ Մի թողցի դեգերել 'ի տան զկարօտեալս թէպէտ և հաւատարիմ թուիցին և բարեպաշտ. 'Ի հարաչար ազ- գէ է գողոց, զոր հարկն ստիպէ գողանալ։ Լաւ ևս են վարձուոր ծառայք քան զարծաթագին գերիս, զի նոքա ծառայեն

'է

՚ի լրումն գիտոյից՝ և ոչ բանութեամբ, վասն որոյ սիրեն զտեարս՝ ում զբարերարս. սոքա ծառայեն բռնի, վասն որոյ են ներքին թշնամիք, զի որ ատեայ զծառայութիւն, ատեայ զտէր.

ԻԷ. Որ տանուտէրն է ագահ, ծառայն լինի գող. վասն զի տեսեալ սորա՝ թէ ագահն ոչ վարէ ՚ի սկէտս՝ զոր ունի յաճախութեամբ, լինու նմա զեւրն պակասորդ. և գթութիւն համարէ հանել ՚ի բանտէ զբանտարկեալ ճոխութիւնն.

ԻԸ. Թէ բոպէական է կեանք ծառայից

Երկրութիւնն այնմ ընկալնու զգիտս այնորիկ՝ որ ՚ի վայելս իցէ, մինչ զի ոչինչ ուշ եդեալ նորա յաջորդական տևողութեան ժամանակի միակցէ զառաջին վայրկեանն ընդ յետնոյն որպէս որ ՚ի քուն իցէ, վասն այնորիկ երկարաւոր ինչ ժամ թուի նմա բոպէ. և զսորին հակառակն՝ որ ՚ի ցաւս է և ՚ի վիշտս. ոչ այլ ինչ բաժանելով որպէս հասանելոյ ՚ի վերջ՝ չափէ զամենայն բոպէս, և

և ամենայն րոպէ թուէր նմա դար.

### ԽԹ. Վասն բարւոք սնուցանելոյ զզաւակունս.

Մարկոս աւրելիոս Կայսրն Հռովմայ 'ի կիր արկանէր զգուշելի սովորութիւնս. իբր զի 'ի ծնանիլ զաւակաց իւրոց առաքէր 'ի մօտակայ գիւղ մի արտաքոյ Հռովմայ առ 'ի սնուցանել. և ոչ երբէք թոյլ տայր սնուցանել զուստերս և զդստերս իւր 'ի մէջ պարսպին Հռովմայ, և ոչ կամեցաւ թէ ջամբեսցեն զկաթն 'ի ստեանց կանանց փափկասնից և սիրէր զաշխատասէր դայեակսն և առողջս՝ որք թէպէտ էին գռեհիկ, սոցա միայն յանձնէր 'ի սնուցանել զզաւակս իւր. զկնի տալոյ զնոսա դայեկաց, ոչ կամէր՝ զի դարձցին 'ի տուն. և առաւել աշխատ առնէր զվարձս հատուցանել դայեկաց, քան թէ հարսնացուցանել զդստերս իւր.

### Ծ. Վասն բարեկամութեան.

Այն է բարեկամութիւն ընտանի, միշտ հոգ տանել անկեղծ սիրով շաղկապ.

կապմամբ ընդ նմանմանս բարեկամ է բարեկամի, 'ի պիտոյսն ոչ խնայել միմեանց. որպէս աղաւնւոյն արկեալ 'ի գետն գշիւղ մի այրեցոյց զփոքրիկ մրջիմն 'ի հեղձմանէ. և մրջմանն խածեալ զոտս հաւորսին զերծոյց զբարեացապարտ աղաւնին յորսողէ, զոր լարեալ էր հաւորսին առ որսալոյ զաղաւնին.

Նա պարտ է փոխարինել հաւատար երախտիս ընդ երախտեաց, շնորհակալութիւնս ևս. Զի թէ բարեկամն քո է առաքինի և գիտուն, զնոյն առնել ունի առ քեզ որպէս և դու. ապա թէ է յիմար և մոլի, չէ՛ ճշմարիտ բարեկամ, թօթափեա՛ 'ի քէն. և կորուստ սուտ բարեկամի է մեծ գիւտ բաղդի քո.

Օրէնք բարեկամութեան համարեցան փիլիսոփայք փոխանակ ձեռնադրի առեալ զերդումն, և փոխանակ վկայից զԱստուած. Քանզի դաշանց սրտից անմարթ է լինել այլ վկայ, բայց ակնն սրատես. 'Ի դառնալ ուրուք և ասել թէ բարեկամն իմ անհաւատարիմ և ապաշնորհ է. այդ գանգատ առաւել 'յամօթ առնէ զգանգատաւորն՝ քան զայն,

զումէ

զուսմն է դանդատն։ Եթէ չճանաչէիր զոր զնա, այլա անմիտ էիր. էր նա սուտ բարեկամ՝ չէր բարեկամ, ոչ կորոյս նա զհաւատարմութիւն՝ այլ զկեղծիս. որ ոչ ունի բարեկամս երկուս, նոյնքան ունի խէթ զմիմեանց, և դու նոցին երկոցունց բարեկամ. ոչ է կարելի բարեկամին չար կամիլ. հարկ է կամ բաժանիլ ի միոյն և սիրել զմիւսն, կամ բաժանիլ յերկոցունց. և կմ հաշտեցուցանել զնս ը միմեանս զի մնասցէ կցորդ երկոցունց, սատի սիրել զբարեկամն իբրև զանձն՝ այն է օրէնք. և ոչ կարես թերատ զմին սիրել և զմիւսն ատել. զի յայտնի է զմին խաբես, և ոչ թէ զնա խաբես, այլ զանձն քո, և անիրաւիս. և պարտ է քեզ պաշտպանել զբարեկամդ որպէս զանձն քո։

Նաև այն է բարեկամութիւն եթէ դայցէ 'ի վերայ վնաս ինչ՝ միմեանց պարտաւորութիւն է խափանել, քանզի երկոցուն ևս հնար է դիպել դժբախտութեան, առաւել պտրստկան պարտ է լինել և հնարել յամ անձնէ, այս է կատարեալ բարեկամութիւն և օրէնք Աստուածային.

Որչափ արժէ բարեկամն՝ որ չօգնէ, որչափ թշնամին՝ որ չվնասէ։

Աան

### ԼԹ. Վասն նախանձու.

Մարկոս Աւրելիոս կայսրն Հռովմայ ասէ. միշտ ընթերցայ զգրեանս և լուայ 'ի նախանձողաց իմոց, և տեսի 'ի քաղաքացիս իմ և 'ի դրացիս՝ զի առատութիւն և յաջողութիւն իմ պատճառէ զխստագոյն նախանձաւորութիւնս. Ո՞հ թէ որքան 'ի մէջ վտանգի լցեն եդեալք նոքա՝ որք կամին երևելի յատուկ պատուօք զինքեանս նշանակել 'ի մէջ այլոց: Որպէս և ծառք որքան բարձրանան առաւել ցուցանեն նոցա հողմունք ըզզօրութիւնս իւրեանց, և շինուածք բարձրաշէնք առաւել բազխեցեալ լինին 'ի կայծակէ. և 'ի լերինս յոյժ բարձրագոյն առաւել զօրանան խստութիւնք ցրտոյ. կամիմ ասել թէ 'ի նոսա՝ յորս առաւել յաճախէ բախտն յաջողութեամբ, այնքան առաւել հեղու նախանձն զմեծագոյն թոյնս իւր, և զինչ առնիցէ առն ողորմելին այն, քանզի զաշխատանս կրէ առ 'ի գոլ յաջողիկ և բարի լինել և այլքն չկամին:

### Խ. Վասն [illegible].

Կամիմ ասել, թէ այր որ թէ և իցէ

լցէ պատուականագոյն քան զքարն ադամանդ զետեղեալ 'ի մէջ ոսկւոյ. և տեսանէ զըղձալին իւր երկաթ ցանկանայ նմա առանց պատճառի, այսպէս մարդն հեշտացեալ փափկանայ, մինչ լինի ընտանացեալ ընդ կանանց.

Նոյն և մարմինս այս թուլաւորեալ թէպէտ պատժի ախտիւք հիւանդութեան և ցամաքի բազմօք աշխատանօք և տառապանօք, և մաշի ամօք բազմօք, սակայն միշտ մնայ 'ի նմին շանթն ցանկութեան՝ եւս 'ի մէջ ոսկերացն. զինչ պիտոյանայ մեզ պարծիլ զառաքինութեց և ուրանալ զբնութիւն մեր. Իրաւի ոչ գոյ երիվար ծեր այնքան երկչոտ և անդամնալոյծ՝ որ տեսանելով զմատակ ձի մի՝ ոչ տացէ զոյգ իմն հառաչանաց և խրխնջիցէ, ոչ գոյ ծեր այնքան ծերացեալ, և ոչ մանուկ այնքան առաքինի, որք տեսեալ զաղջկունս ոչ տացեն զոյգ մի հառաչանաց և ոչ վրդովիցին. Որս բնական և բնութենական խոստովանիմ, եթէ այր և կին՝ կամի լինել 'ի մէջ բարեկամութեան և փորել առաքինի և զգաստ.

Բազում անգամ կերակուրք ախորժք

խորշք և փափուկք տապականին 'ի մէջ վատթար ամանից և կճճից. և լաւ գինիք առնուն շհոտ ինչ 'ի վատթար ամանէ. Նոյնպէս զայս չար և զանկար մարմին 'ի կողմն իւրենց քարշելով տան միշտ զվատթարուն հոտոյ ինչ և նիւթոյ և զկենաց մերոց ապականումն.

### ԼԶ. Թէ պարտ է փութանակի կատարել զխոստումն.

Ընդ այս ոչ զարմանալ, զի զդոյզ ձեռն ոչ է պարտաւորեալ առնել զայն՝ զոր ասէ լեզուն հեղգագար. զի լեզուն բարբառի վաղվաղուն և փութանակի, և ձեռքն գործեն ամբապէս, նշան մարդավարութեան այն է, զոր խոստացար լեզուաւ, կատարել և փութանակի գործով.

### ԼԷ. Վասն օժանդակութեան ճարակաց.

Պղատոն ասէ 'ի քաղաքավարութեան իւրում՝ թէ յաջողակաց տացի խորհուրդ, զի մի անկցին. և ողորմելեացն տրտմեցելոց տացի ճարակ հնարից, զի մի յուսահատեսցին. իրաւի ոչ համ-

դուր-

գուրժեն օրէնք բարեկամութեան, զի մինչ ես խնդրիցեմ 'ի բարեկամէ իմմէ զօժանդակութիւն մի ինչ, իսկ նա նմանիցի երկարութեամբ ժամուց առ 'ի տալ ինձ զխորհուրդ. զի սիրտ վշտացել̃ թակաւ մխիթարի բանիւ քաղցրութ̃ և լով խօսակցութեամբ, եթէ ոչ երթիցեն ներ ծրարեալ է նմա գործք իմն բարիք.

ԼԲ. Թէ պա՛րտ է որպէս յառաջ՝ նոյնպէս և 'ի տուրս չինել հաստատութեան.

Յառնուլն մտօք և ուրախութիւնք, և 'ի տալն յամեցմամբ և տրտմութիւն. զի զընդունումն նուաղեցուցանեմք մոռանալով, և զորս ուրանան զմեզ՝ մեծացուցանեմք գանգատանօք: Միրտ ճանաչի 'ի գործոյ. որպէս առողջութիւն 'ի զարկէ բազկի.

ԼԳ. Պիտանիք կենցաղավարութեան մարդկան.

Երեք են պատկանելի մարդկային կենաց, եթէ գտանիցին 'ի միասին 'ի կատար՝ (օգտակարն, բերկրականն, և բարոյականն) յորս է հարստութիւն, առողջութիւն և առաքինութիւն, կեն-

ցա-

ցաղավարէն բարոյական առաքինութի՝ որ ընդ իւրն տանի, և բարի համբաւ՝ զոր թողու յետ։

### ԼԵ. Թէ Հարցնէք Չգիտեն Ուքէն Կենաց Խորենոց.

Սա է Մովսէսը մատենագիրն. ի հայրենիս մեր կեամք ուղղութեամբ և ոչ իմանամք, այլ իբրև երանեմք զնա՝ բանիւն առ մեր, և յայնժամ միանգամայն տեսանեմք՝ թէ որչափ է ուղղութիւն մեր. յաստուածականաց առ հասարակ համարեալ եմք արդարագոյն, այլ մերս կարկամութիւն և վերամական ծանրութի և ինքնահաճ եղանակ կենաց, որք ոչ ներեն մեզ խորհիլ կշռելզոր այլ ազինք աշխարհի ունին.

### ԼԶ. Մարդն նախանձոտ.

Ի ժամանակս ինչ՝ մի եղեն երկու յոյնք ամենայնիւ չափազանցեալ գործովք և հռչակեալք, բայց յոյժ հալածանին էր նախանձու՝ որ կոչիւր Մաքիւլէս. և միւսն յոյժ նշանակեալ էր ի չարութեան խայտառակ իւր գործովք. և ոչ ոք բնաւին ունէր նախանձ ընդ նմա՝

որ

որ կոչիւր Տրեստէս, իբրաւ լ̃, ասուն բարի՝ գոլ Աքիլլէս ը̃ նախանձու․ քան թէ Տրեստէս չար անուն՝ առաւել նախանձու։

Արդ գիտացուք թէ ամենայն մխասեն զմեզ նախանձու, սակայն յոյժ առաւել մխասեն զմեզ բարեկամք քան թէ թշնամիք․ քանզի ՚ի թշնամեաց կարեմք զգուշանալ, բայց բարեկամն բարեկամութեամբ իւրով խաբէ զիս, և ես մ̃ի հաւատարմութեան ոչ զգուշանամ ՚ի նմանէ, ՚ի մէջ մահաբեր թշնամեաց ոչ գոյ այնքան չարագոյն թշնամի, որքան բարեկամն այն որ նախանձի ընդ յաջողութիւն իմ․ եթէ դու հսկես առ ՚ի պահպանել զքեզ յօտար թշնամեաց, առաւել պարտիս տքնել վասն քոյոց ընտանի թշնամեաց։

## Թ․ Առն ծուլացելոյ։

Ծիծաղեցաւ դիոս ՚ի մ̃ի երկրագործին՝ որ ուխտս դնէր, զի սայլն իւր ելցէ ՚ի տղմոյ՝ յոր խրեալն էր․ և ինքն չարկանէր ձեռն ՚ի գործ։

## ԽԱ. Ամոքումն վշտացելոյ.

Օրէն այս է, զի սիրտ վիրաւորեալ առաւել հանդարտանայ պատմելով զչար դիպուածս իւր սեփհական, քան թէ լսելով զմխիթարութիւնս այլոց.

## ԽԲ. Թէ անհնարին է մարդոյ լինել միշտ բախտաւոր.

Որպէս ոչ է հնար երկնից միշտ պարզութեամբ, և ծովու միշտ կալ հանդարտ անդորրութեամբ, նոյնպէս և մարդոյ մինչ ցվախճան իւր միշտ բախտաւորութեամբ և յաջողութեամբ.

Եթէ տեսանես զոմանս անցուցանել զկեանս իւրեանց երկարապէս երջանկութեամբ թարց ունելոյ երբեք զհակառակութիւն բախտի՝ մի՛ նախանձիր ընդ նոսա, զի այն ոչ է վասն երջանկութեան ն̃ց այլ վասն մեծի թշուառութեան նոցա. քանզի բախտս է այնքան նենգաւոր, մինչ զի անդ սպասէ պատրաստել և լարել զդաւաճանութիւն իւր՝ ուր յետոյ գահավիժեալ տայ 'ի գետին մեծագոյն ւաւ

աւաղութեամբ. Նուաւել փութանակի մեռանելն, որք յոյժ առողջ են ընդ սակաւ հիւանդութեամբ աւուրց, քան թէ երբեմն երբեմն տկարութեամբ և հիւանդութեամբ բազում աւուրց և ամաց. քանզի մարդ որովհետև ոչ կարէ անցուցանել զկեանս իւր թարց թշուառութեան, բարւոք համարիմ ճաշակել զտառապանս սակաւ առ սակաւ. քան թէ կլանիցէ համանգամայն 'ի միասին զկորուստ. բազում իմիք ուտեն պատառ առ պատառ, զոր թէ կերիցէ ոք ամբողջ համանգամայն 'ի միասին, խեղդի իսկոյն։ Նմանապէս զանազան յաջողութեանց և աշխատանաց և բախտաւորութեանց ըմբերեմք. այն է լաւն խաւն ՟Է փոքր փոքր մխասու թշուառութեան երկայն աւուրք կենցաղավարել, և է գովելի՝ քան թէ զայն՝ որ միշտ իցէ 'ի յաջողութեան, որոյ վերջն լինի կորուստ և անկանգնելի թըշուառութեամբ.

Խբ. Սատն բախտի։

Մի պարծեսցի մեծն 'ի մեծութեան իւր. և մի պարծեսցի հզօրն 'ի զօրութեան իւր, այլ որ պարծի Աստուծով պարծեսցի և

և ծպտեալ կեցցէ 'ի դիպմանց և ապա-հովութեամբ բախտի. ոչ գիտես, զի սա է բարձրացեալ պարիսպս մարտնչի, զա-նապատն առնէ շէն մարդաբնակ. և զշէն-տեղիս, անմարդաբնակս առնէ և աւերս. 'ի թշնամեացն առնէ բարեկամս և ըզ-բարեկամ առնէ թշնամիս. զյաղթօղսն կողոպտէ և զյաղթեցեալսն յաղթանա-կաւ պսակէ. զդաւաճան նենգագործս առնէ հաւատարիմս՝ և զհաւատարիմս առնէ երկբայելիս և կասկածելիս. և վերջապէս սա ինքն է՝ որ վրդովէ զթա-գաւորութիւնս, պարտէ զզօրս պատե-րազմի, ցածուցանէ զթագաւորս և բարձ-րացուցանէ զբռնաւորս, տայ կեանս մե-ռելոց, և մահ՝ կենդանեաց, տայ զհամբաւ գերահռչակ՝ միոյն, և առնէ վատահամ-բաւ զմիւսն.

Թագաւորն Լակեդեմոնացւոց ու-նէր կախեալ զդրանէ պալատի իւրոյ որ ասէր. Այս է տուն աւանդապահից բախտի: Իրաւի են բանքս այս, և գերա-գոյն 'ի մակացութիւն. քանզի պարտ է ամենայն մարդոյ ունել զինքն իբրև աւան-դապահ, և ճանաչել զինքն պահապան ամենայն ընչից իւրոց, և թողլոց է զա̃մն

Տէս

Տիս և մերկ դնալոց է. և ոչ ժառանգող մշտապէս բախտի և ընչից իւրոց, միայն տանի ը՟ իւր լաւապէս աւանդապահուին, զի զբարեգործութիւն. քանզի առնելով զմեզ աւանդապահ և մեք ապստամբեն 'ի նմանէ առնեմք զմեզ իբր ժառանգ և տէր այսր ստացուածոյ՝ որ ոչ է մեր, Նա՝ որ կենդանի է, ժառանգէ զինչս մեռելոցն. և ոչ թէ մեռեալն ժառանգէ զինչս կենդանեացն. ուրեմն մեռանին ամենեքեան. ինչք և Տէր մնայ, և որ ծնանի՝ ժառանգէ. և որ մեռանի՝ թողու զամ, բաց յերկնից՝ բարի կամ չար նովաւ եղանէ, ը՟ իւր տանի, նոյնպէս թողու յետ բարի

կամ չար համբաւ.

### Խզ. Վասն բարեկեցութեան զաւակաց.

Ով հարք և մարք զաւակաց, եթէ կամիք դուք բառնալ 'ի ձէնջ զհոգս և զվտանգս 'ի զաւակաց ձերոց, 'ի մանկութէ կալարուք զնոսա միշտ 'ի կրթութեան և յամրափակութեան, զի միշտ ձեռքն զբաղին, 'ի գործ ինչ բարի կրթութեան զբաղելով. յայնժամ սիրտն եղիցի դատարկ 'ի յունայն մտածութեանց. իւրաքանչիւր յորում իմն գործեսցեն 'ի մանկու-

 թենէ

Թենէ՛ աւերէ, և քակէ զմիտ և զխարիսխ կենաց իւրեանց. զի ուր դո՛րկակեցուն է, անդ մոռանէ Թշնամին. որ բանայ զդրունս ամենայն մոլութեանց, քանզի ողորմելի զաւակունքն այնք՝ յանհոգուէն հարցն և փափկամտութեամբ մարցն՝ Թողուն զաւակուսն իւրեանց առանց աշխատնց. և զարդը աշխատանս առնեն անարդար զբօսանս, 'ի դատարկ անցուցանելոյ զժամանակս, 'ի յանպատեհ մտածմանէ և 'ի յընդարձակուէ աչաց, այսոքիւք այլազգունին խելքն, և ապականին կամքն, մտածեն փոխ նպատակք նոտից. ուր ուղղէ սիրահարութիւն, միայն լինին նշանաւորք լի հողով՝ հասարակօրէն վասն ամենից մոլութեանց.

Ո՛վ եԹէ մարմինս այս կատարելէ հպատակեցէ զինքն բանականութեան, բարւոք էր. բայց որովհետև բղձականութի մարմնոյ յայսմիկ դիպուածում աքացէ բանականութեան. և ոչ է պարտ հաւատալ զգաստերս ոչ բարեկամի, և ոչ ընտանեաց. տեսանես դու փորձառութի՝ զի որպէս 'ի վայրոս ծննանի ցեց, որ գոյանայ 'ի նոյն վայրոէ, և 'ի զգեստս ծընանի ուտիչ՝ որ ուտէ զնոյն զզգեստն,

 կա-

կամիմ ասել, թէ այր ոք որ 'ի տան իւրում մնուցանիցէ զոք, կարէ լինել՝ թէ յետոյ բառնայցէ զկեանս և զպատիւն։ Իբաւի՝ եթէ հարքն իցեն ճշմարիտ հարք, և մարքն իցեն ճշմարիտ մարք, մինչդեռ մանկունք իցեն, իսկոյն պարաւանդեսցեն կապեալ զսիրտս դստերաց իւրեանց մերկութեամբ և կուրութեամբ. և ոչ երբէք իցեն արձակեալք և բացեալ աչօք նկատել զբարի և զչար, միթէ մինչ հասանին պտուղքն այգւոյ, և ապա՞ դնեն զայգեպան և զհսկողս, ո՛չ՝ այլ թէ մինչ է հասեալ ժամանակն դստերն՝ դոլով աղջիկ. հարկաւորի ունել զայր ընպահապան, և հայրն՝ որ զայս առնէ, մերժէ 'ի տանէ իւրմէ զվտանգս, հանէ զինքն 'ի հոգացողութենէ և տայ զմխիթարութիւն և զհաճութիւն դստերն իւրոյ։

խը. Աշխենոյն երրդ փախձանսն է գողէն։

Յորժամ յաղթեաց Կիւրոս՝ Կրեսոսի, ըմբռնեալ զնա հրամայեաց յերկաթեղէն տապակի խորովել զնա։ Յիշեաց Կրեսոս զբան Սողոնի աթենացւոյ իւրոյ բարեկամի, յոգւոց եհան և գոչեաց 'ի ձայն ողորմագին, ո՜վ Սողոն, Սողոն։

Պատ-

Պատմեցին Կիւրոսի թէ Կրեսոս՝ զնոր ումն աստուած կոչէ իւր յօգնութիւն. Կիւրոսի գթացեալ ՚ի վր՛ հրամայեաց ածել առաջի իւր, հարցանել ցնա, զի՞նչ բարբառէիր. ասաց. յուշ եղեն ինձ բանք Սողոնի, որում հարցեալ իմ երբեմն՝ տեսեալ զոք յաւէտ երջանիկ քան զիս, ետ պատասխանի. Ոչ մարթ երանել զբարեբախտութիւն մարդոյ մինչև ցբ-վախճան. Վերջին օրն է մարդոյ գովելի թէ երջանիկ է՝ եթէ թշուառ. Ով զգործն՝ վախճանն, և զտիւն՝ երեկոյն առնէ գովելի.

Եւ իբրև սկսան զօրքն Կիւրոսի աւար հարկանել զքաղաքն, տեսեալ Կրեսոսի եցոյց զինքն զարմացեալ. ՚ի հարցանել Կիւրոսի զպատճառ զարմացմանն, ասէ Կրեսոս. զարմանամ. զի զօրքն քո յաւարի առնուն զքաղաքդ՝ որ չէ՛ Կրեսոսի՝ այլ Կիւրոսի.

Արգե՛լ զաւարդ, և դի՛ր պահապան քաղաքիդ, զի որք տեսանեն զվայելչու-դը տացեն պարծինս այնմ՝ որ էառ զդա. Իսկ եթէ զօրք քո յափշտակեսցեն զաւար քաղաքիդ՝ ո՛չ միայն քաղաքդ անշքասցի. այլև նոքին իսկ զօրք փարթամացեալ անլուր լիցին քեզ.

Այս

ԽԵ. Ս՝ան յաջողութեան նոր ճանապար-
դութեան.

Սեսոստր թագաւոր Եգիպտացւոց դէպ եղև ճոխանալ յամենայնի յաջողուածովք և բարձրանալ 'ի փառս և 'ի մեծութիւնս, տիրեաց բազում թագաւորութեանց, և նկուն արար զամենեսին. և գերի վարեալ զբազում թագաւորս՝ այնչափ եհաս բարձրամտութե, մինչև 'ի նստիլ իւրում 'ի կառս ոսկեղէնս, փոխանակ կառաձիոց ետ լծել զթագաւորս. և այնպէս ընթանայր շքով ընդ ճանապարհ. և եղև յաւուր միում, զի մին 'ի թագաւորաց անտի՝ որ լծեալ ընդ սայլս ձգէր զկառս, դարձուցեալ զդէմս իւր 'ի թիկունս կոյս՝ ուշադիր լինէր յանիւն՝ որ հոլովէր անդադար զկնի նր. զայն տեսեալ Սեսոստրի արքային որ նստեալն էր 'ի կառս՝ ասէ ցնա, զի՞ գործես այր դու, և ընդէ՞ր ոչ հայիս 'ի քեզ, թէ ո՛ իցես. Նա պատասխանի տուեալ ասէ. Մտախոհ լինիմ տէ՛ր իմ 'ի վր անուոյս. որ միշտ փոփոխի շրջանաւ, և ոչ մնայ երբէք 'ի միում տեղւոջ. հանապազ տարուբերէ վեր 'ի վայր, ստորին կողմն 'ի վեր ելանէ՝ և վերին կողմն ստոր իջանէ.

Զայս

Զայս ինքն լուաւ Սեսոստր՝ դարձաւ յանձն, և խորհեցաւ իմաստութեամբ. եթէ քանի՛ փոփոխական են անցաւոր ճոխութիւնք և յաջողուածք բախտից ըստ օրինակի անուոյ, և զմտաւ ածեալ թէ իցէ զի և ինքեան դիպեսցին ճախարակի ելք, եթող զնոսա.

ԽԴ. Աշխատասիրութիւն հարց՝ ընդ որդւոց.

Նաւ Յովհաննէս կաթուղիկոսն. աղերս առաջի մատուցանեմ ձեզ պի-տաւորութիւնս զայս բանի. Մի՛ պարծանս հարցն առաքինութեանց ձեզ բաւական վարկեալ՝ 'ի նոյն ապաստանեալ պղերգութեամբ անձանց 'ի վե՛հս խորամիտս ընկղմեսջիք. զի թէ հօր հմտաբար տեղեկութեամբ ղեկավարեալ իցէ, զի՞նչ օգուտ յայնմանէ որդւոյ բերիցի, եթէ 'ի նաւաբեկութեան կորնչին. Սո՛ զի ոչինչ շահ զհօրն հմտութիւն կարծեմ լինել որդւոյ նաւաբեկութեան.

ԽԵ. Սաստն պատժապարտին չնորհաւանելոյ.

Խրատ ետ Աղեքսանդրի՝ վարժապետն իւր Արիստոտէլ, հանդարտութեամբ զանձն առ ժամանակ մի 'ի պա-

տե-

տերազմական շարժմունս, մինչև հաս-
տատեսցի ասէ զօրութի և ոյժ մարմնոյդ։
Նա պատասխանի Աղէքսանդր. 'Ի հեր-
տանուլ պարտ է զծառանայն, որոյ դեղոցու-
նեան ոչ հոխէ զհամայ ծերոյ.

ԽԸ. Գործ ծածածայ է հատատատ հայ
յոր ասէն.

Լուաւ Աղէքսանդր եթէ Լամ-
պսակեցիք ձեռնտու են 'ի Դարեհ ար-
քայ Պարսից ընդդէմ իւր. նմին իրէ
ահագին զօրութեամբ խաղաց 'ի վերայ
նոցա, և եդեալ 'ի մտի հարթայատակ
քանդել զԼամպսակ. զայս գիտացեալ Անաք-
սիմենեայ իմաստասիրի՝ որ էր 'ի քաղաքէ
անտի՝ եւ ընդ առաջ Աղէքսանդրի զե-
ջուցանել զցասումն նորա, զի էր մտերիմ
սիրելի նորին. իբրև ետես զնա Աղէք-
սանդր 'ի հեռաստանէ՝ ծանեաւ, եթէ
վասն աղատելոյ 'ի դիմաց քաղաքին գայ
առ ինքն. զայրացաւ և ասէ՝ երդնում
'ի դիս, զի ոչ լուայց աղաչանաց նորա
յայս նուագ, այլ զոր ինչ խնդրեսցէ
ընդդէմ գործեցից. Յայնժամ եկեալ
առ նա Անաքսիմենեայ՝ ասէ. Խնդրեմ
'ի քէն արքայ, զի քանդեալ կործանեսցես

զԼամ-

զԼամսակ և 'ի սուր սուսերի մաշեալ՝ սպառեսցես զամենայն բնակիչս դորա։ Յայս բան պաշարեալ և ափշեալ Ալեքսանդրի՝ ժպտեցաւ. և առ կատարումն երդման իւրոյ՝ զոր արար ընդդէմ գործել բանից Անաքսիմենեայ՝ ներեաց Լամսակեցւոց. և ոչինչ արար ընդ նոսա չար։

ԽԸ. Զախորդութիւն հայրենեաց ցաւէ հայրենասիրաց։

Միկիտոն Ռաւլկիտեցի զանգատեալ Հռովմայեցւոց ծերակուտին, ասէ. Ամենայն անդամք մարմնոյ իմոյ առատաժետութեան անգործ կան, և չէք իմ մասն անցաւ՝ բաց 'ի լեզուէ, առ ողբալոյ զթշուառութիւն իմոյ հայրենեաց։

Ծ. Վան չրաղարփ դատապարտանայ։

Առաքեց արքայն Սպանիոյ զՖըռանչիսկոս յԱմերիկայ կատարեալ իշխանութ̅ք և քննիչ և դատաւոր գործոց Քողոմբոսի, տուեալ նմա իշխանութիւն, զի թէ գտցէ ճշմարիտ զամբաստանութիւնս, ինքն լիցի փոխարքայ համօրէն կղզեացն Ամե-

Ամերիկոյ։ Ահա սովին իսկ իշխանութէ
իրաւարարին անկաւ կործանեցաւ առ-
հասարակ իրաւունքն․ զի անհնարին է
նոյն իսկ անմեղին անդատապարտ ելանել
յատենէ դատաւորին, որ կորստեամբ կար-
ծեցեալ յանցաւորին՝ ունի ինքն մե-
ծանալ։

ԾԱ. Իշխանութիւն է հարց պատժել զորդիս։

Ռոմուլոս կանոնեաց զբացարձակ
իշխանութիւն հարց 'ի վերայ որդւոց,
ցոր հասակ և ցոր աստիճան հասանէր
զօրութեամբ իշխանութեան, թոյլ տու-
եալ էր արկանել 'ի բանտ, գան հար-
կանել, պնդել 'ի կոճղս, առաքել յան-
դաստանս 'ի մշակութի, վաճառել՝ մինչ
և մեռուցանել։

ԾԲ. Չիք վաստակ առանց վարձուց։

Չիք ուրեք՝ ոչ վաստակ առանց
օգտի՝ և ոչ գտցես օգուտ առանց մեծի
վաստակոց։ Աշխատութիւն և հեշտութի՛
աննմանագոյնք, 'ի բնէ բնաւոր իմն ըն-
կերութեամբ լծորդին միմեանց։

Աղէ

ծգ. Ասէ Տիտոս Լիվիոս. թէ ի-մաստութիւն է, երբեմն խրոխտանալ 'ի գործն. զի խորհուրդք երկչոտք ոչ միշտ են յաջողագոյնք.

ծդ. Յուլինոս աշխատասէ հրաժա-րէն ձեռք' որք անցանեն յարօրադրութէ 'ի զէնս.

ծե. Փաբիոս խրատէ զԷմիլիոս Հիւպատոսն եւ ասէ. Ախորժելի է ինձ' զի երկիցէ 'ի քէն իմաստուն թշնամին, քան գովեսցեն անմիտ քաղաքացիք.

ծզ. Անտիոքոս որդւոյ մեծ Ասոր-ւոց պաշարեալ զԵգիպտոս. արքայն Եգիպտացւոց Պտղոմէոս Եւերգետէս եւ Կղէոպատրէ քոյր նորա' փութով դես-պանս առաքեցին 'ի Հռովմ առ ծե-րակոյտն խնդրել օգնութի. Ծերակոյտն առաքեաց զՊոպիլլիոս երթալ առ ար-քայն Անտիոքոս եւ ասել 'ի կողմանէ ծերակուտին 'ի բաց կալ յամ թշնա-մութենէ, եւ վախճան առնել մարտի. եւ եթէ մի յերկուցս չառնուցու յանձն առնել.

անսալ, ժողովուրդն Հռովմայեցւոց ո՛չ ևս համարեսցի զնա իւր դաշնաւոր․ Կոխելով թէ վտանգն էր ստիպօղ ՚ի մնաս ոչ լսողացն․

Մինչ Անտիոքոս պաշարէր զԵգիպտոս, չոքաւ Պոպիլլիոս առ արքայն, որում քաջ ծանօթ էր նա, ձգեաց ընձեռն իւր ՚ի նա իբրև ՚ի վաղնջուց բարեկամ․ Հռովմայեցւոյն՝ որ յայնմ վայրի ոչ ևս համարէր զանձն առանձնաւոր ոք, այլ հասարակապետութե՛ պաշտօնեայ, կամ եղև գիտել յառաջ քան զընդունելութիւն ողջունի, մրդեօք ընդ բարեկամի՞ խօսիցի, թէ ը՞ թշնամւոյ Հռովմայ․ առաջի արար նմա զվճիռ ծերակուտին, ասէ․ կարդա՛ զայդ․ Անտիոքոս իբրև ընթերցաւ, ասէ․ խորհեցայց ընդ խորհրդականս իմ, և տաց քեզ պատասխանի․

Պոպիլլիոսի բարկացեալ ընդ յապաղումն արքայի, գծեաց ՚ի մի՛ աւազոյ ծիր զթագաւորաւս՝ ցպով, զոր ՚ի ձեռին ունէր, և խրոխտանօք և ահեղ բարբառով՝ որ էր նմա բնաւոր, ասէ․ Մինչչև ելեալ է քո ՚ի շրջանակէ աստի՝ տուր պատասխանի զոր հանդերձեալ եմ տանել ՚ի

քո ջողմանէ առ ծնրաչոգութն։
Ափշեալ արքայի ընդ այնպիսի խրոխտ
գնացս նր, և վայրկեան մի մտախորհ լեալ
պատասխանի ետ խոնարհութեամբ ։
Եղբարցդ որչափ էնչ խնդրէ ծնրաչոգութն ։
Յայնժամ Պօպիլլիոս ձգեաց զձեռն, որ
առ Թագաւոր ոք բարեկամ և դաշնա-
ւոր հասարակապետութեան։

Որ անվեհերութեան սրտի, որ
համարձակութն լեզուի։ Հռովմայեցիս
մի միայն բանիւ, ահաբեկ առնէ ըզ
Թագաւորն Ասորւոց, և ապրեցուցանէ
զԵգիպտացւոցն։ Որ աղդեցն միում այդ-
չափ համարձակութն, և միւսումն այդչափ
խոնարհութիւն, էր նորոգալուր հռչակ մե-
ծի յաղթութեան Հռովմայեցւոց 'ի
վերայ Պերսէոսի արքայի Մակեդո-
նացւոց։

## ԺԷ. Զրոյց Աննիբալայ ընդ Սկիպիոնի։

Ամենայորդոր փափաք սրտի իմոյ
էր, թէ չխորհէին երբէք Հռովմայեցիք
և Կարքեդոնացիք ընդարձակել զաշ-
խարհակալութիւնս իւրեանց, նոքա յԻ-
տալիոյ և այսր, և սոքա յԱփրիկոյ և
անդր։

անդր. այլ մնային երկաքանչիւրն յիւրեանց
գեղեցիկ ինքնակալութիւնս, որոց՝ երեւի
թէ բնութիւնն իսկ ետ կոպար և կէտ.
Բայց երկոքին իսկ բաղմօք վերջացաք՝
դյապխսի ունել գնացս. Նախ՝ սպառա-
զինեցաք 'ի սակս Սիկիլիոյ. յետ այսորիկ
կռուեցաք վասն տէրութեան Սպանիոյ.
և հուսկ ուրեմն կուրացեալք 'ի բարե-
բաստութենէ, բուռն հարաք փոփոխ
եղծանել զմիմեանս. Դուք ցայն վայր
հասէք, մինչև պաշտպանել յերեսաց
իմոց զպարիսպ ձերոց հայրենեաց. և մեք
ևս արդ կամք 'ի նոյն վիշտ վտանգի.
Ժամ է արդ յետ ցածուցանելոյ զցասումն
դից՝ խորհել մեզէն՝ վտարել 'ի սրտից
մերոց զայն կծկոր նախանձ, որ զինեաց
զմեզ ցայս վայր ընդդէմ միմեանց. Իմ
ուսեալ 'ի փորձոյ, ցոր վայր հասանէ
յեղափոխումն բախտի, որպէս 'ի վայրկեան
ժամանակի ծնուցանէ ահեղ փոփոխումս,
և որպէս անխորժէ խաղ առնել զմարդիկ,
ամենայնիւ յօժարամիտ եմ 'ի հաշտութի.
Բայց խիթամ ոչ սակաւ՝ Սիպիոն,
գուցէ 'ի քում սրտի ոչ կայցէ այս յօ-
ժարութիւն. Դու ես յառոյդ հասակի.
ամենայն ինչ յաջողեաց ըստ քում ըղձի,
'ի Սպանիա, և յԱփրիկէ. ոչինչ ցայժմ

ըն-

ընկերկեաց գրնթացս քոյ յաջողու-
ծոց ։ Ապա յիրաւի՞ է ինձ երկուանալ,
դուցէ յիմոց ազդու պատճառաց 'ի
յորդոր հաշտութեան, ոչ համոզեսցիս ։
Բայց և այնպէս, ած զմտաւ՝ աղաչեմ,
քանի՞ թերայոյս արժան է լինել 'ի վ՞ր բա-
տին ։ Դու առ այս ոչինչ պիտի քեզ 'ի խըն-
դիր լինել բացին օրինակի. շատ է քեզ յի
հայել՝ Տես այն Անիբաղ եմ, որ տէրեւ ։
դոգցես բովանդակ Խաչելոյ, պտտրազմաւ-
կաննեայ, մերձեցայ երբեմն 'ի Հռովմ,
և բնակեալ քառասուն ամպարիզաւ 'ի
բացէ, ինքնիշխան տէր կարծէի զիս Հռով-
մայեցւոց և Հայրենեաց նց ։ Դու այսօր՝
դարձեալ յԱփրիկէ, հարկիմ գալ խոնհ՞լ
ը ումեմն Հռովմայեցւոյ զայամանաց՝
որովք հանձիցի ընտրհել ինձ և Կարքե
դոնի իմում հայրենեաց՝ փրկութիւն ։
Ունիր յայսմ օրինակէ չհպարտանալ ։
և յիշել թէ մարդ ես և դու, նէրքոյ
անկեալ յեղափոխութեան բախտիւ ։ Յու-
բոշմունս իրողութեց կամք են իմաստունն,
զի 'ի բարեց ընտրեսցի մեծն, և 'ի չարեց
առցի փոքրն ։ Արդ ո՞ր ոք զգօնագոյն կա-
միցի անպղտոր անձամբ դիմադրաւել
վտանգի մեծի, որպիսի է այն՝ որ կայ քո
առաջի ։ Թէ յաղթեսցես, փոքր լիցի

առա

առաւելութիւն փառաց քոց, և հայրենեաց
բայց թէ յաղթեսցես, կորուսցես 'ի
վայրկեան ժամանակի զամենայն զպատիւ
և զփառս՝ զոր ցայս վայր ստացար: Իսկ
մինչ յանգին այս ամենայն իմ զրոյցք.
'Ի յորդորել զքեզ, զի հաւանեսցիս
հաստատութեան այսոց պրակաց.

## ԾԸ. Պատասխանի Շիպիոնի՝ Աննիբաղայ.

Եթէ յառաջ քան զանցանել
Հռովմայեցւոց յԱփրիկէ, ելանէիր յԻ-
տալիոյ և առաջի առնէիր զպայմանս՝
զոր առաջադրես մեզ այսօր, ոչ կարծեմ
թէ հրաժարէաք լսել քեզ: Բայց արդ՝
որ ընդդէմ կամաց քոց հարկեցար թո-
ղուլ զԻտալիա, և մեք յԱփրիկէ տի-
րեցաք դաշտավայրաց, շրջեցան իրք: Եւ
որովհետև բռնադատեցի զքեզ՝ ակամայ
թողուլ զԻտալիա և դառնալ յԱփրիկէ
(ներեսջիր ասել,) ոչ ինչ իրաւունք կամ
պատշաճողութիւնք ստիպեն զիս զիջա-
նել քոց ըղձանաց: Վասն այսորիկ, եթէ
'ի վերայ հայցուածոց ձերոց քաղաքակ-
ցաց, դաշն որոց գրեալ կան, տացեն 'ի
դուրս Կարքեդոնացիք զնամ զմեր կալա-
նա-

նաւորս, զաւարտուցեալս և զտորուկս. և
հրաժարեսցին ամենայն իրօք 'ի ձեռն-
երէցութեանն 'ի վերայ Սպանիոյ և 'ի
վերայ ամ՟ կղզեաց, որ է մէջ Ափրիկոյ
և Իտալիոյ. Թողցեն 'ի ձեռս Հռով-
մայեցւոց զիւրեանց պատերազմական
նաւս. զի տացեն մեզ հինգ հարիւր հա-
զար գրիւ ցորենոյ, և երեք հարիւր հա-
զար գարւոյ, հնգետասան միլիոն լերայի.
և զի առ ապահովել զայս ամ՟՝ տացեն
մեզ պատանդս. այս պայմանք են՝ որ 'ի
մէջ մեր եղան յայնմ դաշին, մեք առա-
քեցաք զայնս 'ի Հռովմ, զի հաստատեսցի
'ի ծերակուտէ, զոր խոնարհ աղաչանօք
ժտէին, բայց և այնմ 'ի տկար յոյս քոյոյ
եկւորուեդ ապաստան, սկսան անդրէն առ
մեզ թշնամանալ: Այսուհետև չէք հնար
նորոյ պատգամաւորութեան 'ի Հռովմ.
Արդ եթէ խնդրես կնքել ինձ զբանս,
զայս ասեմ կարճ 'ի կարճոյ, լաւ է ձեզ
անձնատուր լինիլ 'ի կամս դու և հայ-
րենիք քոյ, ապա թէ ո՛չ՝ պատերա՛զմ
որոշեսցէ զձեր օգուտ.

Յաւարտ խօսիցս դարձան երկոքին
զօրագլուխք, իւրաքանչիւր 'ի խումբ իւր.

Զօրոյ

## ԾԹ. Օրայց Շիպիոնի Հռովմայեցւոյ ընդ Աննիբաղ Կարքեդոնացւոյ յետ յաղթութեան.

Հաղթեալ Շիպիոնի զԱննիբաղ՝ զկամին Թուի քեզ, զո՛ր արժան իցէ համարել մեծ 'ի զօրագլուխս Կարքեդոնացւոց ասէ. զմեծն Աղեքսանդր. զի սակաւաւոր Մակեդոնացւովք ցրուեաց զանհամար զօրս. և տարաւ զնոր յաղթական գունդս մինչև 'ի ծագս աշխարհի հեռաւոր՝ քան զճանապարհորդուն ընկոյ զբօսասիրութե. Շիպիոն ասէ. զո՞ դասես յետ Աղեքսանդրի. Աննիբաղ ասէ. զՊիւռոս. զի նախ առաջին ուսոյց մեզ զարուեստ բանակելոյ, գեղեցիկ տեղակալելոյ, և զդասս դնելոյ յիւրաքանչիւր տեղիս զետեղելոյ, մինչև փոփոխակի մինեանց 'ի Թիկունս հասանելոյ. և զի ոչ ումեք 'ի մարդկանէ երբէք յաջողեաց՝ որպ սմա, ջահէլ զմիրտս. և այս ձիրք էին նորա այնպէս կատարեալ, մինչև՝ Թէպէտ և Տաճկաստանի ոք էր, ազգք Իտալիոյ մերձաւորակէին զինքն նախկալուն նր քան զՀռովմայեցւոցն, որք 'ի վաղ ժամանակաց հետէ նախկինք էին յերկրին. Կրկնեաց անդրէն Շիպիոն. Կամէի գիտել, ո՞ւմ տայցե



զեր-

զերրորդ տեղին։ Անձնիշխան ոչ է. զոյգ ինձ պահեմ անտարակոյս։ Ասէ Կեղինոս ժպտելով՝ իսկ զի՞նչ ասէիր, եթէ ինձ յաղթէիր։ Անձնիշխան ոչ է. յայնժամ համարձակ վերադասէի զքեզ քան զԱղէքսանդր, քան զՅուլիոս և քան զամենայն մեզ ծանուցեալ մեծամեծ զօրագլուխս աշխարհի։

Կ. Աներկին գործոց բարեաց, ո՛չ երբէք և ո՛չ ուրեք հանգչին յաշխատութեանց։

Սուռնելիոս Կեպիոն ասէ. Զեղէ երբէք պարապորդ ՚ի պարապորդութեան, և ոչ միայնակ ՚ի միայնութեան։ Որոց գեղեցիկ ցուցանէ՝ թէ յանգործութեան իսկ էր նա պարապեալ ՚ի գործ. և ՚ի միայնութեան անդ գտանէր կենցաղել ընդ անձին։ Զիւր սակաւագիւտ յանձինս ընդելակցութեալս ՚ի զբաղական ծուփս, որք իբրև ՚ի հանգիստ դադարին և յառանձնութիւն՝ ընկղմին ՚ի տաղտկութիւն և յանախորժութիւն, առ ամենայն և ՚ի յոքնաթախիծ տխրութիւն, մինչև յամենայնի անձամբ անձանց ծանրացեալք՝ ընկճին ընդ դժուարակիր բեռամբ անգործութեան։

Ե Պործ

### Կա՛. Գործ արդարախորհուրդ զօրավարաց Կողմէյաւ յամենայն ընդունայ.

Յետ յաղթելոյ Հռովմայեցւոց զՓիլիպպոս արքայ Մակեդոնացւոց և ազատս կացուցանելոյ զամենայն Յունաստան. յորժամ ամենայն Յունաստան եկեալ էր յԻսթմեան խաղս, Հռովմայեցիք յիւրաքանչիւր դահ մատուցեալ՝ յասպարէզ կոչեցին զմունետիկն՝ որ քարոզ կարդաց ՚ի ձայն բարձր և ասէ. Ծերակոյտն և ժողովուրդն Հռովմէական և Կուինտիոս փլամինինոս զօրավար զօրաց նոցա յետ յաղթելոյ Փիլիպպոսի և Մակեդոնացւոց, ազատս առնեն յա՛մ պահականաց և յա՛մ հարկաց զՅունաստան.....և թողացուցանեն նոցա գնալ ըստ իւրեանց օրինաց և սովորութեանց: Ո՞չ գեղեցիկ օրինակ կուսակալաց և դաւապետաց. ո՞վ բարեբախտուն ժողովրդոց՝ որք այսպիսեաց միձակին: Իբրև յանկ ելին խաղք, առ հասարակ խուռն դիմեցին առ զօրագլուխն Հռովմայեցւոց (առ Կուինտիոս) համբուրել զձեռս նորա և արկանել առ ոտս նորա պսակս և ծաղկեայ հիւսս. Եւ արդ հարցանեմ. զի՞նչ իցեն յաղթական հանդէսք

դէսք աշխարհի, առ ձայնիւ ցնծութեան անհամար բազմութեան, և առ օրհնութեք բղխեցելովք 'ի սրտէ, որք էին բնաւորին արդասիք անկեղծ շնորհապարտութեան. Ներշնչեցին 'ի մի վայր՝ ամ յաղթանակք, և յաղթութիւնք և աշխարհակալութիւնք մեծին Աղէքսանդրի. Իցէ՞ն ինչ առ այսուիկ գործով քաջութեան, մարդասիրութեան, և արդարութեան. Նաւանդ թէ ոչ յորդորեցին իշխանք՝ որպէս արժանն է, յայսմ անապակ խնդութենէ և 'ի մեծէ պարծանաց՝ երախտիս առնել այլոց. Ասէին զարմացմամբ և իբր ապշութեամբ.
,,Ապա կա՞յ յաշխարհի ազգ՝ որ իւրովք
,,ծախիւք, և վտանգիւ յանձնառութեամբ
,,մատչի 'ի մարտ, 'ի շնորհել այլոց հան-
,,դիստ և ազատութիւն, առ մի միայն բարեա-
,,մունետկի. Խորհիլ իսկ զայս՝ գործ է
,,վեհանձին, բայց 'ի կատարումն ածել,
, պտուղ է չնաշխարհիկ երջանկութեան,
,,և կատարեալ առաքինութեան''.

ԿԸ. Այլ հորձանուտեան կենաց ծերոց պատիւ է
Տէրեւ Շէրէտոր.

Նաէ Սեւեւլլա. Եթէ մարդկային ընկերութեան հնար էր կալ առանց իգաց

էգաց, մեք ամենեքեան զերծ լինէաք յամ տաղտկութեանց և հոգոց զորս կրեմք վասն նոցա. բայց քանզի կամք եղեն բը-նութեան՝ ոչ ընդ նոսա ապրել կարէ իմն յանդորրու, և ոչ ամենևին առանց նոցա կեալ. Լաւ ևս է խնամ ունել սիրելոյ զանձն մարդկան, քան խորհել միայն անվիշտ վարել զկեանս, որ է այս-չափ սակաւատև.

ԿԶ. Կաշառ կուրացուցանէ զաչս դա-տաւորաց.

Յուգուրթա արքայ Նումիդա-ցւոց վասն յանցանաց դատաստանի բե-րեալ 'ի Հռովմ, բայց կաշառաւորութեամբ Ծերակուտին և Հիւպատոսին փախեաւ 'ի Հռովմայ. Յերթալ իւրում՝ հայե-ցեալ ստէպ 'ի քաղաքակողմն և ասաց. Հռովմ ոչ ինչ այլ է նա 'ի վաճառել, եթէ գտցէ գնողի. և Եթէ գտցէ մի ոք միայն, վաղ ևս կործանեսցի.

ԿԷ. Զախորդութիւնք և յաջողութիւնք ոչ փոխեն զառաքինիս.

Աեմիլլոս Հիւպատոս 'ի զուբ աքաս-

աքսորեալ 'ի Հռոդոս, կայր անդ 'ի զննին խաղուց էին. յորժամ մատուցին նմա զհրովարտակսն աւետաւորս իւրոյ անդրէն դարձի։ Անաց կատարածի տեղարանին և ապա ընթերցաւ, ոչինչ երևեցուցեալ յերեսս փոփոխութիւն։ Նոյն միշտ միօրինակ 'ի յաջող և 'ի ձախող բաղդի. միշտ տէր անձին, և իշխեցող ամենայն կրից։ Որպէս աքսոր իւր 'չ ընկղմեաց զնա 'ի տխրութին, նոյնպէս և դարձ՝ չերևեցոյց 'ի նմա անչափ ուրախութիւն։

ԿԵ. Յաւուրն Տարդոյ փորձի յերջանկութեն 'ի վատաբաղդութեան նորա։

'Ի հայցել Կիւրենացւոց 'ի Պղատոնէ տալ իւրեանց խրատ յելս բարիս. զայս տուեալ էր նոցա 'ի պատասխանի. Ո՛չ հնար է տալ ձեզ օրէնս՝ ցորչափ վայելէք 'ի բարութիւնս. և արդարև չիք ինչ դժուարին 'ի կառավարել և 'ի նուաճել՝ որպէս զայր, որ 'ի բարեբախտութիւնս իցէ, և զօրին հակառակն, ոչ ոք այնպէս դիւրաթեք է և հլու, իբրև զվշտատեսն.

Աւ

### ԿԴ. Վասն բարեկամաց.

Ակներև է. Չկան դարանք գաղտանիք և անխորշելիք քան զայնս՝ որք զօղեն ընդ պատրուակաւ բարեկամութեան և նուիրական կցորդութեանց. Վասն զի հնար է քեզ դիւրաւ պատսպարել զանձն յառաջագոյն զգուշաւորութ̄ 'ի հարուածոց այնոցիկ՝ որք են քո յայտնի ոսոխ. Բայց ընտանի և ներքին հաւատադրժութեան՝ ոչ միայն չերևի, այլ և ճնշէ՝ մինչև յառաջատես լեալ է քո և խորհեալ անձնապահ լինել. Ամին իրէ հարկ է զգուշանալ, այն՝ որ թշնամի ցուցաւ իւրոց, է հասարակաց թշնամի.

Եթէ ստանաս զբարեկամ, 'ի փորձութեան ստացի՛ր զնա. և մի՛ դիւրաւ հաւատասցես նմա.

### ԿԵ. [illegible]

Պոմպէոս մինչ 'ի դարնանամուտ պարապ գտեալ պատահեցաւ յայց կըշչեաց ինչ երևելեաց . . . 'ի [illegible] ունկն-

ունկնդիր եղև ամենայն փիլիսոփայից,
և պարգևեաց միոյ միոյ 'ի նոցանէ մէն
մի տաղանդ. Առանձինն իմն պատուա-
սիրեաց զՊոսիդոնիոս. մինչև յերթալն
անձամբ այց առնել նմա ոչ թողացոյց,
թէ իւր դահճիճք բաղխեսցեն իւրեանց
բրօք՝ որպէս էր սովորութիւն, զդուռն
փիլիսոփային. Որով յաղթականն արևե-
լից և արևմտից ընթադրեաց իրօք ինչ
զիւր մեծութիւն՝ փառաց Գրականութե.

Պոսիդոնիոս ունէր ոտնացաւ, և
Պոմպէոս յետ ողջունելոյ զնա բազում
յարգանօք, զդացոյց նմա, թէ ցաւ է ինձ
յոյժ. զի ոչ կարեմ մխիթարել 'ի քոց
բանից. Փիլիսոփայն ետ պատասխանի.
Ա՛յ՝ կարօղ ես մխիթարել. զի անձամբն է առել,
Ոչ ցաւն խրխեսցէ անպատուել առնել զայսպի-
սութիւն այրն մեծի. Այլ ընկողմնեալ
'ի մահճի անդ իւրում, սկսաւ երկարել
ճառ ինչ բարոյական, յորում առաջի
առնէր ցուցանել, թէ ոչ ցայլ ինչ արժան
է կոչել բարի, բաց յառաքինութե.
Իսկ թէ ցաւոց այնպէս սաստկանայր
'ի փիլիսոփայս, մինչ և բազում անգամ
ասել. Ցա՛ւ դու՝ չզօրես ինչ. Թէպէտ և նեղես,
այլ ես չասացից երբէք՝ թէ չա՛ր ես.

Ոգժ.

Արժանագոյն իմն էր սրտապնդութիւն փիլիսոփայիս՝ վշտակիր գոլով՝ զննել զնիւթս իմաստասիրականս, որոց պիտի հանդարտութիւն ինչ մտաց, և չկոչել զցաւն չար ինչ, 'ի ժամանակի՝ յորժամ տայ ողորմ ձչել.

ԿԷ. Աշխերոնատէ. Օ՜ն ինչ պիտոյ են մեզ ուսմունք և դրականութիւն, յորժամ չլինիմք բարերարք և մարդասէրք և հայրենասէրք։ Նա թէ՝ արթուն լեր և յիշեա զապաւինել 'ի մարդիկ. զի յայս հաստատեալ է զօրութիւն խոհեմութեան.

ԿԹ. Պատչէր դելլան Ճարխայելոյ.

Պղատոն խորհուրդ տայր առն բարկացելոյ հայել 'ի հայելի. քանզի մարդն 'ի սրտէ իւրում լինի անկերպարան. երեսքն այլադունին. աչքն լնանին արեամբ. շրթունքն սևանան և երակունքն շարժեալ կապուտին.

Հ. Օրէնդէ տան Ճարէֆործի.

'Ի կորովամտութեան չնաշխարհիկ. համարիմ քան զամենայն մարդ

զՅուլիոս Կեսար իշխանապետ, որ իրագամբք համարի 'ի Պլինիոսէ այր՝ որ կալաւ միանգամայն զզօրութի և զընդարձակութի ոգւոյ վերագոյն քան զա̃մ ոք ։ Նա այսոքիւք 'ի վերայ յաւելոյր ընտելութիւն և քաղցրութիւն ինչ բարուց՝ որ առնէր զնա կարի իմն սիրելի ։ Որպէս 'ի չուել իւրում երբեմն՝ մերթ և յոյժ օդոց բռնադատեցին զնա խոյս տալ 'ի հիւղ ինչ յարդածածուկ, յոր ոչ կայր՝ բայց մի միայն խուց, որ հազիւ բաւէր միում միայնոյ ։ Յայնժամ տուէ Կեսար ցբարեկամս որք ընդ նմայն էին. առաւելութիւնք պատուոյ վայել են գահերիցանց ; բայց կարևոր դիւրութիւնք պահեալ են վասն տկարագունից ։ Ա̃նկ ստիպեաց զՕպպիոս որ էր հիւանդագին ունիլ զխցնեակն . և ինքն ընդ այլս անցոյց զգիշերն 'ի գաւիթ նորին տան ։ Ո՞չ լինէր համանման Կեսարու, եթէ ընդ այս ա̃մ գերապանծ կիրս ընդորդէր և զակնածութի առ իրաւունս արդարութե և առ սէր առաքինութե ։

## Հա̃. Հնարամտութիւն Աբիհերոնի ։

Յորժամ միացան Կեսար և Պոմպէոս՝

պէտս՝ և Արատոս ՚ի ծածուկ, վասն փո֊ խարկելոյ հասարակապետութեան յե֊ ռապետութիւն ։ Կիկերոն բարեկամ էր Պոմպէոսի, և թշնամի Կեսարու և Կրաս֊ սոսի, բայց զի միայն Կիկերոնիւ ոչ լինէր հնար փոխարկութեան կամ դիմադար֊ ձութեան երեցունց, վասն որոյ Պոմպէոս զգուշացանէ Կիկերոնի չմտել յայնպիսի երկիւղալի իրս, այլ ծերել միայն յիւր կողմն, որոյ վասն և միացան ։ Ապա և Կիկերոն գրէ առ Լենտուլոս Սպինթեր թէ զիա՞րդ շրջեցան ա՛րդ այք ՚ի մի բերէ՝
,, թէ գլխաւոր հեղինակութիւն պե֊
,, տութեան չէ բռնաբարել յանօրինաց,
,, յորում պահու պիտէր դիմամարտել
,, ցյետին ճիգն . այլ ՚ի ձեռս է առա֊
,, գամեծար անձանց Պոմպէոսի և Կե֊
,, սարու ։ Այլ յայսմ ամի ՚ի մի բերէ,
թէ պարտ և պատշաճ եղև ինձ յե֊ րիւրել ըստ ժամանակին ։
,, Վասն զի (ասէ), գիտուն քաղաքավարք
,, չետուն երբէք կանոն, յամի անայլ֊
,, այլակ զհետ երթալոյ մի և նոյն խոր֊
,, հրդոց ։ Ի նաւարկութեան արուեստն
,, օրինադրէ տեղի տալ մրրկի, թէ֊
,, պէտ և այնուիկ ոչ լիցի հասանել
,, ՚ի նաւահանգիստ ։ Բայց թէ հնար
,, իցէ

,,իցէ փոփոխութեամբս այսուիկ ժա-
,,մանել յայն, անմտութիւն է վտան-
,,գիւ պինդ ունիլ զառաջադիր ուղին, և
,,ոչ զհետ վարիլ ուղւոյ՝ որ հասուցանէ
,,զմեզ 'ի նպատակ յոր ըղձանամք.
,,Այսպիսի է և մատակարարութիւն
,,հրապարակական իրողութեանց՝ և առ-
,,հասանելոյ վախճանին՝ զոր առաջա-
,,դրեմք, որ է հանդարտութիւն մա-
,,յեկչական և շքեղ, ոչ է պարտ միշտ
,,ունիլ զնոյն լեզու, թէպէտ և պարտ
,,է մեզ միշտ հայիլ 'ի նոյն նպատակ''.
Բայց իբրև եբաց զիւր ոխտ Ս.տոփ-
կոսի, այնուհետև անփոյթ լեալ պա-
ճուճելոյ զիւր գնացս, այլ առաջի ա-
ըարեալ զնկուն մլճակ՝ զոր յանձին
զգայր, ողբայր զայն այնպէս թախծա-
գին, մինչև շարժել յախտակցութիւն.

,,Քանի՞ երջանիկ ես դու (ասէ
,,առայս իւր հաւատարիմ բարեկամ)'ի
,,համեստ և 'ի միջասահման աստիճանի՝
,,յոր կեաս: Ունիս դու ծառայութի
,,ինչ անձնական, և 'ի հասարակաց ծա-
,,ռայութենէ չհասանաս՝ բայց զքո բա-
,,ժին միայն իբրև զայլոյն. Բայց ես, թէ
,,ասեմ զիմ գործիս 'ի հասարակ իրողութիս՝
,,ամ

„որպէս արժանն է, անմիտ եմ, որ կամիմ
„զեմ կործանումն. Թէ խօսիմ ըստ պէ-
„տելոյ իմոյ օգտի, սորուկ եմ՝ որ մեհե-
„րիմ. Թէ լռեմ, խոստովանիմ զիմ մեծակ
„ծնչման և սորկութեան։ Իսկ որպիսի
„ւեցէ իմ ցաւս։ Լինելոց է այնպիսի՝ ոչ
„իրօքյանձին զգամ։ Իւ զգայուն ցաւոց
„ևս քան զևս արծարծանի յիս, զի չկա-
„րեմ 'ի ցոյց ընծայել, երկուցեալ երևիլ
„ապաշխարհ առ Պոմպէոս՝ որում տմու-
„եմ պարտիս։ Իւ զի՞ գործեցից.... ընտ-
„րել յիմում մեծի կի զկամն ըն մարթելոյ,
„և գովել զայն՝ ընդ որ հարկաւ լծոր-
„դեալ կամ, ոչ կարեմ։ Իւ ես նկրեմ
„բանասաստեղծին Փիլոքսենոսի՝ որ նախա-
„մեծար ընտրեաց դառնալ 'ի բանտ,
„քան գովել զոտանաւորս բռնաւորին,
„որ բանտարկեալն էր զնա։

ՀԷ. Օրոյց Կիկերոնի առ Ատտիկոս 'ի
վերայ հասանէլ նորա։

Արդարև ցուցաւ յամենայնի այր
զուարթուն, որ ոչինչ մտածութիւն առնէր
'ի վերայ անձին իւրոյ. հասակն նորա և
եթ մարթ էր լինել բաւական պատճառ
հրճելոյ զնա 'ի մտաց անձնատուր լինելոյ
վշտաց

վշտաց վտանկի և աշխատութեանց, որ այլ չէին նմա 'ի ճահ. Այր նա անցեալ զվաթսնամենիւք, և թուէր ծերագոյն ևս. Յայս սակս առիթ տուաւ Պէյո-տարոսի ազդ առնել նմա. Զի այն ինչ անցանէր նա ընդ Պաղատիա, ուր ա-ւեորեալ իշխանն հիմն արկանէր նորոյ քաղաքի, կամեցեալ Արատոսի կծանել զնա յայն սակս, ասէ. Աղբրայր Պաղա-տիոյ, չէ այն արժանի շինել՝ յորժամ մի միայն ժամ կայ ցերեկոյ: Պէյոտարոս 'ի ճահ ետ պատասխանի. Եւ դու Տէր, չէիր ինչ կանուխ՝ երթալ զալ պատերազմ ընդ Պոմպէոս. Զիք գիտել, արդեօք Արատոս բարկացաւ է զայս. բայց ոչ յետնեցաւ 'ի յառաջ վարելոյ զսկսեալն.

ՀԶ. Օրինակ խոնարհութեան.

Այս է այր, որ գործէ՝ և լռէ. թողեալ զի գործն քարոզեսցէ զնա, և ոչ ընդ վայրայած պարծանք շրթանցն. որով յաւէտ նսեմանայ գործն և գոր-ծողն. Համեստութիւնն գովեստ մեծ է ոչ միայն 'ի սոսկականս, այլև 'ի քաջ զօրավարս և յանուանի անձինս. և առաւել քան զայն՝ խոնարհութիւն, որով ոչ յանձին քա-

քաջութիւն և հմտութիւն, այլ յամե-
նազօր Տեառն օգնականութիւն ապա-
ւինեալ՝ գործէ մեծամեծս և սքանչելիս.
որոյ առաւել սատար՝ լինի խոնարհ պա-
ղատանք առ Աստուած և ազատեալ լի-
նին 'ի բազմութենէ ամբարտաւան թըշ-
նամեաց։

ՀԴ. Պլուտարքոս ասէ. Թէ չիք գազան այնպէս ամեհի՝ որպէս մարդ, յորժամ կրից նորա 'ի վերայ յաւելցի իշխանութիւն, որ անկ հասանիցի նմա.

ՀԵ. Այս զօրագլուխս արգոյս՝ նէց է ընդ յաղթութեան և քաղցր ներողութեան և վեհանձնութեան։

Աուսականն Պոնտոսի Դեմետրիոս պատեալ պաշարեալ 'ի Յուլիոս կեսարէ, որում 'ի բազում ամաց հետէ յայտ-նեալ էր անձնական թշնամի, քաջալեր-եալ յերկիւղէ եդ 'ի մտի երթալ զի-րովի, զի մի մեռցի ըստ հաճոյս և ըստ հրամանի իւրոյ թշնամւոյ. Պատուէր ետ իւրում բժշկի՝ զի պատրաստեսցէ նմա դեղ մահու. իբրև բերին առ նա զըմ-

զըմպելին էարբ քաջութեամբ, և ընկղմ-
նեցաւ յիւր մահիճս: Իբրև ժամք ինչ
անցին 'ի վերայ, եհաս Լենտուլոս՝ որ
պատմեաց նմա զգթութիւն Կեսարու:
Յայնժամ Դոմետիոսի յուսահատեալ
ողբս առնու, և չարախօս լինի զանձնէ
վասն շտապելոյ իւրոյ և կուրութեան:
Բժիշկ իւր քաջալերեաց զնա և ասէ.
„Քաջալերեաց: Այս արբուցի քեզ թմբ-
„րադեղ ինչ՝ և ոչ թոյն մահու. ոչ լեցի
„քեզ չար ինչ”: Դոմետիոս ոգի առեալ՝
գնաց առ Կեսար, տարեալ ընդ իւր վեց
միլիոն սեստերտոս տուեալ նմա 'ի Պոմ-
պէոսէ 'ի ռոճկել զիւր գունդս: Այս էր
միոյ հասարակապետութեն. և Կեսարու
մարթ էր առնուլ իւր 'ի պէտս Բայց
և այնպէս դարձոյց 'ի Դոմետիոս, ոչ
կամեցեալ երևիլ, թէ արգոյ իցեն յաչս
նորա միայն կեանք մարդկան. այլ՝ թէ
զերծ է յագահելոյ յարծաթ նոցա:

ՀԶ. Պարտութիւն և փախուստ Պոմպէոսի
Մեծի [illegible] յա-
[illegible]:

Յետ յաղթելոյ Յուլիոսի Կեսա-
րու զՄեծն Պոմպէոս՝ և կոտորելոյ և
անձնա-

անձնատուր առնելոյ զմիմ զօրս նորա։ Պոմպէոս գաղտագնաց լեալ յիւրմէ բանակէ անպատսպար փախեաւ ձիարձակ արշաւանօք առ վայր մի։ Իբրեւ ետես թէ այլ չէր որ հետամուտ խաղաց հանգարտիկ՝ մղձկեալ 'ի ցաւագին և 'ի տխուր խորհրդածութիւնս։ Եւ զիա՞րդ լինէին ծուփք խորհրդոց նորա՝ որ յետ երեսուն և չորից ամաց անը̅հատ յաղթութեանց՝ մուտ առնէր յիւրում ծերութեան 'ի նորընծայութիւն ամօթոյ, պարտութեան և փախստեան։ Զանի՞ մրցմունս, քանի՞ մարտ պատերազմի մղեաց առ հասանելոյ փառաց և իշխանութե̅, զոր ապա 'ի վայրկենի կորոյս։ Ո՞րպիսի խտիր յիւրում վիճակի։ Այր մի յառաջ զիւրեւ 'ի սպասու կային անբաւութիւք մարդկան և երիվարաց, և նաւաց առագաստելոց ընդ ծով ամենայն, և արդ խոյս տայ այնպէս փութկացեալ և ամփոփեալ, մինչև չանկանիլ նմա ընդ տեսութեամբ թշնամեաց՝ որք 'ի խնդիր էին նորա։ Ի այսպիսի տագնապանօք՝ Պոմպէոս եհաս 'ի Լարիսա. ուստի անցեալ ը̅ ձորն Տեմպէի, և զհետ երթե̅ ընթացից գետոյն Պենէոսի՝ եգիտ հեւղ մի ձկնորսաց, և անդ անցուց զայն գիշեր։

Իբրև լուսացաւ, եմուտ 'ի կուր մի փոքրիկ ազատ արամբք՝ որ ընդ իւր, և արձակեաց զիւր ստրուկս՝ որք ընկերէին նմա: Այսու օրինակաւ եհաս 'ի ծով. և 'ի պատել զծովափամբ՝ ետես նաւ մի բեռնաբարձ մեծ յոյժ, որ թուէր պատրաստական 'ի նաւել: Տր նաւին՝ որ էր Հռովմայեցի Պետրիկիոս անուն, տեսեալ էր 'ի գիշերի երազ, յորում թուէր նմա տեսանել զՊոմպէոս առաջի իւր 'ի տխուր և 'ի գծուծ կերպարանս: Պատմէր նա յանժամ զայս երազ՝ որոց անդն կային. և ահա մի 'ի նաւավարաց եկն զգացոյց նմա, թէ տեսի վարքայ մի՝ ուստի նշանացի կոչեն զմեզ: Պետրիկիոս դարձոյց զաչս յայն կողմն, և անդէն ծանեաւ զՊոմպէոս՝ որպէս տեսեալ էր զնա յերազին: Ճօճեաց զիւր գլուխ 'ի նշան ցաւոց, և իջուցեալ զմակոյկն 'ի ծով երթալ առնուլ զնա, ձգէ ձեռն 'ի նա և ընդունի զնա յիւր նաւ: Անդէն վաղվաղակի 'ի վեր էառ զխարիսխսն և հասոյց յանփիպօլիս ուր ոչ կամեցաւ մտանել Պոմպէոս, բայց երագեկ լեալ՝ թէ Կեսար չէ ինչ կարի հեռի, ել տագնապաւ և չոգաւ 'ի Միտիլինէ, ուր թողեալ էր

 նորա

Նորա զԿոռնելիա զիւր կին բռնացեալ 'ի Թնդմանց զինուց և պատերազմի.

Կոռնելիա մնայր մտօ եղեալ լրոյ լսելի յաղթութեան. Կարծէր՝ թէ զՊոմպէոս՝ այլ ոչ՛ինչ լսէ, բայց զհետ պնդէր Կեսարու փախստէի, մինչ դեռ զայս խորհէր, տեսանէ մտեալ զգուժկան ոք, որ ողջունել անգամ չհամարձակեալ՝ գուժէր զմեծամեծ ձախողութիւնս առաւել արտասուօք քան բանիւք. յորդորէր զնա երագել՝ թէ կամիցի տեսանել զՊոմպէոս 'ի մի միայն նաւ, որ և այն չէր իւր. Այն բան ըմբռնեալ 'ի կսկծագին ցաւոց՝ որում ոչ այլ ունէր, նուաղեալ անկաւ, և եկաց հարուստ մի անզգայ և անբարբառ. Իբրև զգաստացաւ, տեսեալ թէ չէ ժամանակ անձնատուր լինելոյ յողբս և յարտասուս, անթացաւ 'ի ծովափն, անցեալ ընդ քաղաքս ամենայն. Պոմպէոս գիրկս արկանէ զնովաւ անխօսիկ՝ և 'ի վեր ունի, զգուշացեալ՝ զի մի անկցի միւսանգամ նուաղեալ.

Կոռնելիա յիւրում յուսահատութեան՝ անձին ընծայեալ զձախողութե իւրոյ մեծայի, ինքեան վերագրէր զպատճառն. խօսեցաւ և ասէ. ,,Տեսանեմ

,,զքեզ

,,դըժնեաց ընտանեաց իմ. ( ոչ գործ քումդ
,,բնութեան՝ այլ իմոյս ) տառապանել մինչ և եթ
,,մանկութեան, որ յառաջ քան զընդ Կյուռ-
,,նելէա ընտանեցութիւն հինգ հարիւրովք
,,նաւուք ընդ այս ծով խաղայի. Ո՛չ
,,եկիր տեսանել զիս, և ոչ թողեր զը-
,,ժընդակ բաղդին, որ և զքեզ յայսպիսի
,,վարակեցի յաղէտս. Քանի՞ բարեբա-
,,ստիկ լինէր կին, եթէ մեռեալ էր իմ յա-
,,ռաջ քան զգոյժ որ 'ի Պարթևս մա-
,,հուն Պուպլիոսի՝ ընդ որում կուսոյս էր
,,ամուսնացեալ. և քանի՞ իմաստուն, թէ
,,'ի փախչանիլ նորա թողուի զկեանս՝
,,որպէս հաստատեալ էր 'ի մտի. Այլ
,,պահեցայ լինել հարուած և Անծեղ-
,,Պոմպէոսի.

Պոմպէոս ամենայնիւ ջանայր
մխիթարել զնա, առաջի արարեալ զյե-
ղափոխութիւն մարդկային իրաց. Ասէ.
,,Արիութիւնն զոր բաղդի շնորհեալ էր
,,ինձ, խափեաց զքեզ. Կարծեցեր թէ
,,բաղդն իցէ մշտատև. Բայց չէք ինչ
,,անյողդողդ և աներկեան 'ի տկար մահ-
,,կանացուս. Այլ այս իսկ է՝ որ զքեզ
,,վստահացուցանէ զյոյս առնուլ միւս-
,,անգամ բաղդի. Այլ զի յայնմ բարձր
,,դահէ հնար եղև ինձ անկանիլ յայս
,,ողորմ

„ողորմ վիճակ՝ յոր զիսն տեսանեմ ;
„զիա՞րդ ՚ի վիճակէ յոր այժմս կամ՝
„չամբարձայց ՚ի վիճակ՝ յոր վայելեցի
ամս բազումս ։

ՀԵ. Անեղծ է յայտնէ՝ յետ մահուան թշնամւոյ
լալ զնա.

Թէոդոտոս Եգիպտացի՝ հռե-
տորն Թշուառակն, այն ինչ մատոյց Կեսա-
րու զգլուխն և զմատանին Պոմպէոսի՝ խոր-
հրդով խուրով սպանելոյ, տեսեալ Կեսա-
րու զայն ողորմ նշաւակ՝ արտասուեաց.
բայց պատճառ արտասուելոյ նորա էր
անգիտելի։ Զոր անշուշտ պնդեց Դիոն՝
թէ կեղծ եղեն այս արտասուք։ Զնոյն
տպացոյց և խորհրդածութքն՝ զոր մի ՚ի
մերոց քաջաց հագներգուաց արկ ՚ի բե-
րան Կոռնելեայ.

Ո՞վ դառնագին հառաչանաց,
ո՞վ յարգական ակնածուեց.
քանի՞ քաղցր է՝ լալ զթշնամի,
երբ այլ երկիւղ չիք ՚ի միջի.

ՀԶ. Սիտոսյ փիլիսոփայի խրատք են այս.

Զծերս և զպատուաւոր անձինս պատ-

պատուեալ, յանդգնութիւն, զրկողու-
թիւն և նեղութիւն՝ մի ումեք առնիցես.
խորհեալ յառաջագոյն և ապա տուր
իրաւունս. քանզի երկու իրք հակա-
ռակք են խորհրդականութեան, շփո-
թումն և բարկութիւն.

ՀԹ. Ազատաբերան համարձակութիւն Հիբ-
րէասայ ատենաբանին առ Անտոնիոս.

Մարկոս Անտոնիոս եռապետա-
կան՝ այն ինչ ՚ի Յունաստան պահան-
ջեաց կրկին հարկս ՚ի ժողովրդոց, Հիբ-
րէաս մի ՚ի մեծանուն ատենաբանից
արար նմա յանուն Ասիոյ աշխարհի.

„Եթէ կարող ինչ ես (ասէ) ձգել
„՚ի միում հարկս կրկին ՚ի միում ամի,
„ապա կարող ես և տալ մեզ երկու
„ամառն և երկու աշուն. Յայլում
նուագի նոյն ատենաբան խօսեցաւ ընդ
նմա կարի ազատաբերան՝ որ խոցէր ՚ի
սիրտ. Յետ երկերիւր հազար տաղան-
դաց քաղելոց յԱսիոյ, Անտոնիոս պա-
հանջէր դեռ նորանոր տուրս, Հիբրէաս
իշխեաց ասել առ այդ առաջարկութիւն.
„Եթէ

,,Եթէ չընկալեալ դու՝ զոր ինչ մեզ
,,տուաք, ո՛չ զհաշիւ ՚ի քոց հարկահա-
,,նաց. ապա եթէ առեր՝ և այլ չէ՛ք առ-
,,նել, վա՛յ է մեզ, կորեաք ուրեմն.

Ժ. Օգոստոս կայսրն համապաշ-
տնէր ՚ի բերան զառակն Յունաց եթէ՝
փութա յամրէլէ. և սիրէր յառաջ բե-
րել զբանաւոր ինչ՝ որոյ այս է ի-
մաստ՝ թէ Զօրավար զգուշաւոր, է
վերագոյն քան զյոխոր.

ԺԱ. Զի՛ւ էր զարդարասիրութեանն
յոյս պատանեկին.

Յետ պարտութեան Անտոնիոսի
Օկտաւիանոս Կեսարու, և տեսանելոյ
զմարմին բարեկամն իւր զհերոս դար-
ձուցեալ յինքենէ, ընկղմեալ ՚ի մաղ-
ձամակարդ թախծութեան՝ փակեցաւ ՚ի
փոքրիկ և ՚ի հեռաւոր տան ուրեք.
Ուր մեկուսացեալ ժամանակ մի՝ փո-
խուցեալ յընտանութենէ մարդկանց
տանելով. օրինակ առնում ՚ի Տիմոնէ
մարդատեաց անուանելոյ, և խաշանկ-
եալ՝ իբրև զայս աթենացի յապերախ-
տաւ.

տութիւնք և 'ի հաւատարմութիւնք ի-
մոց բարեկամաց, խնթացեալ եմ յայդչէ
մարդկան.

ՃԷ. Պղնձագործն առէ

«Այսպէս որք նեղին 'ի դժբաղ-
դութիւնս, առ որ են ճանաչել զեւրեանց
զգլխոյն, և մատուցանել ուղերձ առա-
քինութեան.

ՃԸ. Որսորդն առէ

Ո՛վ չարաբաստ քաջարութիւն,
եղեր և դու պիտակ անուն.
Նա էր օրէն քև վարեցայ,
այլ դու Բռաղցին եղեր ծառայ.

ՃԹ. Ոմրադէնս առէ

Ընդ քեզ ծանեայ ըզ փիլիսոփէ,
և ըզ խուճապ փախուստ յանդէ.
Աքեալ 'ի բաց անարգաբար,
'ի յանհեկաց զինքս ասպար.

Ա. Ձի ինչ եթող դաշտ փիլիսոփեան
զիս մաշապուր,

ըստա-

ըստորաքարշ բերել զերկրաւ թևա-
կոտուր.
Մերկ կողոպուտ ՚ի հայրենեան գո-
յից յարկաց,
վարեաց յանդունդն աղքատութիւն
զիս ՚ի քերթուած։

ՃԵ. Յուլիոս Կեսար ասէ։

Երկու օգնութիւնք են ամենայ-նիւ պիտոյք առ հաստելոյ ՚ի հզօր զօ-րութեան. զօրականք և փողք. այս երկու նպաստք ձեռնտու լինին միմեանց փո-փոխակի. փողով պահպանին և անքակ յօդին զօրականք. և զինուք զօրականաց լինի ստանալ զփողս. Եթէ մի յերկուց աստի պակասի, միւսն ոչ կարէ կալ.

ՃԶ. Անյիշաչարութիւն Կեսարու։

Յորժամ Կեսար յաղթեաց Պոմ-պէոսի, Աթենացիք բացին զդրունս քա-ղաքին, որք գթութեան աղերս արկին պատգամաւորօք։ Կեսար ներեաց նոցա. բայց և ետ նոցա նախատինս այսպիսի. „իսկ միշտ այդպէ՞ս լինիցի. զի արժա-„նապարտ գոլով կորստեան վս՟ ձերոց „յան-

,, յանցանաց, շնորհ ընկալջիք փրկութեան
,, վասն միաւաց ձերոց նախնեաց։

ՁԷ. Գովանի խոհականութեան նորա։

Կեսար կարգադրէր զամենայն առանցանելոյ փութով յափրիկէ. և ահա յարեաւ կատաղի խռովութիւն յիւր հինաւուրց Լեգէոնս, որ բաւական էր յապաղել զչու նորա։ Կեսար առ ժամն չէր ձեռնհաս հանձել զմիտս նոցա, և ոչ տալ նոցա յայնմ վայրի ինչ՝ բայց խոստմունս։ Նա առաքեաց զՍալուստիոս որ ընտրեալն էր պրետոր, պատուէր տուեալ յայտ առնել նոցա յիւր անուն թէ ընդ յանկ եղանել կռուին Ափրիկոյ, բաց ՚ի բաշխմանէ կալուածոց և դրամոց՝ որ անկ է նոցա վասն անցելոց, յաւելուլ ունի և ձրիական ինչ տուրս հազար դենարի առ մի մի (որ է 500 ֆռանք։) Նայս խոստմունք այսմ բացակինք ՚ի պահանջողութց զօրականին առաւել ևս բարկացուցին զնոսա։ Սալուստիոսի իսկ վտանգէին կեանք, թէ չէր հապճեպ զերծեալ ՚ի նոցանէ։ Եւ խռովարարացն յափշտակեալ ՚ի թափոյ ցասման, անդէն վաղավաղակի չու դարձին առնելն ՚ի կողմն Հռովմայ, յապա-

յաղթանակութիւն եդեալ զնմ՝ ուր և անցանէին։ Այսանէն և զբաղումս։ Օահի հարաւ Կեսար վասն քաղաքին։ Անդէն վաղվաղակի եւ փակել զդրունս և բաշխեաց վաղվաղակի ՚ի պահպանութիւն զգունդս՝ զորս ունէր ընդ ձեռամբ։ Այլ ինքն ոչ կամեցաւ փակել ՚ի ներքս ՚ի քաղաքի, այլ եբրեւ լուաւ թէ խռովարարքն հասեալ են ՚ի դաշտ Մարսի, չոքաւ ընդ առաջ նոցա, թէպէտ և իւր ահաբեկ բարեկամք առաջի առնէին չերթալ։ Այլ ահեղաբար ձայն առեալ և ահեղասաստ բարբառով եհարց ցզօրականս. յե՞րբ եկեալ էք, և զի՞նչ կամք են ձեր։

Այս առաջին խրոխտաձայն իշխանութիւն՝ արկ շփոթ ՚ի խռովարարս։ Զեշխեցին ՚ի մէջ բերել զփոխարինութիւն վարձուց՝ որոց յապաղումն յարուցեալ էր ՚ի նոսա զտրտունջ։ Այլ շատ համարեցան առաջի առնել, թէ վաստակաբեկք գոլով և ողեսպառք յարենհեղութենէ յայնչափ պատերազմունս, թուի մեզ թէ արժանի եմք արձակուրդ ընդունելոյ։

Կեսար անյապաղ ասէ փոյթ յեղ. և եբրեւ վայրկեան մի լռութեան եղանց ՚ի

վերայ

վերայ, 'ի խառնել՝ յայն և ինչ մի անու-
շակ՝ ռամկաց միտս հաւուցանելոյ յար-
գէ և հեղինակութեան հրամանին,
յարէ․ 'Ի յաղթանակել իմաստ այսուիկ գործով,
ոչ զանց արարեց նա զոր չէր կատարել զէն
խորտակմամբ։

Այս գուշակութեայ բանք՝ շանթք
եղեն 'ի սիրտ խռովարարաց․ Այն ինչ՝
որում ոչինչ ակն ունէին, էր առաւ
նոցա Կեսարու արձակուրդ, 'ի ժամա-
նակի յորժամ դեռ ակնաէին նմա նո-
ցուն ծառայութիւնք․ Խոստումն վար-
ձահատոյց լինելոյ նոցա յամօթ առնէր
զնոսա․ Կախաննձաբեկ լինէին՝ թէ յետ
բառնալոյ իւրեանց զծառայութիւն, և
առնելոյ ընդ մշտ վշտաց վտանգի յայնպիսի
և յայնչափ երևելի պատերազմունս, թո-
ղուլ ունիցին այլոց զպատիւ յաղթանա-
կի․ Յուզեալք 'ի յորդունց այսպիսի այլ և այլ
ծփմանց՝ ձևացին առ վայր մի ընդդիմա-
ցեալք, այլ ոչ նուաճեալք․ որովհետև
ոչ կարէին հաւատալ, թէ Կեսար 'ի գործ
դնիցէ զիւր ապառնալիս, կամ գէթ զանց
արասցէ զնոցուն ծառայութեամբք․
Իշխանութիւն յիւրն կողմանէ կամէր եր-
թալ 'ի բաց, այլ չունելով առ նոսա
ատել ինչ․ Իւր բարեկամք աղաչեցին զնա

չեր-

ճերթալ 'ի բաց, այդպիսի լակոմական խմբաւ բանիւ յեւրոց ընկերաց և 'ի պաշտօնէից իւրոց յաղթութեանց:

Նայս դարձ արար 'ի խօսել ընդ նմա և յանուանելն զխառոշխարարսն, անուն կոչեաց նոցա Աքուէրայցի, որպէս թէ ասէ Ռաղափայցի, որովհետև ոչ հայէր 'ի նմ այնուհետև իբրև 'ի զօրականս: Նայ բառ նկուն արար զնոսա իսպառ: Զայն բարձին յայնժամ, զօրականք եմք մեք, դիմեցին 'ի խոնարհական ողոքանս. վկա-յութիւն եդին յայտնապէս եթէ ան-կեղծ է նոցուն ապաշաւ. խնդրեցին ոչ մեծ շնորհ՝ զի տարցէ զնոսա ընդ իւր յափրիկէ, խոստացեալ նմա անձամբք լո-կովք յաղթել թշնամեաց՝ որչափ և բա-զումք իցեն, և յանձին առին տասանոր-դել իւր՝ եթէ ձահ թուիցի նմա: Մե-սարու հասուցեալ զնոսա յայն սահման յոր իւր կամք էին, պինդ եկաց դեռ առ վայր մի: Յայտ արար նոցա, թէ իմ այլ ոչ են կամք հեղուլ զձեր արիւն, բայց քանզի զինուորք գոլով յարբունս կորովութեան՝ մերժեցէք զծառայութ ձերոյ զօրագլխի, արժան է ջնջել զձեր անուն: Սակայն և այնպէս հուսկ ուրեմն

յաղ

յաղթեալ 'ի պաշտամանաց նոցա, եւ ցոյց զիջանել հայցուածոց նոցին, և տալ նմա որպէս շնորհս զայն ինչ՝ որում յերաւէ էր նմա և շահեկան ընձանալ մեծապէս։ Այս ամենայն քաղաքավարութիւն էր քաջախոհ, հայելով յօգուտ պարագլխի միոյ կողման Բայց որ ինչ հայի 'ի ներողութիւն և 'ի մեղկութիւն առ զօրականս, հակառակ է այդ ամենայն բարեօք կանոնաց և անվայել հրամանատարի, որոյ զգեցեալ իցէ օրինաւոր իշխանութիւն։

ԽԲ. Արտաքսումն Սեւերոսի 'ի խափանարջումն հեթանոսաց ապստամբ չարծեաց խռովութեան։

Սեւեր անցանէ յամիրիկէ՝ անհաս շութափութբ իւրով, զորմէ պատմի թէ յիջանել իւրում 'ի ցամաք, անկաւ 'ի գետին. բայց ոչ գիտէր զանապաշտ բնաւորութիւն խաժամուժին, երկուցեալ թէ իւր զօրականք համարիցին զիւր անկումն ձախող ինչ գուշակութիւն՝ աճապարեաց սթափութեամբ մտացն անդէն իսկ ուղղել զկարծիսն, տարածեալ զբազուկս որպէս թէ 'ի գրկախառնութիւն երկ-

երկրիս տայամիկ. և գոչելով 'ի ձայն բարձր կոչայ զհետ Ադրբէնէ.

ԺԹ. Տհաճութիւն համաձայնեցի Աղուանից ընդ ճանաճարութիւն Կեսարու զԼ աթեբիրեա ա-գեա անյամբ առաջի առնել 'ի միաբանութեան խա-ղարկութեան զմառն ինչ երրոյ շարադրութեան.

'Ի կատարել Կեսարու զկորմ յաղ-թանակս՝ վասն յաղթութեանց եղելոց 'ի վերայ Գաղղիացւոց, 'ի վերայ Աղեք-սանդրիոյ և Եգիպտոսի, 'ի վերայ Փառ-նակայ և 'ի վերայ Յուբայայ. 'ի թա-տերական խաղս՝ որք առաջի արարան, եղեն ծանրաշարժ խաղարկութիւնք 'ի Յունաց և 'ի Հռովմայեցւոց անուա-նեալք մի մի, ըստ միաբանութ. Դարերբս ասպետ Հռովմայեցի էր գերապանծ յայս ազգ շարագրութեան. և Կեսարու ոչ շատացեալ թէ սա յօրինեսցէ և եթ զայնպիսի խաղս, պահանջեաց և զայս հանճարութիւն, զի և անձամբ առաջի արասցէ զմանն ինչ խաղուն. Բանաստեղծն ան-սաց. բայց ակամայ կամօք, որպէս երգոյ 'ի նախաբանութեան ինչ զոր Մակրոբիոս հատոյց մեզ. և յորում զանանապէս զան-

գանգատէ, թէ ծնեալ Սոպեա հռովմէա-
յեցեմատանել ունի ՚ի կարգ կատակեր-
գուաց։

Բայց և այնմ եհան զվրէժ քինա-
բանութեանն՝ զոր առնէր նմա Կեսար,
չափաբերութեամբք զոր յեռոյր յեւր
Սեմոսութիւնս, և զոր յերեւեր յայտ-
նապէս բառ առաջինկայ հանգամանաց
երգութեանց. Սյուէկ ևմոյծ նա ՚ի
խաղարկութիւն զանձն ոք՝ որ բարձրա-
բարբառ աղաղակէր. «Ուռ հռոմայեցիք
կորուսանեմք զմեր ազատութիւն»։
Նշանաւոր է յոյժ միւս ևս առզ՝
որոյ այս է միտ։ «Ես՝ յորժամ բա-
զումք երկնչին, երկնչել ունի և ինքն
՚ի բազմաց»։ Սենեկէն՝ որք ՚ի հան-
դիսին էին, արկին զայս առած զան-
ձամբ Կեսարու, և դարձուցին զաչս
իւրեանց ՚ի նա։

Բարկացեալ իշխանապետն է այս
համարձակութեան բանաստեղծին. և
արհամարհութիւնն զոր գտաց յանկոյց
զմիտս նորա ՚ի տալ հրաման վարձահա-
տոյց լինելոյ Պուպլիոսի սիւրացւոյ (կի-
ասորւոյ՝) դիմամրգանակին Լաբերիոսի։
Բայց և այնպէս Կեսար ոչ զանց առնէր
վարձա-

վարձատրել և այնմ՝ զոր բռնադատեայ ցածնուլ յանարգութիւն ։ Պարգևեաց նմա իսկ և իսկ ոսկի մատանի , որպէս թէ ’ի դարձուցանել զնա ’ի կարգ ասպետաց. և վարձս ինչ հինգ հարիւր հազար սեստերտաց ։

Տաբերիոս յելանելն ’ի խաղետղէ՝ պատրաստեցաւ երթալ նստիլ յիւր տեղի ընդ ասպետս հռովմայեցիս ։ Այնք որք համարէին կրկին անպատուութիւն մտ իւրեանց, թէ միոյն ’ի դասակարգէ իւրեանց պտաւորեսցի ելանել ’ի խաղետղ, և յետ խաղալոյ դառնալ նստիլ կամիցի ընդ իւրեանս , այնպէս նստան՝ որ վասն նր այլ ոչ թողին տեղի ։ Տաբերիոս ձիգն դնէր անցանել ընդ նստարանս ծերունեաց՝ առ հասանելոյ ’ի նստարանս ասպետաց. Ակիկերոն՝ որում մօտ գտաւ, տեսեալ զնա փոքր մի նեղեալ՝ ասէ. Ետու տայի տեղ տեղի, Եթէ ոչ ճարի ’ի նեղ ճայի։ Ակիկերոնի միտ էր ծաղր առնել զՏաբերիոս, և կըծանել ևս զբազմութիւն նորոց ծերունեաց կարգելոց ’ի Կեսարէ առանց ինչ ընտրութեան, և առանց ինչ միտ դնելոյ կանոնաց և պատշաճողութեան. Օայրացել բանաստեղծին՝ եւ պատասխանի

Ակիւերոնի կարի իմն կծանող. Օտարմա-ցուցանէր զնա ասէ, որովհետեւ ոռոգէր եւ նաւէլ մէջ մեծագահոյն յերկրաս ոստոս, Յայտարարութիւն էր այս տապակաւոր, որ նշանակէր առ Հռովմայեցիս զայն՝ զոր այժմ ասեմք, լողէր յերկրոս Զորս. Ժ̃ է՝ 'ի ծովին կայ յերկուս կողմանս. Նոյնու օրինակաւ Լաբերիոս 'ի դէմս ածէր Ակիւերոնի, թէ չհետ երթեալ երբեմն Պոմպէոսի եւ երբեմն Կեսարու, չեկաց հաւատարիմ բարեկամ, ոչ միում եւ ոչ միւսում.

Ժ̃. Ռետովլիանոս ուղեգիրն Կեսարու՝ որ նուէրս Օգոստոս՝ ոչ էառն իւր օրատուք Լեզին ածել պէշխանութեան.

'Ի փոփոխիլ ժամանակաց յետ սպանութեան Կեսարու՝ որդեգրեալն 'ի նմանէ մանուկն Օկտավիանոս Օգոստոս էր տակաւին տասն եւ ինն ամաց, յորժամ ունէր Ը̃ ձեռամբ իւրով զօրութն Լեգէոնս որք էին համակ 'ի հինաւորց զօրականաց Կեսարու. յորոց առաքեաց զչորեքհարիւրս 'ի Հռովմ ոմն պատգամաւորս առ Ծերակոյտն, խնդրել զվճար հինգ հազար դենարաց՝ որ խոստ-

է տա-

տացեալն էր նոցա, և զյառաջաշարժութիւն զօրագլխի իւրեանց 'ի պատիւ հիւպատոսութեան։

Սերակոյտն՝ թէպէտ և հաւան էր ընդ վճարումն փոքու զօրուն, բայց չկամէր և ոչ ունէին ժամուցանել խնդրոյ հիւպատոսութե վասն Սկիպիոնի, առաջի արարեալ յաւէտ զիւր նորահաս տիս. . . և որոյ պատճառանօք՝ պատրուակէր զայլ պատճառանս չկամութեան հիւպատոս լինելոյ Սկիպիոնի, եկաց յամառ 'ի զլանալ. Յայնժամ Կոռնելիոս հարիւրապետ՝ գլուխ պատգամաւորաց եկ 'ի ժողովս, և արկեալ ըղձեռն 'ի դաստակն սուսերի՝ դարձաւ 'ի ծերակոյտն և ասէ. „Եթէ զհիւպա-
„տոսութիւնն չտայք դուք խմում զօ-
„րագլխի, ահաւասիկ սա տայ նմա”. Առ որ Կիկերոն ետ պատասխանի՝ զտոյգն 'ի ծաղր փոխարկեն՝ ըստ իւրում սովորութե.
„Եւ թէ դու այդպէս խնդրես զհիւ-
„պատոսութիւն վասն Սկիպիոնի, ընդունելով ընկալցիս”.

Պնդումն նորահաս զօրագլխին՝ այդ իսկ էր. տեսեալ զիւր զօրականս 'ի բարկութիւն բրդեալ 'ի զլանալոյ ծերակոյտին, ջանացաւ բորբոքել ևս

զնո-

չնորդայն ցասուցն, և 'ի նոցանէ դրդե-
ցեալ արկանել՝ բուռն յափշտակելոյ
զոր ոչն կամէին շնորհել մատղեր.
Նոյն օրինակաւ տեղի տուեալ այս-
պիսում քաջըն բռնութեան՝ անց ընդ
Ռուբիկոն գետ, անուն դառնայէտ 'ի
քաղաքական պատերազմունս Կեսարու.
և ուժ լէգէոնսք խաղաց 'ի մէջ Հռ-
ովմայ.

Ծերակոյտն առ այս լուր խռո-
վեցաւ. Մլուր յուշ արարի՝ թէ չէր
անկանելեալ անդրդուութիւն յՍինկերուէ
ինչ՝ որում 'ի մէջ կայ սախպող վտանգ,
և յայտնի օրինակ է այսմ՝ ձախող գնացք՝
զոր կալաւ ծերակոյտն յայսմ նուագի.
Առաջին շարժումն եղև նոցա դիմանել
ամբի նորահաս զօրագլխին և զօրակա-
նացն. ուստի պատուէր տուաւ դի բաշ-
խեսցի հինգ հազար դենար ըստ մար-
դաթուի, որ բազում ժամանակաւ յա-
ռաջ խոստացեալն էր զօրուն. Նոյնժամն
եղև այս Ովտավիանոսի միայնոյ, որում
խոստացան և հնազանդութիւն: Բայց այն
ինչ մեկնեցան պատգամաւորք տանել
առ նա զվճիռն, ծերունիք մողադրեցին
անձանց՝ զերկչոտութիւն իւրեանց. և
'ի հասանել երկուց Լէգէոնաց յայնժամ

'է

՚ի դէպ պահու յՄծբինայ՝ անդրէն քա-
ջալերեցան, կարծեալ երկոքումբք սոքօք
և երրորդաւ թողեցելով ՚ի Պանսայէ
՚ի պահպանութի քաղաքին, կարող լինել
պատսպարել ՚ի զօրուէն՝ որ մերձենայր։
Եդին գունդս ՚ի լեառնն յՄնիկուլոն,
ուր էին յաւանդի փոքր հասարակա-
պետութեան. և զօրացուցին զկամուրջն՝
որ ունէր հաղորդութիւն յՄնիկուլայ
մինչ ՚ի քաղաքն։ Իսկ այն որում անձկայրն
Ենա, էր զբռամբ ունել զմայր և զքոյր
Սկոտավիանոսի, զի այսպիսի պատանդօք
՚ի ձեռին՝ զամենայն հնար էր նոցա
ընդունիլ ՚ի նորահաստակ զօրագլխէն։
Բայց ստուս այնպիսի զգուշաւորութ~
ծածկեցին ՚ի բարեկամաց նորա, որ չեղև
հնար նոցա իմանալ զտեղին՝ ուր եդան
յապահովի։

Ամենայն վայրագութ~ և համար-
ձակութ~ ծերունեաց իսկ և իսկ ցածեա-
՚ի հասանել Սկոտավիանոսի։ Նա զգուշա-
ցեալ էր իմաստնապէս՝ առաքել յառա-
ջագոյն հեծեալս՝ յայս առնել, զի մի
որք ահաբեկ լիցի՝ թէ գայ նա առնել
թշնամութիւն ՚ի քաղաքի։ Նաուսիկա-
պահովութ~ ժողովուրդն եկաց հանդար-
տեալ, և երեք լէգէոնք իսկ Օներակա-
ւին՝

տին՝ որք ո՛չ այնպէս ջերմ միտեալ էին ՚ի գատ սոցա, և որք Թերևս խորհէին իսկ յուրեանս՝ շրջել դկողմն. ոմն արարին յետ սակաւ միոյ, ոչ ձգեցին և ոչ ձեռն՚ի սուր մերկանսյ. մինչ դե ՚ի գալ Ոկտավեանոսի բանակին ՚ի սորոտ Կուիրինալ լերին, մի քան զմի աճապարէին գնալ առ նա յուրախակցութի։ Նա հասարակ ընթանային անդր գունդ գունդ, ոչ միայն ժողովրդականք, այլ և բազումք ՚ի գլխաւորց Ծերակուտին։ Ի վաղիւ անդր քաջ պահպանութեամբ եմուտ ՚ի Հռոմ, ընկալեալ ՚ի բազմութե̃ ձայնիւ ցնծութեան. Կատարեաց յառաջ քան զամենայն երթալ ՚ի մեհեան Վեստայի, ուր գիտէր Թէ էին մայր իւր և քոյր։

Յանժամ երեք լեգէոնք մնին է̃ հնազանդութեամբ նր̃. Ուստի Ծերակուտին կորուսեալ զամենայն յոյս՝ եմուտ է̃ օրինօք Հզօրագունին. Կորնոտոս միայն պրետոր քաղաքին՝ յուսահատեալ չոքաւ զլուծովն։ Նայք չորքան խոնարհելոյնմ՝ զոր բաղդն տիրացոյց վիճակենոցա. Ն̃ ալխտոյ եղև Կիկերոնի իսկ յանձն առնուլ զայս դժուարին ցածութիւն, խոստիւ կշտամբեալ յՈկտաւիանոսէ վասն այսորիկ, զի յուրոց բարեկամաց

կամաց միջի յեռանորդ գտաւ երթալ
'ի շնորհաւորութիւն.

ՃԺ. Տաղ Եւ 'ի Տաղից Մերկելլոսի —
Օգոստոս կեսար և — Անտոնիոս.

Աստի Օգոստոս քաջայաղթ Կեսար,
կայր համբերատակել 'ի խել բըրձրածայր·
Զազգն Իտալական վարէր 'ի գուպար,
ընդ ժողովըն է, Հարցն՝ ընդ է Դից գունդ·
Իսկ 'ի հանդիպոյ Անտոն յաղթական,
յոքունց մրցանաց զօրօք խուժական.
Ածէ 'ի յազգաց Ալից Արփական,
մինչ 'ի ծովափնեայց ծոցոյն Երիթրեան
Զեգիպտոս և զզօր Արեւդդէմ վայրաց,
նոյն և զԲակտրա 'ի վերջին ծագաց.
Եւ զԵգիպտուհին՝ (ամօթ երեսաց,)
զանարգ զուգակից զհետ իւր շաւղաց·
Անտի Ագրիպպա մղէր զնաւակ,
և հողմք և Աստուածք նմին օժանդակ.
Որոյ ցըռկազարդ ճաճանչէ դիտակ,
'ի պըսակ նաւեան՝ 'ի պերճ մրցանակ.

ՃԻ. Սիտաղեանոս անմահացուցանէ զեղ մի եւրոյ
եղանակաւ, զի եղեն նմա բարեկամաչ.

Ընդ այգն ընդ առաւօտն՝ յո-
րում.

ժամ ելանէր յիւրմէ բանակէ երթալ տալ պատերազմ ընդ Անտոնիոսի, պատահեալ իշավարի ումեք եհարց զանուն նորա և զանուն գրաստու նորին. Ասէ իշավարն. անուն իմ է Եւտիքոս, որ թարգմանի բարեբախտ. և իմ էշ կոչի Նիկոն, որ նշանակէ յաղթող. Կուցէ թէ դիպուած էր լոկ պատահական իմն, կամ քաղաքավարական գիւտ Օկտաւիանոսի՝ 'ի քաջալերել զիւր զօրականս. ոպ̃ և իցէ, պարտ անձին վարկաւ պահել զայսոսիկ յիշատակ. և կանգնեաց 'ի Նիկոպօլիս երկուս արձանս՝ որք երևեցուցանէին զէշն և զիշավարն.

## ԺԶ. ԱՆՃԱՌ ՃՈԽՈՒԹԻՒՆ ԶՕՐՈՒ ԷԱՌ ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍԵՐԱԳՈՒՆԷ.

Եգիպտոս լինէր վասն յաղթութեան եղելոյ 'ի վերայ Կղէոպատրայ երկիր ստացական, և գաւառ Հռովմէական. Օկտաւիանոս իրաւամբք յաղթականութեան էառ անտի անբաւ գումար. Պալատն թագաւորական լի էր շեղջաշեղջ ճոխութեամբք, զորս Կղէոպատրայ ևս յորդեալ էր իւրովք յափշտակութեամբք, և առաւել կապտութեամբ

'ի

՚ի մեհենաց ամենայնի որ ինչ կայր ՚ի նոսա մեծապաճանձ. Բաւականութիւնն այսց սեղանակապտութեանց մնաց Աղէքսանդրայ, և օգուտն Ոկտաւիանոսի.

՚Ի վր̅ ամի՝ Հռովմ հարստացաւ, և իւր մեհեանք զարդարեցան աւարօք Եգիպտոսի. Յոչինչ երաց այնպէս լաւագոյն իմանամք զանշամփուռ փողոց ՚ի պարտութենէ Եգիպտոսի սփռեալոց ՚ի Հռովմ, որպէս ՚ի փոփոխումն ծագելոյ ՚ի տուր և առս նորա. Կալուածոց կըրկնապատկեցին գինք. և շահ փողոյ ՚ի հըրապարակի իջուցաւ յերիր մասն, և յերկոտասանէ ցածեաւ ՚ի չորս առ հարիւր.

ԼԷ. Ոկտաւիանոս այց առնէ շիրմի Աղեքսանդրի.

՚Ի ժամանակի յորժամ էր Ոկտաւիանոս յԱղէքսանդրիա յայց եկ շիրմի Աղէքսանդրի մեծի և ձեռն հասոյց ՚ի մարմին իսկ նորա՝ զոր համարի Դիոն արարեալ յայս սակս, զի տեսցէ թէ ծագընչայն՝ յոր ձգեաց զձեռն, փշրեցին ը̄ն մատամբք իւրովք. Վկայութիւնք յարգի՝ զորս եգոյց նա առ մարմին այսր ծաղկալի, ծաղիկքն զորս էարկ ՚ի վր̅ գերեզմանին նր̅, և պսակն՝ որով զարդարեաց զնա, են առաւել.

տուարկայք՝ յիշխանից արժանագոյնք։ Այսմ եղև ցուցանել նմա և զշիրիմս Պտղոմեանց։ Բայց ինքն մերժեաց զառաջարկութիւն ասելով. ես հետաքնին էի տեսանել զթագաւոր ոք, և ոչ եթէ զմեռեալս։ Հրաժարեաց նա ճշգրտագոյն և իմաստնագոյն ևս աստուածով 'ի տեսանելոյ զԱպիսն, (չաստուած Եգիպտացւոց,) յորոյ հրաւիրեցաւ յայցելութիւն. ասէ. ,,Իմ սովորութիւն է պաշտել զդիս, և ոչ զԵզն։

## ԶԵ. Պատրաստէ Կեսար պատերազմել ընդ Պարթևաց։

Կեսարու հազիւ ցերծեալ 'ի քաղաքական պատերազմաց՝ կայր վաստակարեկ 'ի պարապորդութեան։ Ունել-վասն մեծամեծ իրաց և զակատել զհետ փառաց, բազմապատիկ բարեդիպութեանց փոխանակ յորդորելոյ զնա 'ի վայելս արդասեաց իւրոց ճգանց, լինէին նմա մանաւանդ խթան սրտապնդել զնա յամե 'ի ձեռնարկ մեծ ևս իրողութեանց։ Այելք փառաց՝ յորս առ ժամն վայելէր, իսկ և իսկ շիջեալք՝ հարկէին զնա 'ի խնդիր լինել նորանոր վայելմանց. նախանձաբեկ լեալ ընդ իւրոյին անձն՝

որպէս

որպէս սովորութիւն է լինել առ․ ծառայութեան, անյագ ըղձանայր միշտ աղօտացուցանել զիւր անցեալ փառս՝ և փաղփղիւնալոյս փառօք հանդերձելովք․

Այս շարժառիթք․ (որք քան զ ա-ծեալ զմտաւ՝ անհնարաւոր առնեն դոհ լինել զանձինս, և ցուցանեն ոչ այնչափ զմեծանձնութիւն այնորիկ՝ զոր մերն 'ի գործել, այլ զգաստարկութիւն ամենայն մարդկային բարեաց,) ազդեցին 'ի Կեսար՝ երթալ մարտ դնել ընդ Պարթևս։ Այնպէս զի իւր առողջութիւն իսկ էր անմխիթար 'ի գործառնութեան, 'ի շարժմանս և 'ի շկահիւն զինուց, որ 'ի ժամանակի հանդարտութեան էր տկար և թալացեալ․

ՂԶ․ Բրուտոս ասէ

Ամ յաղթութիւնք դարձուցին զ Հայրենիս զազատութիւն․ կամ 'ի մեռանել իմում արձակեցայց 'ի ծառայութենէ․ Մե՛կ ոչինչ վտանգ ահաւոր է մեզ։ Տեսանեմք զմեր վիճակ անքոյթ․ մի միայն անստուգութիւն որ մնայ մեզ՝ է գիտել, կեցցեմք արդեօք ազատ, թէ տարցուք զազատութիւն մեր 'ի գերեզմանս․

Անձն․

ՃԺԱ. Աշխարհն է, որ արքենալ անմարդաբնակն անմարդանայ 'ի ջրէ·

Որ օրինակ թէ ոք ձող վիրաւորելով ընկերէն կարծիցէ ազդել լզ-խոցուածոյն. և նա՝ որ ոչ հարկանի ը վայրապար հարուածս օդոյն դժուարի. և այսպիսի սնոտեօք 'ի թշնամուէ յարուցեալ՝ ոչինչ մեծամեծս գործեսցեն·
Լամբրոնացի Յովհաննու Ոսկեբերանին.

ՃԺԲ. Աշխարհն է բոյն պատուոյ ունելի շուքի·

Սպրդեաց նմատ երբեմն հակառակութիւն 'ի մէջ Շիպիոնի և Վարոսի. զի երկրորդս այս պատուասիրելով Հռովմայեցի, ոչ կամէր տեղի տալ այլում՝ չնչին պատճառանօք, թէ ինքն բազում ժամանակաւ յառաջ գլուխ էր զօրավարին. և Յուբաս թագւոր իւրով զօրութեամբ և խուժադուժ պերճութեամբ ձնշէր զերկոսին նս։ Առաջարկութիւն Կատոնի փոքր 'ի շատէ դեղ էր այսոց անկարգութեանց։ Պիտոյ սա ուսուցանել Յուբասայ՝ ակն ածել փառաց և գերակայութեան անուանն հռովմէականի. Նա յառաջնում տեսաւորութեան իւր-

իւրեանց՝ երբեւ կալաւ իշխանն նումի-դացի զգերագահ տեղի 'ի մէջ Սկիպիոնի և Կատոնի, այս յոխորտ հռովմայեցի փոխադրեց անձամբ զիւր աթոռ, Սկիպիոնի տալով զմիջին տեղի 'ի մէջ իւր և արքայի։ Բայց և այնմ այս խրատ չեղև բաւական, ոչ 'ի խրատել զՅուբաս և ոչ առ ազդել Սկիպիոնի իմաստս ըստ արժանի իւրում աստիճանի։

ԺԹ. Գովէ Բրուտոս զարիութիւն Մարկեղոսի կամաւորականին աքսորելոյ.

,,Տեսի՝ ասէ, զՄարկեղոս յիւր ,,աքսորանս Միտիլինեայ, զի վայելէր ,,ամենայնիւ յերջանկութեան զոր տա-,,նելի մարդկեղէն բնութեանս, և նա ,,քան զևս խանդակաթեալ 'ի գեղեցիկ ,,ծանօթութիւնս. Մինչև 'ի մեկնել ի-,,մում 'ի նմանէ, ոչ թէ կարծէի թո-,,ղուլ զաքսորեալ ոք, այլ կարծէի ես ,,ինքն գնալ յաքսորս''. Զայս գով արժանի յիշատակաց պատճեաց մեզ Սենեկա. որ և գոչէ ընդ սմին.
,,Բանիցն իցեն փառք Մարկեղոսի, որ ,,յիւր աքսորս նախանձ արկ Բրուտոսի, ,,և ամաչեցոյց զԿեսար. Երկաքանչիւրն

եսառ

„ետուն նմա վկայութիւն պանծալի”։

### Ճ. Համառօտ եղանակ մահուան Կատոնի՝ Ղէ-բոմէ Գնոյելոյ։

Ա.յն ինչ Կեսար չոքաւ նուաճել զՈւտիկէ, որ չլինէր ինչ դիւրառիկ, եթէ Կատոնի գտեալ էր 'ի նմա սիրտս արիականս և պատրաստականս յիւր աջակցութիւն, յայնժամ Կատոն հնար հնարեալ, և յատեան ժողովեալ զԵրիս հարիւրսն, այսինքն զամենայն մեծատուն վաճառականս, կամ զկապալառուս հռովմայեցին՝ որք էին յՈւտիկէ, յորոց կառուցեալ էր նորա որպէս թէ ազգ ինչ ծերակուտի՝ յորմէ հետէ մտեալ էր յայն քաղաք։ Յետ բազում անցից և խօսից եբաց նոցա զմիտս իւր, որ հաստատեալ էր 'ի մեռանիլ. վասն այսորիկ աղերս արկին նոքա, զի թէ ինքեանք չէին հաւասար Կատոնի, և ոչ իմաստք իւրեանց վսեմականք իբրև զիւրն, գէթ լիցի կարեկից 'ի տկարութիւն իւրեանց։ Ա.պա 'ի վեր բերեն, թէ մեր հաստատեալ է 'ի միտս առաքել պատգամաւորս առ Կեսար, և յողաք խոնարհել գթութեան նորա։ Ա.յլ մեր առաջին և գլխաւոր առար-

տուարկայ Հայցուածոց եղիցի Կատոն․ և թէ անկարանամք ընդունել ապահո-վութիւն վասն քո, չընդունիմք զշնորհսն՝ զոր տուաջի արասցէ մեզ, և ՚ի պատե-րազմ ձեռնարկեմք յայնժամ ՚ի պաշտ-պանութիւն քո ցյետսին շունչ․ Կատոն մկայութիւն եդ շնորհ ունել զբարեսէր կամաց նորա, գովեաց զխոստումն՝ զոր ունէին հնազանդ լինել յաղթականին, և յորդորեաց ևս չյապաղել․ բայց արգել՝ զի մի ինչ արասցեն զիւրմէ զրոյց։ Ասէ․
,,Պատուելոյ անկ է յողոք խոնարհել, և
,,յանցաւորաց՝ խնդրել ներումն։ Յիմէ
,,կողմանէ ես անյաղթ գտայ զամ ժա-
,,մանակս կենաց իմոց․ և արդ իսկ եմ
,,յաղթական, զի բղձանայի գէթ լինել
,,Յաղթանակեմ Կեսարու բարձրութ̃
,,արդարութեան և իրաւանց․ Սա ինքն
,,է պարտեալ և նկուն․ զի որ յամենայնի
,,ժխտեաց նենգել Հայրենեաց, այսօր
,,յայտնապէս գտաւ յանցաւոր արդ-
,,եամբք''.

Յետ այսորիկ եմուտ ՚ի բաղանիս և յետ բաղանեաց ընթրեաց նա բազ-մութեամբ իւրոց ամենայն բարեկամաց և իշխանաւորաց Ուտիկեայ․ Յորոց ոմն ՚ի մէջ արկ հրաշագրոյց առածս, Ստոյիկեանն

է միայն ազատ. ամենայն մոլիք են գերիք.
Յայսց բանից և յայլ սոյնպիսեաց՝ ամէն
յայտնի երևի թէ Կատոն կամի գնալ
զիւրովն, թէ և նա ծամածռէր պէսպէս
բանիւք օտարացուցանել 'ի նոցանէ զայս
հաստատուն կարծիս: Զի յետ բազում
խոստակցութեանց վասն այսր Ե որդւոյ
իւրում և ընդ իւրոց բարեկամաց իւրև
մեկնեցան նոքա և ինքն մնաց միայն յիւրում
սենեկին. 'ի ժամ հաւախօսի խնդրեաց
'ի ստրկաց իւրոց զսուր իւր, և մերկեալ
զայն 'ի պատենից. և տեսեալ զի սայր
նր էր քաջուղղորդ և սուր, ասէ. Այժմ
տէր եմ անձին իմոյ: Նա խոցեաց զինքն նո-
նաւ վերք մի 'ի ստորէ կրծոց. բայց բըռ-
նութի հարուածոյն նուաղեաց 'ի տկա-
րութենէ ձեռինն՝ որ դեռ էր այտուց-
եալ և ցաւագին: Նա ոչ մեռաւ իսկ
և իսկ, և թաւալեալ յիւրում մահճի
անկաւ 'ի գետին, և յանկանիլ իւրում
շրջեաց ստնակիտ մի, յորոյ վերայ նկարէր
զձևս երկրաչափութեան: Նոր թնդիւն
իւրոյ անկմանն ձիչ բարձին իւր ընտանիք.
և որդի իւր և բարեկամք 'ի ներքս ըն-
թացան. Գտին զնա թաւալեալ յիւրում
արեան, և աղէք նր յորովայնէ 'ի դուրս
վայթեալ ընդ վիրաբերանն: Բայց և

այնմ

այնպէս դեռ կենդանի էր նա և տեսանէր. Մաղեաց վիրաբոյժն, և տեսեալ թէ աղիքն չէին ինչ վնասեալ, կամէր դարձուցանել 'ի ներքս, և կարել զվիրաբերանն. Բայց երբև զգաստացաւ Կատոն, և եհաս 'ի վեր՝ թէ գուն գործեն օգնել նմա, մերժեաց զվիրաբոյժն այնպէս գաղտնաբար, զոր պատմել անգամ է սոսկալի. տարաւ զձեռսն 'ի վիրաբերանն՝ եբաց անդրէն, և պատառոտեալ զաղիսն՝ վիժեաց զոգի.

Այսպէս եղև մահ Կատոնի՝ զոր ամենայն հինք ներբողեցին, այլ 'ի սկզբանց մերոց սրբ̃ կրօնի դատապարտի. և քանզի իսկ ոչ կարէ տալ այնմ հաւանութիւն . . . զի սպանութիւն անձին է յանցաւորութիւն.

Երբև այդ եղև Կեսարու մահ Կատոնի, գոչեաց. Ո՜վ Կատոն. նախանձիմ ընդ փառս մահուդ քո, զի դու նախանձեցար ընդ փառս իմ ապրեցուցանելոյ զկեանս քո.

ՁԵ. Մասն ինչ յատենաբանութենէ Կիկերոնի՝ զոր արար նա աղերսարկութեամբ առ Կեսարու զի ներեսցէ յանցանաց Լիգարեայ դարձուցանել զնա յաքսորանաց.

Նա խօսիմ առ հայր. Յանցաւոր
է եմ

եմ ես. անմտութեամբ գործեցի. արդ ՚ի քաղցրութիւն քո դիմեմ, և աղաչեմ ների՛լ ինձ. Թէ չէր ուրուք շնորհս գտեալ ՚ի քէն յանդգնութիւն լինէր արդեօք ՚ի խնդրուածս իմ. Բայց թէ գթացար առ բազումս, ապա դու ինքն ես՝ որ զարթուցեր յիս զյոյս. Ապա տուր ինձ վայելել ՚ի պտղոյ այտի.

ԾԲ. Պղնձեցին պատասխանի Ակկերոնի իւրոյ բարեկամոյ.

Ակկերոն սուգ առեալ վասն հայրենեաց ընդ երկար և դառնապէս՝ քան զմայր ՚ի վերայ միամօր որդւոյ՝ մխիթարեցաւ, և արկաւ ևս զիւրեան փոքր մի յառաջին զուարթամտութենէն. Նա՛ երբեմն յիւր թուղթս ընդ խաղ արկանէր զիւր արդեան վիճակ.

Այն ՚ի բարեկամաց իւրոց՝ այր զուարթաբարոյ և քաջուսումն՝ ստգտանէր զնա, զի այլ ոչ նստէր ՚ի ճաշումն. Պատասխանի ետ նմա Ակկերոն. „Զձանաչեմ ուրեմն զինչ է մէջ է իմոյ այժմեան վիճակի, և վիճակին՝ յոր երբեմն „էի. Նստէի ես երբեմն ՚ի խելս նաւին „և ղեկավարէի. այսօր հազիւ գտանեմ

,,տեղի 'ի յաստուածային նաւին։ Մործիցեմ
,,թէ պակաս եղիցին խորհուրդք ծե-
,,րակուտականք, ցորչափ եմ 'ի Նէա-
,,պօլիս նստիցիմ. Մճիոք ծերակուտին
,,լինելին 'ի սենեկի անդ Կեսարու, և յոր-
,,ժամ յուշ լինի նոցա իմ անուն, լինի
,,ինչ յիշատակութիւն զինէն 'ի սորոսա
,,վճռոյն. և յոլովակի իմանամ, զի խոր-
,,հուրդ ինչ ծերակուտին յօրինեալ է
,,ի նոյ կարծեաց՝ եհաս 'ի Հայաստան
,,և 'ի Մուրքիա, մինչև լուեալ էր իմ
,,ասել ինչ զնոյն զիրողութենէն՝ որ
,,վճռեցաւ''.

Իւր աշակերտք հրաւիրէին զնա
ստէպ ընթրել ընդ իւրեանս. և այն եւ
սմա առիթ զբօսնուցանելոյ զնոսա զո-
ւարթութեամբք։ ,,Ոչ յառաւելութենէ
,, (ասէ) զոր ես քաղեմ յիմոց դատա-
,,տուութեանց առ մեր յաղթականն, են
,,մայրեալք փառնակաճաշակ սեղանոց նցա.
,,Յայնմ օրէ և այսր ճաշակեցի ես ա-
,,ւելի սիրամարգս՝ քան դու ձագս ա-
,,ղաւնեաց. Այժմ այլ շունին տեղի
,,դոմէստքն՝ զոր սովոր էիր երբեմն
,,քարքառիլ զինէն. ով դիւրասնունդ
,,տանս. ով աննեղացուցիչ հիւրիս։
,,Ես ոչ ևս եմ այն իմաստասէր գոր-
,,ծուննեայ,

„ծունեայ, որ կարծէի՛ թէ գլխովին „պարապիլ ունիմ 'ի հոգս իրողուեց „հասարակաց, և 'ի ծառայութիւն իմոց „քաղաքակցաց ։ Նա ոչ հոգամ, ոչ „պատրաստել զիս՛ զի՞նչ աժելոց իցեմ „'ի ծերականութի, և ոչ 'ի միտ առնուլ „զդատս ։ Արդ լքեալ է իմ գլխիմ բա- „րոյականն, և անցեալ 'ի բանակ Էպի- „կուրոսի, որոյ ընդդէմ երբեմն վիճէի”.

ԺԳ. Դաւաճանութիւն պատանւոյն Լեպի-
դոսի՝ ըստ [illegible] Սենեկայ.

Որդի Լեպիդոսի պատանի երան-դուն և բարկացող՝ արարեալ էր դա-ւակցութիւն սպանանել զՕկտաւիանոս։ Յանդգնութիւն պատանւոյս դաւադրէ ոչ յաջողեաց ընդ առ 'իմաստակարա-րելոյ նմա զայնս։ Որ կամէր այնու ըս-պանութեամբ լինել քինահատոյց հօր իւրում ընկեցելոյ յաստիճանէ հիւպա-տոսութեան։ Մեղադրանն կալանաւո-րեցաւ, պարտաւորեցաւ և 'ի մահ մա-րեցաւ։ Սերվիլիա կին նորա կամի ու-ղեկից լինել 'ի գերեզման մեռեալին կա-թոգին սիրեցելոյ յիւրմէ, և յաջողեալ ըզ պաշտպանութեան իւրոյ ընտանեաց յան-ձնելով

նելով նա ինչ երկաթ 'ի ձեռին, եղև
հեղձամուղձ՝ կլանելով վառեալ կայ-
ծակունս։

Այր դաւադրին Յունիա քոյր Բը-
րուտոսի ըմբռնեցաւ 'ի փուրշէշ անդր
յանցաւորութեան որդւոյ իւրոյ։ Մե-
կենաս կամէր առաքել զնա առ Ակտա-
վիանոս՝ զի դատեսցի 'ի նմանէ. կն̃ դէթ
կամք էին նորա, զի այս կին տացէ ե-
րաշխաւորութիւն, թէ յանդիման լինել
ունի՝ երբ և խնդրեսցի։ Ո՛չ է այս 'ի
մեծաց օրինակաց յեղափոխութեան և
յողդողդութեան մարդկային իրողութեց։
Հիւպատոսն՝ որոյ առաջի ընծայեցաւ
այս դէպ, և որ հրամայել ունէր իշխա-
նաքար՝ էր տարագիր ոմն, զոր Ապպիա-
նոս անուանէ Բալբինոս։ Լեպիդոս ծեր՝
երբեմն մի յերից հրամանատուաց տա-
րագրուե, ետես զանձն բռնադատեալ
յաղերս պաշտպանութեան այսր հիւ-
պատոսի. զի իւր յարգ այնպէս անկեալ
էր, և այնմ̃ 'ի մոռացօնս եղեալ, մինչև
չգտանել զոք՝ որ յանձն առնուցու ե-
րաշխաւորել վն̃ կնոջ նր̃։ Այս յանդիման
եղև յոլովակի առ դրան Բալբինոսի,
այլ ոչ կարողացաւ մուտ առնել. զի
երբև կամէր մտանել յատեան նր̃, դա-

հճք

հիւծք 'ի բաց վանէին զնա։ Հուսկ ուրեմն եմուտ նա և խօսեցաւ ընդ Բալբինոսի համառօտիւ զայս։ „Ամբաստանողք իսկ „ճանաչեն զիմ անմեղութի, և ոչ ստգտա-„նեն զիս՝ մեղսակից լինել կնոջ իմոյ և „որդւոյ իմոյ։ Իսկ 'ի քո կողմանէ, ոչ ես „ինքն էի՝ որ զքեզ տարագրեցի. և արդ-„ատեսանեմ զիս առ ժամս ստորեւ քան „զքեզ՝ զորս ես ինքն տարագրեցի եր-„բեմն։ Ապա յոյժ լիցին քեզ յաղթո-„ղութիւնք բախտի՝ որոց մարդիկ են „ներքոյ անկեալ։ Հայեաց 'ի Լեպիդոս՝ „որ քո առաջի անկեալ աղաչէ, և դո-„րուցեալ 'ի տեսարանէս. կամ ընկալ „զիս յերաշխի վն իմոյ հարսին, կամ „առաքեա զիս ը̃ նմա ձեռօք և ոտիւք „կապեալովք առ Կեսար"։ Հիւպատոսին զաւարեցան աղիք. և զեղծ արար զՅու-նիա 'ի պարտաւորութենէ տալոյ զոր յերաշխեն.

ԺԸ. Օգտակարութիւն և երջանկութիւն Կիկերոնի.

Պերճախօսութիւն Կիկերոնի ընդ-դէմ եռապետական դաշնակցութեան էր ծայրագոյն. Այլ հարկիւ հովացու-ցանէր

ցանէր զքիրտ իւր անպիտան ողջունք,
զոր հասուցանէր առ Ատտիկոս յամե-
նայն թուղթս իւր։ Մէջ դու տես, որով
օրինակաւ խօսի Կիկերոն 'ի մի իւրացս
ընդ նմա. „Գնալ յառաջ՝ ասէ, է դի-
„մել 'ի գահավիժութի. մնաս ընկրկել՝
„է յողդողդութի. Կեսար թշնամացեալ է
„բարեաց, և չէ իսկ սիրելի վատթրաց.
„Տեսէք, քանի՞ոն իցէ իմ անկարութիւն.
„ո՞չ կարէի ժուժալ 'ի լալոյ, 'ի տեսա-
„նել իմումը թէ չէ յորդոր ականկալուե՝
„այլ ցաւոց, տեսանել զկեղուս մերոց
„քաղաքացւոց աղատս, և զբաղուկս նց
„'ի շղթայս։ Համարակապետութիւնն
„(ասէ) դիմեալ երթայ 'ի մահ՝ յախտէ
„ինչ, որոյ չէք ճանանակ. Այժմեան
„կառավարութիւն յինքն առարկանէ
„զանհաւանութիւն, զգանդատ և զտըր-
„տմունջ ամ ցի. Այսմ չէք էտիր.
„խօսին զնմանէ բարձրաձայն, յոգւոց
„հանեն յայտնապէս. բայց չկայ ոք՝ որ
„դնէ՞ մատուցանէ այսց չարեաց յորոց
„նեղիմքս''։ Համաձայնիցայ բոլորովին 'ի
հոգւոց հրապարակական իրողութեանց.
ոչ գտանեմ առաջիկայ 'ի կշռութեան
իրիք, այլ եւս զնչն իմ բոլորովին 'ի
խօսիլ զգաստս, „Օչ տաղտկացեալ եմ

„'ի

,, ՚ի կենացս՝ տեսեալ զայն խռկեալ Թշ-
,, ուառ ուրեք· չկայ յաշխարհի այլ քան զիս
,, Թշուառ : Օլի առ Պոմպէոս դեսպա-
սանեն. Ահա մեր դժբախտութեան Անծայրա-
գոյն. Իբր այս, թէ եղեւ օր՝ յորում շոյ-
ցեալ դատապարտեց զայդ արտաքսութեան խնջութեան,
որ եղեւ ցայս վայր տեղ ՚ի փառս, և արդ
լքանէ զտեղ: Կիկերոնի տեսեալ՝ թէ զամ
քան ըզգամ վտանգք Ճշդրտէին, փութա-
ցուցանէր զՊոմպէոս գալ առ ինքն:
Ասէ. ,, թէ սիրես զիս՝ ոչ սոտուգութ̄ իսկ
,, սիրես, ցոյց զայդ՝ փութանակի եկա-
,, ւորութ̄դ առ իս. Թէ ննջես՝ զարթիր·
,, թէ արթուն ես՝ եկ ՚ի Ճանապարհ·
,, թէ ՚ի Ճանապարհի ես՝ ընթա՛·թէ ըն-
,, թանաս՝ ո՛չ շատ է այդ, և թռի՛ր·Ո՛չ
,, գիտես՝ քանի՞ յուսացեալ եմ ՚ի քոյդ
,, խորհուրդ, ՚ի քոյդ խոհեմութ̄ի, և ես
,, առաւել ՚ի քոյդ բարեկամութիւն, և
,, ՚ի հաւատարմութիւն''.

ՃԺ. Բան Դիոգինեայ առ Մ. Աղեքսանդր.

Դիոգինէս փիլիսոփայն չունէր իւր մասնաւոր տուն բնակութեան, այլ գտեալ կարաս մի մեծ անդ բնակէր.

Նա

Յետ երբեմն մեծն Աղէքսանդր, եկաց առ բերան կարասին՝ և տեսեալ զնա յայն յետին թշուառութեան, ասէ. Դիոգինէ, եթէ ունիս պէտս ինչ իրաց, խնդրեա՛ յինէն. Նա պատասխանի Դիոգինէս. Շնորհ է ինչ, եթէ ՚ի բաց մեկնեսցիս այտի, և մի խափանեսցես զլոյս արեգականն, զոր ոչ կարես տալ ինձ: Որով յայտնի՛ եցոյց զազնուականութիւն իմաստից գիտութեան, յոր ՚ի նմին ժամու պարապէր. առ որով ամ պերճութիւնք և ճոխութիւնք նմ առ ոչինչ են համարելի.

ՃԴ. Պարծեալ Դիոգինէս համբակ տեսանելով ստահակեալ զմանկածուն եհար զաւազանաւ, ասելով. Ընդէ՞ր այդպէս դաստիարակես: Որով ուսոյց թէ յոռութիւն համբակաց դաստիարակին է յանցանք, որ հեղգանայ խրատել զնոս.

ՃԵ. Հարցին ց՚Դիմոկրատէս փիլիսոփայն, թէ ընդէ՞ր միշտ ծիծաղիս ՚ի հրապարակս: Նորա. ծիծաղիմ ՚ի վերայ անմտութեանց մարդկան, որք թողեալ զկարևոր և պշահեկան գործ իւրեանց, զհետ սնոտեաց լինին. որով և ծաղու արժանի են.

Աղա-

ԽԸ. Ս[illegible] և [illegible] Հռովմայ 'ի նախանձու- [illegible] փառաց.

Ներոն և Լիվիոս Հիւպատոսք այն ինչ սպառասպուռ խորտակեցին զբանակ Ասդրուբալայ եղբօր մեծին Աննիբաղայ, յորում սպանաւ և ինքն Ասդրուբալ, խնդրեցին 'ի ծերակուտէն, զի հրաման տացի նոցա մտանել յաղթանակաւ 'ի քաղաքն. Պատասխանի ետուն միաբանութեամբ ծերունիքն. „Անպատում „խնդութեամբ շնորհեմք ձեզ զհայցուածսդ „վս̄ մեծի շնորհապարտութեան մերոյ „առ ձեզ 'ի նորանշան յայս յաջողուած, „զոր ճանաչէ Հռովմ նախ 'ի խնամոց „դից, և յ'որոց՝ 'ի քաջութենէ և 'ի „խոհականութենէ իւրոց հիւպատոսաց". Բայց սահմանեցին՝ զի Լիվիոս մտցէ 'ի Հռովմ քառաձի կառօք, և ուղեկցութեամբ զօրուն. և Ներոն լոկով երիվարաւ առանց ինչ ուղեկցութեան.

Պատուաւորել այսու օրինակ զկարգ յաղթանակին՝ յաւել զփառս երկաքանչիւր հիւպատոսաց. բայց առաւել զնորայն՝ որ վերագոյն գոլով արդեամբք տայր ազնուաբարոյութ[illegible] զնմ պատիւ՝ իւրում իշխանակցի. Վասն այսորիկ տմ

գո-

գովեստք ՚ի Ներոն յանգէին։ Նոքին,
,,Նորաբեալն մեկնականի անհանգէս և
,,անուղեկից, անց ՚ի վերջ աւուրս ծագէ
,,՚ի ծագ Իտալիոյ, և մարտեաւ ՚ի Պող-
,,ղիա ընդ Ասդրուբալայ՝ ՚ի ժամանակի
,,յորժամ Աննիբաղ կարծէր զնա բա-
,,նակեալ մօտ իւր յԱպուլիա։ Այսու
,,օրինակաւ մի միայն հիւպատոս ՚ի միում
,,աւուր, և յերկուս ծագս Իտալիոյ ե-
,,կաց ախոյեան ընդդէմ երկուց աճեղ
,,թշնամեաց հասարակապետութեան,
,,դիմակալեալ միում ՚ի նոցանէ իւրով
,,խոհականութեամբ, և միւսումն իւ-
,,րական անձամբ։ Ասոր՝ անուն միայն
,,Ներոնի եղև բաւական սանձարկու
,,լինել Աննիբաղայ. անտի՝ ո՛ երկուա-
,,նայցէ զպարտութեան Ասդրուբալայ
,,ընծայել օժանդակութեն Ներոնի, որ
,,իւրով երագ և անակնկալ եկաւորութե
,,ապշեցոյց զզօրավարն կարքեդոնեան,
,,և ճնշեաց։ Ապա կարծող է Լիվիոս
,,թէ ախորժէ, բաղդմիլ ՚ի կառս՝ եւս
,,շքեղապայծս, և լծել ամոլս բաղմա-
,,գոյն եւս երիվարաց. այդ միակ երի-
,,վար է որ բառնայ յուս իւր զճշմարիտ
,,Յաղթականն։ Ներոն՝ թէպէտ և զայլ
,,հեաք, յիշատակ իւր է անջնջելի,
,,եթէ

„եթէ վասն փառաց՝ զոր ստացաւ 'ի
„մարտի պատերազմի. և եթէ վասն արհա-
„մարհելոյ նր զպատիւ յաղթանակի”.
Եւ յայնմ եղեն զբոյլք ժողովրդեան
'ի մէջ Ներոնի, մինչև 'ի հասանելն նորա
'ի կապիտոլիոն, և չէր ոք 'ի Հռոմայեցիս,
որ չէր ակնկառոյց 'ի նա.

ԽԹ. Օրէնք տալոյ 'ի տալոյ արանց հասա-
րակաց տալոյ առնէ զոմն ոչէր չէզէ:

Հռովմ ձգէր 'ի հեռաստան ոչ
միայն զիւր զէնս՝ այլև զիւր օրէնս:
Գեղեցիկ օրինակ մնացական թէ տէ-
րութիւն բազում իւիք վերադասէ քան
զճանապարհ զինուց: Օրէնք 'ի մեր
արկեալ զճանապարհ բռնութեան՝ հնա-
զանդեն միայն զմարմին. իսկ օրէնք շա-
հին զմիտս հասարակաց. և արդարև
իշխան ոք յորժամ առաքեսցէ 'ի քաղաք
ինչ տէրութեան՝ ուր ոչինչ յայլ պէտս
վարէ զիւր իշխանութիւն, բայց 'ի հաս-
տատել անդանօր զբարեկարգութիւն,
զխաղաղութիւն, զարդարութիւն, և 'ի
յարդարել զգործաքացիս երջանիկ, ահա
յայս հայի ամենագեղեցիկ կառավարութ.

ԺԳ. Առ խորշելոյ յաղագայ մեծագոյն չարէ՝ հարկ է պատժել զփոքրագոյն ներելեայ չարն:

Զօրագլխի (գոնէ նմա՝ ամենայն իշխանաց և տէրանց) արժան է կտրել և 'ի բաց ընկենուլ զանդամ ինչ խոր խայթեալ՝ առ ապրեցուցանելոյ զբովանդակ մարմինն: Ըստ Պղատոնի՝ զոր 'ի մէջ բերէ Սենեքա, այր խոհեմ ոչ պատժէ սոսկապէս վասն այսորիկ, զի գործեցաւ յանցումն. վասն զի յանցելոյն չի՛ք դար յուղղութիւն. այլ զի՝ այլ մի՛ ևս յանցուածք ինչ լինիցին առ յապայ:

Եւ զայս պատգամբերէ օրինակ պատժոյն.
Խափան արկեալ այլոց՝ չանկանել
յայնպիսի աղէտս:

ԺԴ. Իշխան հանճարեղ ոչ հրաժարէ 'ի քննելոյ չարածեաց հնազանդելոյն, այլ այնոամենայնիւ ոչ զերբն պնդել առանձնայանցն:

Իմաստութն առաջնորդ ոչ մերժէ զպատճառ հպատակին յորժամ իրաւացի են, բայց և ոչ փաղփաղակի փոխէ զհրամանն: Եթէ կարիցէ բառնալ հեռապահպանութեամբ իւիք զխոչընդակս

կա-

կատարման հրամանին. Ուսումն իշխանաց և ամ առաջնորդաց է, մի՛ անընտրողաբար պնդել 'ի հրամանս իւրեանց՝ ոչինչ հայեցեալ 'ի դժուարութիւնս՝ որք ընդ առաջ եկանեն՝ այլ իմաստութբ խորհել հնարս հեռացուցանելոյ զարգելս՝ եթէ կարիցեն, զի չեն ամենակարող առնել զոր կամիցին.

ՃԺԷ. Այլ առ Պետրոս՝ շատ է կարդալ զի նորա է տալ և բառնալ։
Պարգևէ կեանս և ճոխութիւն,
այլ յինէն է իմաստութիւն։

Սերտոսես.

ՃԺԸ. Աշխարհակալութիւն Ասիոյ եմոյծ զեղխութիւն 'ի Հռոմ։

Յանկ ել պատերազմն Անտիոքոսի, որ չեղև ինչ երկարատև. Սակայն յաղթութիւնս միանգամայն աւետէ յայլմէ կողմանէ խանգարումն և կործանումն այսմ ինքնակալութեան. սպրդեցուցեն 'ի Հռոմ ընդ ճոխութեանն զոր եմոյծ անդր՝ զճաշակ զեղխութեան, փափկութեան և զբաղանաց. Սասն զի 'ի ժամանակս

մանաւանդ այսր յաղթութեան եղելոյ 'ի վերայ Անտիոքոսի, և այսր աշխարհահակալութեան Ասիոյ՝ արկանէ Պլինիոս զդար սպականութեան բարուց հասարակապետութեան Հռոմէականի, և զշարաչար յեղափոխումն եղելոյ 'ի նմա, Ասիա պարտեալ զինուք Հռովմայեցւոց, խորտակէ մոլութեամբ յաղթեաց Հռովմայ. Տարաշխարհիկ ճոխութիւնք շեղջուցին զսէր աղքատութեան, և զնախնի անպաճոյճ կենաց՝ որք էին նոցա պարծանք և զօրութիւն։ Օ՜ եղխութիւն՝ որ իբր յաղթանակաւ եմուտ 'ի Հռովմ շքեղապանծ աւարօք Ասիոյ, զհետ ձգեալ զամենայն անկարգութիւն և զյանցուածս՝ արար 'ի նմա կատարած մեծ, զոր չէին ձեռնհաս առնել զօրք բազմաթիւք. և այնպէս եհան զվրէժ քինու տիեզերացս ամենայնի, որ 'ի նմանէ պարտեալ նկուն գտան։

ՃԺԴ. Պոմպէոս է զօրաց գլխաւոր շահատակել, և ոչ [illegible] [illegible] [illegible] հասարակել.

Զօրականն չէ պարտ [illegible] ոսկւով և արծաթով, այլ՝ զարդ նորա պարտի լինել երկաթ և ոյժ․ ոսկի և արծաթ

արծաթ ոչ օգնեն ՚ի պատերազմի, այլ են յաւէտ փարթամ կողոպուտ թշնամւոյն. Շողշողեն յառաջ քան զմիւս մարդ, այլ ՚ի կռուի անդ՝ յարեան ճապաղիս՝ կորուսանեն զամենայն փայլեւն: Ճշմարիտ զարդք զօրականի՝ է իւր քաջասըրտութիւն: Նա մեծաշուք վայելչութե հետևանայ յաղթութեան. և աղքատիկ յաղթականին՝ որս է ընչեղ թշնամին.

ՃԺԵ. Պատերազմէն է ագահութեան սահմա-
նաց յոյժ իշխանութեան:

Ագահութիւնն է ամօթալի քան զամենայն մոլութիս, մանաւանդ յայնմ՝ որում յանձն է կառավարութի հասարակապետութեան. և թէ՝ զայնմի ազնուական գործաւորութի յեղանակել ՚ի շահավաճառ և ՚ի հնար ճոխանալոյ ոչ միայն ամօթալի է յոյժ, այլ և ապիրատ և մեղապարտ քան զամ ինչ: Սենեքա.

ՃԺԶ. Օրէնք իշխանաց են իշխանաց՝ առանց
որոց չիշխեն ամենևին ինչ:

Իշխանութիւն որ ՚ի պաշտամանս իւր հմերիցի ունիլ ազատութի, առնել զամ զինչ

զմիշ և կամիցի։ Իսկ զմինչ լինիցի այն քիմաստ սքանչելի սակայ յեղյեղեալ, թէ 'ի կարգել տէրութեան կամ հասարակա-կապետութեան զոք դուր. Ո՛չ գլխոյն 'ի նա թողու զխուրն իշխանութիւն, այլ հաւատայ զայն որպէս աւանդ, յորս սակս ունի տալ պատասխանի։ Պարտ է նմա խորհուրդ հարցանել 'ի գործածութեան իւրոյ պաշտաման, ո՛չ իւրում յօժա-րութեան, այլ՝ անջրելի կանոնի իւրոյ պարտաւորութեան։ Ոնչպէտ և չիցեն առ նմա, ո՛չ աթոռակիցք և ո՛չ վկայք. Մի՛ կարծեսցէ զանձն լինել միայն ընդ միայն, այլ հայեսցի զևրև յօրէնս, 'ի կրօն, յուղղութիւն և 'ի հաւատար-մութիւն՝ որպէս 'ի մի մի աթոռակիցս. որք դատեն ընդ իւր, և որք դատել ունին և զնա ինքն. 'ի վերայ ամենայնի ունիկն դնել և ակնածել գաղտաձայն բարբառոյ խղճի մտաց, զոր անհնար է երբեք հեղձուցանել իսպառ. Սենեկոն։

ՃԺԷ. Զի՛ պարտ խնայել յինչս եւր մեղանս 'ի հետոյ եւէ յաղագս հայրենեաց։

Սոէ Սենեկոն, երկնչիմ 'ի նա-խանձուէ, և փափաքիմ հանգստեան խա-

զաղական և առանձնաւոր կենաց.

Ասեն նմա, դու չես ծնեալ վասն քո, ծնեալ ես վասն հայրենեաց՝ որում պարտապան ես օգնել 'ի կարիս իւր. և թէպէտ և մահու դիպեսցիս 'ի ծառայութեան անդ՝ չունիս մնալ հրամանի օրհասին, այլ ընդ առաջ երթալ և արհամարհել զվտանգս:

ՃԺԸ. Աշխոյժ և քաջահերթ հոգին ոչ դադարէ յառաջադիմանալոյ, Ընէ գործէ իւր համարին էջէ ծերացեալ.

Յառաջեալ հասակն ոչ առնէ զծերս՝ անքաւականս օգտելոյ հայրենեաց. զի ոչ եթէ կորովութեամբ և երագութեամբ մարմնոյ լինի առաջնորդութիւն երևելի իրողութեանց, այլ զգօնութեամբ, ուղիղ դատմամբ և իմաստուն խորհրդովք հիմնելովք յերկարաւոր փորձ. այս նպաստք են, զորս ծերութիւն առաւելու և զօրացուցանէ, և ոչ թէ նուազէ. զումն՞ կախեալ կայցէ բարիոք առաջնորդութիւն նաւի. մի թէ 'ի մանկտւոյն նաւին, որք վազվազին և ելանեն և իջանեն, և անդ ընդ շարժեն, թէ 'ի հմտութենէ ղեկավարին.

որ հանդարտիկ նստեալ յեւրում կայի վարէ զզեակն. Կիկերոն։

### ՃԾԹ. Ա[illegible]ոյն [illegible] է [illegible]է, որ [illegible] [illegible] [illegible] էր պարծանք Հռովմայեցւոց։

Ռեգուլոս էր առ ժամն պատուեալ 'ի սերմանել զեւր անդաստանս, յորժամ ասպանդուրք ծերակուտին եկին իմացուցանել նմա զընտրութիւն իւր 'ի հիւպատոսութիւն։ Ով երջանիկ ժամանակաց. յորում աղքատութիւն էր այսպէս 'ի պատուի, և երթային առնուլ զհիւպատոս յարօրադրութենէ։ Ձեռք վաստակեալք 'ի դեղջուկ աշխատութեանց՝ էին հաստարանք պետութեան. և բռնապառնալուռ կոտորէին զքաղմահոյլ զօրս թշնամեաց։ Նա մեր աղքատ զօրավար, և զօրավար աղքատ յետ յաղթութեանց իւրոց 'ի ծովու Կարքեդոնացւոց և 'ի ցամաքի քշեաց յԱփրիկոյ մնաց յԱփրիկէ որպէս փոխանորդ հիւպատոսի, և իշխանակից նորա դարձաւ 'ի Հռովմ, վասն և ծերակուտին ոչ քարւոք թուեցաւ կոչել յԱփրիկոյ զՌեգուլոս, և խափանել զյաջողութիւն իւրոց յաղթու-

թութեանց, այլ հաստատեաց զնա հրա-
մանատար զօրուն։ Ահ որք այնպէս դը-
ժուարացաւ ընդ այն վճիռ, որպէս նա-
խնքն՝ որոյ էր 'ի պարծանս։ Գրեաց առ
ծերակոյտն զանգատ, և խնդրէր 'ի նը-
մանէ յաջորդ։ Մի յերկուց պատճառաց
էր, թէ. Այր մի տօրեայ վարչաւոր՝ կա-
րող կռուել 'ի ծովու առաւելին իմոյ՝ որ մի-
ջէր զիմ փոփոխէր անդադար եօթնեակ լծե-
լոյ, փախուստ, առնել ընդ երբ զվճինոյն
զենզինական կործխո. Նորէ է ինչ ընդ ըներ,
եղխացեալ՝ ԹԷ 'ի ծով անդադարանն անփորձ,
ի- ... Ծե-
րակոյտն հրամայեաց՝ զի անդադարանն մը-
շտնջենի ծախիւք հասարակաց, և զի կենացն
որքէն կենցնակ կործծեան կազմեսցեն. և
զի հասարակապետութեան յիշք մէրդյ առաջէ
զանդուր և զնատեաւ կնոջ և որդւոյն խը-
նեփոլորի։ Նա յաւ օրինակս ժողովուրդն
հռովմէական եղև ԸԻ իւրոց յինչ անուանս
...եղբուլոսի։ Նիւրագնոյ գնեաց զանձ
հասարակաց, փայապխոն անզիւտ օրինակ
առաքինութեան, որ պարծանք եղև
...ովմայ ԷԵ ամ դարս առ յապայ։

Ո՞վ, սքանչելի պարզմտութեան
յաղթական Կարքեդոնացւոց, որ Թե-
րեւս իցէ ոք՝ որ զեղջկութի կոչիցէ։

Ո՞Վ

Ո՛չ ազնուաբարոյութեանն, և վեհ-անձնութեն : Զգիտեմ, յո՞ր վայր արժան իցէ առաւել սքանչանալ Է̃ նա, արդ-դեօք 'ի գլխո՞յ զօրուն 'ի յաղթել թըշ-նամեաց պետութեան, եթէ 'ի գլխո իւրոյ վաստակակցաց՝ 'ի մշակել զփոք-րիկ զիւր անդաստան. Յայսմանէ ծանուցեալ մըշակի ճշմարիտ արդիւնք 'ի վեր են քան զճոխութիւն. Պարծանք Հռեգուլոսի դեռ կան. զի զյարգ նր՞ ո՞վ կարէ ժխտել: Բարիք մեծահրուստ ճոխացելոցն կո-րնչին ընդ նոսին, թաղում անգամ և յառաջ քան զնոսա.

ՃԻ. Օգնականութիւն Հռովմայ զերոյն Սուր-բամալէ 'ի Շերբանն ամենեցուն:

Այնքան տիրեալ էր զեղխութե Հռովմայեցւոց, մինչև գրգութիւն և որկորստութիւն համարէին հնար ըն-նուլ զթերին օրինաց. Այս զեկուցանէ մեզ Պլինիոսն 'ի միումն 'ի թղթոց, ուր պատմէ անկեղծ և ախորժաբար զայն՝ որ դիպեալ էր նմա 'ի կոչունս ինչ պատ-րաստեալ 'ի Լենտուլոսէ Սպենթերայ՝ վասն հասանելոյ որդւոյ իւրոյ 'ի պա-տիւ հաւահմայից, ,,Օրէնք (ասէ) վե-

,,րա-

,,րաքերեալք 'ի ծախս՝ որոց պարտ էր
,,'ի ներքս ածել խոշորակեաց կեանս,
,,արարին ինձ մեծ վնաս: Վասն զի ո-
,,րովհետև այս օրէնք խստոք 'ի մի-
,,այլոյ ամի, Թողուն լինել ազատուն
,,'ի մի ամ ընդեղինաց և բերոց երկրի,
,,մեր փափկասէրք այնպէս գիրգ հա-
,,մեմեն զսունկս, զարմատս և զամ ազգ-
,,բանջարոյ, մինչև չէք ինչ յ՚ծի քան
,,զայնս ախորժաճաշակ և համեղ:
,,Խաբեցայ ես ճաշակել յայնց 'ի կո-
,,չունս Լենտուլոսի, և իմ անժուժ-
,,կալութի պատժեցայ 'ի ծանր խօթու է,
,,որ տևեաց աւելի քան զաւուրս տասն:
,,Իբր այսպէս՝ որ դիւրաւ ժուժկալէի
,,յոստրէից և 'ի մուռենայից, խաբեցայ
,,'ի ճակնդեղէ և 'ի մոլոշէ. բայց արդ
,,ուսայ, և այլ անգամ առաւել ևս
,,զգուշացայց".

Ճիա. Յ[illegible]
էն հարց.

Պարծանք հարց՝ բեռն լինին որդւոց, յորժամ ոչ համանմանին սոքա նց յարդիւնս. և ոչինչ իմիք են պիտանի՝ բայց առ առաւել յայտնուի մոլութեց նց,

նոցա, և առ առնելոյ զնոսա նովին իսկ պայծառութեան առաւել ևս արհամարհս։ Ազգականօք և բարեկամօք բառնան 'ի նմանէ՝ զմատանին՝ և զանուն հօր իւրոյ. իբր զի գնացին իւրովք անշքացուցանէ զյիշատակ և զանուն առն մեծի։ Իմաստուն որդի լինելոց է երկրորդ լոյս տան՝ և հայրենեաց։

ՃԸ. Աշխարհինութեան անպաշտօն գանձապետ՝ գանձ է անձանց իւրոյ ապաւինելոյ.

Երջանիկ պետութիւն, երջանիկ առաջնորդութիւն. ուր առաքինութիւն առ հասարակ է 'ի յարգի և 'ի պատուի ուր զկնովին ճանաչի յարգ նորա.... Օտեղի առեալ յիմում յառաջորդութեան, խօսիմ զառաքինութենէ՝ որ անպաճոյճն է և ցածուն և անփառացի. որ ոչ շլանայ 'ի փայլմանէ ոսկւոյ և արծաթոյ, որ անգոսնէ զոմն ինչ. զորոյ ոմն ոչ տարփմամբ զհետ երթայ, և զոր ոմն ոչ գովէ.

Կայն.

ձիգ. Սուքիասեանս հաւաքմայեցին ոչ խորայեալ ոգւոյն 'ի դատապարտութենէ զՍուքեանն որդէ իւր, մեծահամբաւ յանդգնաբանս։ Սուրբ ամբառնայ յարգութենէ 'ի հետապնդութե։

Ճշմարիտ պատկեր անկեղծաւոր նախանձ աստուածպաշտութեան։

Յորժամ ծերակոյտն Հռովմէական և գլխաւորք քաղաքին ընտրեցին հիւպատոս զԿուինտիոս Կինկինատոս և իբրև հաստատեցաւ ընտրութիւնն՝ պատգամաւորս առաքեաց ծերակոյտն առ Կուինտիոս, հրաւիրեալ զնա գալառնուլ զիւր իշխանական պաշտօն։ Իբր զնա պատահեալ յայնժամ 'ի մշակութե իւրոյ կալուածոյ. և նա ինքն վարէր զմաճն, ձորձ զիւրև ունելով յերկամանց մինչ 'ի ծունկս, և աղքատիկ գըլխարկ 'ի գլուխ։ Իբրև ետես զի գային առ նա պատգամաւորք, ոտնակառեաց զիւր եզինս՝ զարմացեալ ընդ խուժան ժողովրդեան, ոչ գիտելով թէ զի՞նչ իրք իցեն։ Ոմն յընկերութենէն յառաջեաց, և ազդ արար զգենուլ ինչ պարկեշտագոյն։ Մտեալ նորա 'ի հիւղ իւր՝ եարկ զիւրև զիւր հանդերձս, և եւ

ընդ

ընդ առաջ նորա որք սպասեալ մնա-
յին նմա ։ Ընդէն վաղվաղակի ետուն
զաւետիս իւրոյ հիւպատոսութեան, և
արկին զնովաւ ծիրանիս ․ դահիճք դա-
սեցան զառաջեաւ նորա իւրեանց խըր-
ձամբք ՚ի սպասահորկութիւն հրամանաց
նր̃, և աղաչեցին զնա գալ ՚ի Հռովմ։
Ընդ այն տեսիլ խռովեալ նորա և
ցաւագնեալ՝ լռեաց վայր մի, հեղլով
յորդ արտասուս յաչաց։ Յետ այսորիկ
բացեալ զբերանն՝ խօսեցաւ զայս միայն։
Ուրեմն իմ անդաստանն ոչ սերմանեսցի յայսմ ամի։
Ետ կնոջ իւրում ողջոյն հրաժարական,
և յանձն արարեալ նմա զհոգ ընտանի
իրողութեանց՝ յուղի անկաւ գնալ ՚ի
քաղաք։

Ո՜վ երջանիկ ժամանակացս, և ըն-
քանչելի պարզմտութեան։ Աղքատութի̃
չէր յայնժամ առ հասարակ ՚ի փոր
արկեալ, բայց և այնպէս յաչս ամ̃ցուն
էր մեծարգի․ և չքաւորութիւն չէր
համարեալ խոչ՝ աւագամեծար իշխա-
նութեանց պետութեան։ Գնացք՝ զոր
կալաւ Կուինտիոս յիւրում հիւպա-
տոսութեան, քաջ իմացուցանեն մեզ՝
որպիսի ազնուականութիւն, քաջասըր-
տութիւն, և վեհանձնութիւն ծածկեալ
կային

կային ընդ անարգ և աղքատին հիւղիւ.

Այսպիսւոյ խաղաղական կառավարութեան անմարթ էր լինել առանց մեծի գովութեան. վասն այսորիկ ոչ պակասեաց ժողովուրդն ’ի վկայելոյ՝ թէ ամի՛ւ հա՛նձ էր և հաւան։ Բայց ’ի վեր քան զամ՛ զարմանք կալաւ զնս՟, երբև տեսին՝ զի ’ի լրանալ ժամանակի իւրոյ պաշտաման՝ Կուինտիոս այնչափ արիաբար հրաժարեց՟ ’ի վերստին հաստատելոյ յայնմ, որչափ դժուարութիւն ցուցեալ էր նորա յընդունելութեան նորուն։

Գովութեամբ և օրհնութեամբ առլցեալ, մեծարգի լեալ և սխրալի և սիրելի յաչս իւրոց քաղաքացւոց, մերկացաւ Կուինտիոս ուրախութեամբ զծիրանիսն, և փաղփաղեց՟ դառնալ յիւր եզինս, յիւր արօր, և յիւր խրճիթ. ուր որպէս յառաջն՝ եկեաց վաստակօք ձեռաց իւրոց.

Համարեցի՞ն թերևս իւիք նուաղեալ պարծանք Կուինտիոսի Կորո՛ղ ի՞նչ իցեն գալ ’ի կշռութիւն բազմահարուստ ճոխութիւնք, հոյակապք ապարանք, և մեծագանձ սպասահարկութիւնք ընդ աղքատին հիւղ, և ընդ գեղջուկ կահ

մե-

մերումս մեծանուն մաճակալի։ Ո՞չ զար-
թուցանիցեն 'ի սիրտ ականատեսաց ըն-
նոյն իմաստ յարգի, զոր ազդէ վերծա-
նողին՝ լոկ ընթերցումն պատմութեան
Կուլինտիոսի։ Ո՞ զլասցի նմա զյարգ և
զզարմանս, թէպէտ և սիրող ոք իցէ ու-
նայնութեան և պերճութեան։ Ապա
խոստովանելի է, թէ էր արդարև մեծ
ինչ և ազնուական և արգոյ 'ի գնացս
հռովմայեցւոյս.

Ընդէ՞ր երջանիկ իցէ պետութիւն
ինչ կամ գաւառ, կամ քաղաք, որոյ
կառավարք դէթ փոքու իմն նմանող
գտանիցեն իմաստակից՝ զոր 'ի Կուլինտիոս
տեսեալ զարմանան։ Անյողդողդ արիու-
թիւն 'ի պահել զբարեկարգութիւն և
զկանոնն, խառնեալ ընդ քաղցրութեան՝
որ ամոքէ զխիստ ժողովրդոց։ Սքանչելի
արուեստ և զգօնութիւն 'ի ճանաչել
և յուղղել զայլս. Գնացք միօրինակ՝
մի՛շտ կանոնաւորեալ 'ի բանէ, և ո՛չ եր-
բեք 'ի մխտելոյ բնաւորութեան, կամ
հաճոյից քմաց. Մեր հասարակաց օգտի՝
յաղթական ամ առանձնաւոր կրից.
Հանրական անշահասիրութիւն, որ ո՛չ
բերէր զառածանի։ Անխոնջ պատապումն
յերկս վաստակոց և յիւր պարտաւորու-
թիւնս.

թիւնս։ Կնխաոր հաստատութիւն 'ի
մատակարարութեան արդարութեան,
և 'ի վեր քան զամ՝ նախանձ գործօլա-
կան և ազդու 'ի պաշտպանութիւն ող-
քատաց և տառապելոց՝ յանխլաւի նե-
ղելոց։ Կուինտիոս այսպիսեօք դերապանծ
և դժուարագիւտ ձրիւք ցանդոյց զկառուլ-
ութիւն, և սանձեց 'ի ժամանակի իւրոյ
հիւպատոսութեան, զոր ոչն կարողացան
առնել այլք։ Ժողովուրդք կեցցեն միշտ
'ի համդարտութեն, թէ կառավարք իցեն
նոցա խոհականք, հանդարտք և սիրողք
ուղղութեան և արդարութեան։

Զկնի երկուց ամաց հիպատոս-
ութեան իւրոյ Կուինտիոս ընտրեցաւ
իշխանապետ։ Տիտոս Լիվիոս՝ որոյ չէր
ինչ խօսեցեալ զարօրադրու է և գաղքա-
տու է Կուինտիոսի՝ յորժամ համբարձա-
նա 'ի պատիւ հիւպատոսուն, յայժմ
վայրի 'ի զարթուցանել զուշ իւրոց ըն-
թերցողաց՝ ընդ մէջ արկանէ պատմութե
խորհրդածութիւն ինչ, որում մերթ է
ամ ուրեք ունել զտեղի։ Ուսուցին [illegible]
հայր ընդհանուր, որք [illegible] ճշմարտութեամբ արհա-
մարհեն զամ. և հարցեն թէ [illegible] [illegible] չէ
հնար լինել՝ ոչ ճշմարիտ [illegible]. և ոչ ա-
[illegible] [illegible]։ Ուսուցին [illegible]

Կուինտիոս մի միայն յոյս Հռովմէական ժողովրդեան՝ բնակէր 'ի գաւտավայրս յայնկոյս Տիբերիս գետոյ, պատաղեալ 'ի մշակել իւրովք ձեռովք զգոյզն անդաստան քառեակ լծվարաց, որ էր մի միայն մնացուած իւրոց ընչից. որ և կոչեցաւ յետոյ՝ պրատորայք Կուինտիէ։ Պատգամաւորք գտին զնա այնպէս մաճ 'ի ձեռին, որպէս յառաջն գրեցաք՝ յորժամ ընտրեցաւն Հիւպատոս։ Տան նմա զիշխանապետութեանն աւետիս, աղաչեն զնա գալ 'ի Հռովմ. և զգացուցանեն նմա, թէ յո՞ր սահման կայր զօրն։ Պատրաստեալ էին նաւակ մի վասն Կուինտիոսի։ Իբրև ել անտի, ընդ առաջ եղեն նմա երեք որդիքն իւր, ը՟ որս և բզ՟մք յազգայնոց նոցա և 'ի բարեկամաց, և յոգունք 'ի ծերակուտէն. և այնմ շուրջ ունելով զիւրև պհոյլս աւագանւոյն, և զառաջեաւ զսպասահարկութիւն քան և չորից դահճաց՝ տարեալ եղև յիւր օթևանն։ Ի մտանել իւրում 'ի Հռովմ, խօսեցաւ առ ժողովուրդն, և յուսացոյց զն՟ս յելս բարիս։ Իսկ 'ի վաղիւ անդր յառաջ քան զլուսանալ աւուրն ընտրեաց սպարապետ հեծելազօրուն զԼ. Տարկուինտէոս 'ի պատրկական զարմէ,

որ

որ 'ի սակս իւրոյ աղքատութեան ծառայէր 'ի հետևակազօրուն, յորում և երևելի էր քաջութեամբ քան զամենայն ժիրաժիր ազնուականս. Զօքաւ էր նմա 'ի ժողով անդր. արգել զգաստատանս, եւ փակել զկրպակս, և խափանեաց զամ գործաւորութիւնս վաստակոց. այս սովորութն էր 'ի վերջոս ծանունս, զի ամ քղքացիք միաբան միտ դիցեն փրկութեան պետութեան. Նայա հրաման ետ ամենայն քաղաքացւոց մարտկաց, զի յառաջ քան զմտանել արեւու՝ գտցին 'ի դաշտ Մարսի, պաշարաւ հնգօրեայ հացի, բարձեալ իւրաքանչիւր ցիցս երկոտասն. իսկ ծերք որք չէին բաւական զայս առնել հրամայեցաւ նոցա եփել հաց վն իւրեանց մօտակայից. Էին ամ զօրականք, ոմն յայսկոյս և ոմն յայնկոյս 'ի խնդիր ցցոց. և ամենեքեան գտան 'ի պայմանեալ ժամու 'ի նմին տեղւոջ պատրաստականք որպէս և պարտն էր.

Իշխանին զօրավարեալ հետևազօրունն և Տարկուինիոսի՝ հեծելազօրուն խաղացուցանեն զգունդս՝ 'ի դասս դասս ոչ միայն կարգաւ շուոյ, այլ և ճակատու պատրզմն՝ թէ պիտոյ լիցի. Քաջանեն զհոնկ գիշերաւ 'ի մօտակայ սահմանս

Մե-

Մերձեցեալ քաղաքին Ատտինաց, ուր ի-
մացեալ թէ չէին ինչ կարի հեռի 'ի
Թշնամեացն գնդին կալան. Իշխանտանին
յերեկէր աշխատեցեալ, և ննջեալ, բա-
ներեալ 'ի գիշերաժամուն զդէրծ և ըն-
տարածութիւն բանակին Նեկռեանց,
դասեցոյց զիւր ամ զօրս ընդ երկայն
գնդօրօ, պ ատուէր տուեալ զօրականին՝
միանգամայն մեծաբարբառ կոչել ընդ
ընիր նշանի, մինչ մեծել, ի երբ նշխրոց զեւ-
րով տատապեալ, և ամբայ ացանել զայն
ցորվե վարսելովք: Դառնուէրն անվրէպ
կորեցաւ: Պոշէն զօրուն էանց 'ի բա-
նակէ Թշնամեայն 'ի բանակ հեւպտոին,
և արկ 'ի նմին անհնարին երկիւղ և տագնապ
տիրեալ, և 'ի միում քաջալերութեան
և խնդութեան. Նա այսպիսի օրինակաւ
դղորդեալ 'ի կայից զաստանեայ Թշնամին,
և իբրև զայծեամն յորոդայթէ որսողաց
'ի բաց ազատեալ զպաշտօնեալ հեւպա-
տոսն ընդ զօրաց նոր՝ միացաւ ընդ նմա
և արար յաղթութիւն մեծ յՆեկռեանս:
Որոց սպառեալ ամ ուտեք և բռնա-
դատեալ ձեռնարկել 'ի կռիւ միանգա-
մայն է երկուս զօրս, 'ի միտ առին թէ
չէին բաւական դէմ ունել կռուին բազմա-
ման. և պարտութեն խառնակմանեցան եր-
կա-

կաքանչիւր կողման, խնդրելով 'ի Հռով-մայեցւոց մի ձգել զյաղթութին իւրեանց 'ի սպառսպուռ կոտորումն ազգի իւրեանց. Հիւպատոսն առաքեաց զնմ առ իշխա-նապետն, որ պտասխանի ետ պտգամաւորացն և ասէ. այս ըղձանամ խնայել յարիւն ձերոյ զօրուն, և առնել ընդ ձեզ հաշտութի. բայց ոչ ընկալայց 'ի ձէնջ յայտնի խոս-տովանութի; թէ այդ ձեր նկուն է և ընդ ձեռամբ նուաճեալ, կամիմ՝ զի 'ի բաց դիցեն զզէնս, և անցցեն ամենքին ընդ լծով. իսկ զգրաւկկոս զառաջնորդ պատե-րազմի և զայլ գլխաւորս ապստամբութեն՝ տաջիք շղթայակապ 'ի ձեռս մեր, զի ա-րասցուք ընդ նոսա զարժանն. Առեալ պատգամաւորաց զայս պատասխանի՝ դարձան վհութանելի, և բերին զԳրակ-կոս և զգլխաւոր զօրուն շղթայակապս: Առ Ակուեանց ելեալ զինաթափ, և ոչ թէ մերկ՝ 'ի բանակէ իւրեանց, անցին խումբ խումբ ընդ բանակ Հռովմայեցւոց՝ ըստ հրամանի իշխանապետին, և մտին մի ըստ միոջէ ընդ լծով: (Լծով կոչէր երկուս գեղարդունս ցցեալս 'ի գետնի, յորոց 'ի ծայրս արկանէին միւս ևս խոտորնա-կի. և էր սա յետին վատանունութեան պարտելոց.)

Կ. ռեալ.

Գտեալ իշխանապետին զքանակ Թշնամւոյն լի բզմ աւարաւ, եԹող ըզ-Բոմնդ-կն միայնոյ իւրոյ զօրու. իսկ զօրուն՝ որք էին առաջնորդուք Մընուկիոսի հիւպատոսի խոյս տուեալ էր յերեսաց Թշնամւոյն, և փախեալ մինչև 'ի բանակ իւր, մեծ շնորհ համարեցաւ զայն՝ զի ոչ պատուհասեաց զնոսա ըստ արժանի այնպիսոյ ամօԹալից վաՀրատուԹեան։ Ասէ առ նս ահեղմամբ բարբառով. Օրհնեմք՝ որոց ձերյ 'ի վերայ էայր յաղագ ծառայել ձերոց Թշնամեաց, մի՛ ողորմեսցէ Տէրն յաղագ անաքեն նորա։ Ապա դարձաւ 'ի Հիւպատոսն, և ասէ. Ահա տես Մենուէլէ, զայլ մ՛ կա հրամայեսցես այսոց լեգէոնից, եղայց եՄէ որդեա Թեղակալ. մինչև ըստ կա ռուցեա ՃԾՐԷԼ ըղ-հեղապատուութեանդ։ Աստն այսորիկ հարկ եղև նմա հրաժարիլ 'ի Հիւպատոսու-Թենէ։

Սուինտիոս դարձաւ 'ի Հռովմ. ուր ընկալաւ զպատիւ շքեղ յաղԹանակի՝ որ չէր տուեալ երբէք այլում զօրավարի. փոխանակ զի ապրեցոյց 'ի վեշտասանօրեայ սուղ միջոցի՝ յետ ընտրելոյ իւրոյ իշխանիտ, զբանակ Հռովմայեցւոց յայնպիսի յայտնի և իբր անզերծ վտանգէ. ցրուեաց և կոտորեաց զզօրս Թշնամեաց.

քաւ և ասար եհար զմի ՚ի պանծալի
քաղաքաց նոցա. Եդ ՚ի նմա պահակապանս,
և արար Տուսկուլոնացւոց արդար փո-
խարինութիւն ծառայութեանն՝ զոր ա-
ռարեալն էին Հռովմայ: Գլխաւորքն և
երևելիքն ազգին ծանրաբեռնեալք շղ-
թայիւք՝ երկթային զառաջեաւ կառաց
նորա, և տանէին ևս յառաջոյ նորա զդրօշակս
աւարեալ ՚ի Թշնամեաց: Օրականացն
զկայ առեալ ուրեք յանցս՝ պարէին
զկառօք, հնչեցուցեալ էր քաղաքն ամ
երգս յաղթական: Թուէր ինձ տեսանել
թէ ընդ Կոլինտինոսի մուտ առնէ ՚ի
Հռովմ և աղքատութիւնն յաղթանակէ,
ծածկեալ էր ծիրանեաւ յայնմ մեծա-
հանդէսն սպասահարկութեան՝ ոչ մի ող-
ջիւն ընկալեալ և պայծառացեալ, այլ
առաւել փայլեցուցեալ զայն շքեղ
հանդէսն; և բարձրացուցեալ զծիրանւոյն
փողփողումն: Սաղմղակի իսկ դարձեալ
իշխանապետն յիւր անդաստան, և յիւր
հերկագործութիւն. այլ ոչ յայս սակս
նուաղեսցի իւր մեծարոյութիւն ընդ-
ցածուն և անարգ հիւղիւ, որ բազմեալ
է այսօր ՚ի շքեղաշուք կառս իւր: Իբրև
զի մեծ է ոյժ և զօրուն առաքինութե.
Հաղորդէ զիւր ճառագայթ ամենայնի՝

ժ որ

որ զիւրն, չողչողեցուցեալ զամենայն փառօք և մեծագործութ. Մերելն առնէ և մեծարգի զնմ՝ որ հաղորդութիւն առնի ընդ Նմա, Թէպէտ և արտաքին նր արժանի Թուիցի յետին արհամարհուն քան պատուոյ։

Յայնժամ Կուինտիոս՝ որոյ առեալ էր վեցամսեայ ժամանակաւ զգերագահ իշխանութիւնն, հրաժարեաց յայնմանէ յետ վեշտասան աւուրց. և 'ի բաց եդ զիշխանապետութիւնն առաջի ամ ժողովրդեան, յետ տալոյ զհամար զիւրոյ մատակարարութեան։

Նա ոչ իսկ յայսմ վայրի գիտց էառ իւր վեհանձնութիւն. ընդ առաջադրեալ ծերակուտին, և 'ի ստիպել քուրոց ազգայնոց և բարեկամաց՝ զի յաւարէն և 'ի գերեացն առցէ ինչ ըստ բղձանաց, կմ ընտրեսցէ իւր վիճակ դետնի, կամ յանձն առցէ ընդունիլ ինչ 'ի նմնէ 'ի պարգև, հրաժարեաց յերկաքանչիւր մարդասիրական խնամոց և ընծայատուութեանց՝ բազում շնորհակալութ. Ո՛չ այլ ինչ էր նր ախորժակ և փոյթ, բայց միտ դնել անդաստանին զոր մշակէր, և մնանել անդրէն 'ի վաստակաւոր կեանս՝ յոր ձեռնարկեալ էր։

առա-

առաւել պանծացեալ և գոհ ընդ աղ-
քատութե իւր, քան ընչաւորք 'ի գանձս
իւրեանց ։

Մարթ է տասանօր ածել զմտաւ, թէ պանծալի օրինակք զորս ետ Կուրն-տիոս սիրով աղքատութեան, հանդերձ զօր-ութն̃ յերկրագործութն̃, իւրով զգաստ և խոշորակեաց կենօք, իւրով նախանձաւորութբ̃ առ ձրի ծառայութիւն հայրենեաց, և արիական արհամարհութեամբ կալուածոց՝ որոց մարթ էր առաւելուլ զնկամուտս նր̃, հասարակաց գնացք էին 'ի Հռովմ․ և այն էր նոցա կնիք․ Նայս օրինակք այնչ̃ տարբրացան յազգի անդ, մինչ զի 'ի ժամանակս յետինս՝ յորժամ զօրացեալ էր զեղծումն բարուց, և առ ինքնակալօք իսկ, մածարգի էին այնչ̃ առաքինութիւնք 'ի գործադրէն, որ ոչ պահեցաւ յոյժ ազդս․

[illegible]

[illegible]

Կամիլլոս իշխանիտ հռովմայեցի
տերէն

տիրեալ բանակի փաղիսկեանց և ամ-
աւարին. Մնայր միայն պաշարել զքաղա-
նոցա զամուր և զհամբարաւոր, զՓա-
ղերիա.

Եւ մանկունք երեւելի տոհմից
Փաղերերոյ՝ էին ը առաջնորդութ մի և
նոյն մանկավարժի. Սովորութ էր մր ա-
ծել զնս 'ի ժամանակի հաշտութե ար-
տաքոյ քան զպարիսպն, զի զբօսեցուցէ
զնոսա 'ի դաշտի 'ի խաղս յանկաւոր-
իւրեանց տիոց. Յայսմ իւրմէ սովորութէ
չէր կասեալ և ոչ 'ի ժամանակի պատե-
րազմի, հորդեալ սովին ճանպրհ մատ-
նութեան, յորմէ ակն ունէր ձևս փր-
խարինի. Շրջեցուցանէր զնս, էր զի 'ի
մօտուստ, և էր զի 'ի քացուստ, զի 'ի
գլուխ տարցի զխորհեալն՝ առանց ու-
րուք խրագեկ լինելոյ, կծ կարծիս 'ի մի-
դնելոյ. Եւ օր մի զի պարապ գտեալ
տարաւ առ Կամիլլոս զամ մանկունս
յանձնեալս իւրում հոգաբարձութեան,
լծորդեալ ը ապիրատութեանն զրոյց
իւր ոչինչ նուազ ամպարիշտ և անիրաւ
Ասէ. „տամ իմ 'ի ձեռս քո զմանկունս
„այնպ է, որպ թէ 'ի ձեռս տայի զՓա-
„ղերիա քղք, զի հարք սց իշխանաւորք
„են նորա." Կամիլլոսի հայեցեալ յե-
րեսս

րեսս Տէր խոժոռադէմ տպաւորելօք. ասէ. Ողջէր, այլ հաստատերութ, զի առաջձան ընծայեսցէ՝ առ զի զէն զօրացելոյն և ծողոմոտեր. Այո՝ չունիմ ոչինչ գաղտնապաութեան ընդ փողոխներն հեծեալ 'ի մարտիկի իւր պայմանադրութեան համամատեաներն, եւաց նաց 'ի մէջ մեր և դոյն ընտրող իմ պայման՝ որ 'ի մէջ ամենայն մարտկան, և այն՝ յառերժական: Պատերազմ օրէնք նան, որպէս և հաշտութեան. և մեզ պանծալի է մտածել երեւցուցանել զարդարութիւն և զգօջութեան. Ոչն 'ի յետին ուղիմք ոչ 'ի վարել առ մանկուի, որոց ներուած լինի և յետ ամօթն զպակել, այլ առ Թշնամի ետիր զմեզ զինեալս, որք ընդ հարան ընդ բանակ մեր առաջի Սէզայի, և մեր ներ իւր պատեալ նոցա ազին. Պատ յաղթեցեր նոցա 'ի զօ նոզմանէ յանցաւորութեամբ, զոր չէք ուրոաք շնուեալ ցայնօր. այլ եւ պնդել եմ յաղթել, որպէս յաղթեցի Սէզայոյ զօրութեամբ զինուց, մեքամբք, արութեամբ, քաջութեամբ, և երկայնմտութեամբ. այսուհետև մեայն հնարք վայել են հասաեմայեցւոց: Ո՛չ կամեցաւ կամիլլոս այսուհետև և եթ կշտամբութեամբ արձակել զեղեռնաւորն. այլ ետ մերկացուցանել զնա, և կապել ձեռս 'ի յետս. և տուեալ ձաղկս 'ի ձեռս մանուկ աշակերտաց նորա, հրամայեաց

նց դարձուցանել զնա 'ի քաղաքն ան-
դադար ձաղկանօք, զոր և արարին մը-
տադիւր

Զայն տեսեալ Փաղքեկեանց, յորս
կորուստ որդւոց արկեալ էր անմխի-
թար սուգ, ձայն բարձին ցնծութեան,
և այնպէս յապուշ հարան ը̄ տեսիլն
նորանշան օրինակ արդարութեան և
առաքինութեան, մինչև հրեշտակս ար-
ձակեցին նախ 'ի քաղաքն, և ապա 'ի
Հռոմ, ուր 'ի լսելութիւն ընկալեալք
'ի ծերակուտէն՝ խօսեցան, և ասեն.
Տեա՛րք, յաղթեալք 'ի ձէնջ, և 'ի ձերմէ
զօրագլխէ այնպիսի իմն օրինակաւ, որ
ոչ նախանձ արկանէ՝ ոչ դից և ոչ մարդ-
կան, եկաք անձնատուր լինել 'ի ձեզ,
հաւաստեաւ հաւատացեալք, (զոր պան-
ծագոյն իմն է յաղթականացդ,) լինել
պարտելոցս երջանկագոյն ևս ը̄ ձերով
ինքնակալութ̄, քան կեալ ը̄ մերովք օ-
րինօք: Նու արդ ա̄մի հնազանդ եմք
ձեզ. առաքեցէք արս՝ որ քաղեսցեն
զմեր զէնս, և առցեն 'ի մէնջ պատանդս
և մտցեն 'ի տիրութիւն քաղաքին՝ զոր
դրունս գտցեն բացս. և այնպէս յաջո-
ղեսցէ ձեզ հաճ լինել ընդ մեր հաւա-
տարմութիւն, որպէս և մեք վստահ եմք
հաճ

կամ լինել ընդ ձեր առաջնորդութիւն:

Նա արդարև որպէս տասցէն հր-րեշտակք փաղխակեանց, չէք գոլութիւն անուշակ և պանծալի մ՛ պետութեան կամ իշխանի, իբրև զայն՝ թէ ժողովուրդք պարտեալք առաւել յանդորրու են և երջանիկ ընդ հնազանդութեամբ նորա, քան յորժամ ազատ և ինքնագլուխ կեցին ընդ իւրեանց օրինօք:

Յերևելի յայս դիպուածս յայտնի երևի, որչափ ինչ զօրէ առաքինութիւն, և որպէս ազդէ 'ի սիրտ՝ յորժամ է հաստատուն և անկեղծ. Նկարեն չէք ոք, որ 'ի լոկոյ պատմութենէ առտի ոչ շարժիցի 'ի ցասումն առ հաւատադրուժն այն մանկավարժ, որ զնա աշակերտան մատնէր 'ի ձեռս թշնամւոյն. կամ ոչ զարմասցի ընդ Կամիլլոս, որ դարձուցանէ զնոսա 'ի ծնողս իւրեանց. Նայս ներքին իմաստք չեն ազատ, և ոչ կախեալ կան զմնջ, այլ են տպաւորեալք 'ի սրտի և ընդդաբոյսք 'ի մեզ. Սորին արժանն է հրաժեշտ տալ 'ի բնութենէ, և քննեբանել զբարբառ նորա չկարծել և չասել՝ թէ առաքինութիւն և մոլութի ոչ այլ ինչ են՝ բայց անուանք անգործք և անդոյք:

Բոջէ

ԺԻԵ. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ
ԶՕՐԱԿԱՆԱՑ ԿԱԽԻ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ ՀԵՆԱՍՏՈՒՐԻ ԶՕՐԱԳԼԽԻ:

Պաւղոս Էմիլիոս Հիւպատոս Հռովմայ տեսեալ զ'ի դիպան տեղւոջ բանակիլ Պերսէոսի արքային Մակեդոնացւոց՝ ը որում ունէր մղել 'ի պատերազմ՝ սահմանեաց անվրէպ և խիստ բարեկարգութիւն յիւրում զօրու, զոր եգիտ խանգարեալ 'ի ծուլութենէ՝ յոր կեայր: Խօսեցաւ ընդ նմա ազնուական արիութեամբ. յուշ արար նմա թէ զինչ պատշաճ է զօրականի. ասէ. „Արժան է նմա միայն միտ դնել երից. իւրում „մարմնոյ՝ զի ժիր իցէ 'ի գործ, և հուժ„կու. և զի ունիցի միշտ կերակուր հա„սուցեալ, զի պատրաստական իցէ 'ի „չու՝ ընդ լինել նշանի: Ս̃ այլոյ ամե„պարտ է նմա վստահ լինել 'ի խնամս „Ս̃յ, և 'ի տքնութիւն զօրագլխին: Ո՛չ կարեմ ասել, քանի՞ այս զրոյց թէպէտ և խառն ընդ յանդիմանութե՛ հաճոյ եղեն զնդաց, և մատուցին քաջալերութիւն. Նդէն փոփոխակի երևեցաւ 'ի բանակն այլափոխութիւն զարմանալի: Ոչ ոք կայր 'ի նմա դատարկ:

Արևէին

Սրբէին զօրականք որել զիւրեանց սու-
սերս · յղկել զիւրեանց սաղաւարտս ,
ըզզրահս , և զվահանս · փորձ փորձել
երագաշարժութն ընդ բեռամբ զինուց ·
շկահեցուցանել զգեղարդունս , և շողշո-
ղեցուցանել զմերկ սուսերս · ընտելանալ
և բրտանալ յամ զինուորական մարզս ·
մինչև մարթ էր համարել , թէ երբե
հարցին ընդ թշնամիս , հաստատեալ են
՚ի միտս կամ յաղթել , և կամ
մեռանել ·

ՃԻԲ · Օրէնք յեղափոխութեան եղանակի ·

Այն հիւպատոս պարտեալ և
ձերբակալ արարեալ զարքայն Մակե-
դոնացի զՊերսէոս յետ խօսելոյ ընդ
նմա քաղցրութ և շողոմական խոստմամբ
դարձաւ ՚ի հռովմայեցիս խօսել սկսաւ
Լատիներէն · Ասէ · Տեսանէք ձեզ օրի-
նակ մեծ մարդկեղէն իրաց յեղափոխութն ·
Առ ձեզ առաւելապէս հային իմ բանքս
մանկունք պատերազմողք · Ընտանեգոյն
ապագայց՝ որոց մարթ է մեզ պատա-
հել որ ըստ օրէ ուսուցէ՝ մեզ չգնալ
երբէք ամբարհաւաճութ և բռնութ
ըն ումև իցէ , և չապաւինել յաժմեան

բարօ-

բարօրութեն։ Քանզի ես ճշմարիտ արդեանց և ճշմարիտ քաջութեան է՝ մի՛ կարել ինձ ամբարտաւանել 'ի յաջողութիւնս, և մի՛ լքանել 'ի ձախողութիւնս։

ՃԻԷ. Գովեստ ողջամտաւոր առաքինութեանց Պաւղոսի Էմիլիոսի և ընտանեաց նորա։

Պաւղոս Էմիլիոս՝ ծնունդ միոյ յազնուականագոյն և 'ի նախնիգոյն տոհմից Հռոմայ, հանդիսացեալ երևելի պաշտամամբք և մեծամեծ գործովք, չժառանգեաց յիւրոց նախահարց՝ բայց զուզնաքեայ ինչս. պարծանք իմն է այն այսպիսում յերկարաձգել դաստակերտն նախնեացն։ Աւետնի ճաշակ յարդի և սիրոյ առ անպաճոյճ զնացս, և առ աղքատութիւն եսպ՝ հիւր դեռ 'ի տոհմն իւր բարի օրինակք ընտանեացն, և ծայրագոյն փութով ջանալ խնամով իւր անձինս՝ որոց էին ստորոտի սկզբունք։ Այս ոգի եղև՝ որ ետ ընտրել Պաւղոսի Էմիլիոսի 'ի փեսայութիւն զԷլիոս Տուբերոն՝ զայրն քաջայայտ, որ 'ի մեր երկրի զաղքատութիւն մեծափառեցոյց և ոչ քան զամ հռոմայեցիս։ Ամբարձեալ 'ի հիւպատոսութիւն ուտէր յանօթս խեցեղէնս, և դեսպանք

Առ

Ստողացւոց՝ ականատեսք լեալ սքանչելե անպաճոյճ պարզութեան, մատուցին նմ սպասս արծաթիս. բայց նա նորոգեաց զօրինակ անընչասիրութեան, և հրաժարեաց 'ի պարգևաց նց:

Ճարսնն՝ պանծալի սիրողիս անընչութեան, ոչ՛ինչ օտարանայր յազնուութենէ նորին իմաստից: Պլուտարքոս պատմէ, թէ Սիմիլլա դուստր հօր՝ որոյ երկիցս լեալ էր հիւպատոս, և երկիցս յաղթանակաւոր, չամաչէր յաղքատութե իւրոյ առն, այլ՝ զարմանայր ընդ առաքինութիւն նորա, որ հաւանեցուցանէր նմա կալ մնալ աղքատ. այսինքն է, ըզ առիթն՝ որ ունէր զնա յիւրում աղքատութեան, խորշեցուցեալ զնա 'ի հնարից հարստանալոյ, որք հասարակօրէն են անվայելչական և խառն ընդ անիրաւութեան: Վասն զի օրինաւոր ճանապարհք մթերելոյ զինչս՝ դժուարագիւտ էին ազնուականի հռոմայեցւոյ, որում ճանապարհք տուր և առի և ձեռագործի էին փակք. և ոչ գոյր նմա ակնկալել փոխարինի ծառայութեանցն՝ զոր մատուցանէր պետութեանն, ոչ ձրից, ոչ հատից, և ոչ այլ ինչ շնորհաց՝ յորս սովոր էին արդ ընդունել ուպայք յառաջանձեռնութէ

Մերոց

միւսոց թագաւորաց ։ Չէր հնար նմա փարթամանալ այլազգեաց կեղեքմամբ գաւառաց, որ՛ առնէին յետ ժամանակաց ինչ՝ յոլովք յիշխանաւորաց և 'ի զօրագլխաց ։ Նա մեհանձնութիւն, այս անշահասիրութիւն, այս իմաստք պատւոյ, այս կարի իմն վերադասութիւն առաքինութեան քան զձոխութիւն, էին այնք՝ զորս այս տիկին հիացմամբ նկատէր յայր իւր և կարի իրաւամբք ։ Կնէր 'ի վերոյ առաւելեալ քան զհասարակաց սովորական եղանակ խորհելոյ, նշմարէր ընդ վարադուրաւ աղքատութեան և անզարդութեան՝ յառաքինութիւնն որ էր այնմ պատճառ ։ և պարտաւոր զանձն համարէր առաւել ևս մեծարել 'ի նմա զայն՝ յոյր սակս թերևս յաչս այլոց լինէր արհամարհ ։ կամ որպէս ասէ Պլուտարքոս, հրաշացեալ ընդ առաքինութին, որոյ աղքատ էր ։

Նոյն տիկին երևելի՝ վարժեցաւ յուսումն այսց ողջամիտ սկզբանց 'ի տան Պաւղոսի Եմիլիոսի. զորոյ կենակցութիւն վերադասէր քան զամ մնոտի զբօսանս, որք հասարակօրէն բուռն մերեանս ձգեն զպատանիս ։

Պօյ.

ՃԺԲ. Պայծառ գործոց և անձնանուիրութեան ի մէջ Աշխարհականաց և որդւոյ նորա։

Արիոբարզան, և որդի նր եղեն երբեմն տեսարան զօրուն հռովմայեց֊ւոց՝ օտար յոյժ յերկոցունց Տէրանց. Սրքայն կապադովկիոյ նկեալ էր 'ի բանակ Պոմպէոսի. և մինչդեռ զօրա֊գլուխ բազմեալ էր յիւրում բեմի, նստէր սա առ նմա յաթոռ գահաւորակ. Բայց եթէ զիւր որդի (զմախուցեալն յիւրմէ զաւաձանութեամբ և անկեալ առ Պոմպէոս,) զի կայր մօտ 'ի դրանց դպրին, Պորոմանք հօրն ծունկալե֊ցին տեսանել զիւր որդի 'ի տեղւոջ՝ որ չէր անկ իւրում աստիճանի. Իջ յիւրմէ աթոռոյ, և չոգաւ թագ կապել նմա. յորդորեալ նստել 'ի տեղւոջ՝ յորմէ ինքն հրաժարէր. Որդին ընդդէմ դարձեալ պասկառանօք առ գործովն հօր իւրոյ, յարտասուս հէր, 'ի բաց արար զթագն, և ոչ յանձն էառ՝ որչափ և թախան֊ձիւր. Էր այսպէս դիպուածով իմն՝ որ անլուր թուէր, որ թողուլն զթագ՝ էր ուրախալի, և յոյր գլուխ դնիւր էր ըն֊կրկմեալ 'ի դառն տրտմութիւն.
Մէլ կռուոյս. և ո՞յր ոչ դալարեցէն

աչքն՝

աղէք՝ ՚ի լսել խօսկ. Ճա՛րկ եղև Պօմպէ-
ոսի ձեռն արկանել յիւր իշխանութի,
ու յանդ համնելոյ զպայպախի անլուր
կռիւ. հաստատեաց զհրաւունս հօր իւ-
րոյ և պատուիրեաց որդւոյն հնազանդել։
Որդի Միթրոբարզանայ էր համանուն
հօրն, և վասն որդիական գորովանացն
արժանացաւ մակդիր անուանս Փիլո-
պատոր, այն է՝ հայրասէր։

ԺԹ. Աշնան ուրախութեան և ծաղր մեծ՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible]։

Ստրատոնիկէ կին ցածազգի՝
դուստր ուրումն երաժշտի երգեաց եր-
գեմն՝ յորժամ էր մանկամարդ յոյժ,
՚ի Ճաշկինս Միհրդատայ այնչափ գեղգեղ-
մամբ, մինչև յափշտակել զնա։ Նորդէն
վաղվաղակի դասեցոյց զնա ընդ հարճս
իւր. և հայր նորա դարձաւ ՚ի տուն իւր
կոր ՚ի գլուխ, զի տեսոյ անգամ չհա-
մարեցաւ արժանի. Բայց ՚ի վաղիւ անդր
իբրև զարթեաւ՝ յապուշ հարաւ ՚ի տե-
սանել յիւրում սենեկի սեղանս լի սպա-
սուք ոսկւոյ և արծաթոյ, և բազմու-
թիւն ծառայից, ներքինեաց, և ըն-
տրկաց,

տըրկաց, որք առաջի առնէին նմա գեղե-
ցիկ և մեծածախս հանդերձս, և առ դրան
խըրում երիվար մի պալատական զար-
դարեալ, իբրև զաւագանւոյն՝ որոց սո-
վեալ էր կոչել բարեկամ արքայի.
Խոստացան նմա՝ թէ ծաղր առնեն զնա,
և կամէր փախչել. Բայց յորդորելով
ատրկաց և յասել, թէ պարգև է այդ
արքայի. և թէ տայ քեզ և զպապարանս
բազմահարստի ուրուեմն 'ի մօտոյ մեռե-
լոյ. և թէ այս ամառ ժամս են դոյզն
երախայրիք պարգևաց՝ որոց յիրաւի է
քեզ ակնկալել ընդ հուպ, հայիս հա-
մոզեցաւ 'ի հաւանութիւն. Յուսհեալ
արկաւ զիւրեաւ զծիրանին, հեծաւ յե-
րիվար սպասահարկութեամբ բազմաց.
և յածեալ ընդ քաղաքն ձայնէր յամ-
զօրութէ զճանապարհայն. Սէ է այս ամե-
Այլին ծանակ եղև բազմաց. որոց տայր
պատասխանի. „Օրինանք են, զի ոչ քարձիք
„լինիմ անցաւորացդ՝ 'ի մեծէ ուրա-
„խութենէս՝ որ ամփոփէ զիմ միտս".
Փառայնասէմիտս ասէ. „Տեսէք, զի ոչ առնէ
„Ճոխութիւն, և զի ոչ պտուղք նորա.
„Սա դմին օրինակի յոլովակի մարդիկ
„ծաղր լինին այլոց, և ինքեանք կարծեն
„ծաղր առնել զայլս, 'ի յեղանակելն
„մտաց

ւմտաց նոցա։ Իսկ մեք զնոյն ասիցեմք զհօրէ՝ որ պարծին ընդ անպատուութիւն և ընդ անարգանս դստեր իւրոյ. և որոյ մեք այլ իմաստ՝ բայց արբեցութիւն ինչ ուրախութեան ՚ի մեծ ինչ նիւթ ամօթոյ և ցաւոց։

ԺԼ. Մեր հայրենեաց յաղթանակէ ամենայն կորուսչական անխառնակցութեանց հարճից։

Լար Պորսենա՝ զօրավոյն ՚ի Թագաւորս Իտալիոյ առ հաստատել անդրէն զՏարկուինեանն յաթոռ թագաւորութեան Հռովմայ, զոր աքսորեալն էին արդէն վասն իւրոյ չարաչարոյ անիրաւութեանց, դիմեաց զօրու ծանու ՚ի վերայ Հռովմայ ՚ի մօտ եղեալ թէ վաղվաղակի իսկ առնիցէ զքաղաքն. վասն այսորիկ պաշարեաց զքաղաքն կամելով նուաճել զնա սովու. Նորանշան իմն գործ քաջութեան ազատեաց զքաղաքն ՚ի վըտանգէն՝ յոր կայր. Մուկիոս պատանի ազնուատոհմ, դայրագնեալ թէ զիարդ ազատացեալն Հռովմ եհաս յայն թըշուառ սահման, քան զոր յառեգոյն և ո՛չ առ Թքրօք էր երևեալ, խորհեցաւ զերծուցանել զհայրենիս իւր յանձնըռութե

 ձեռ-

ձեռնարկեալ 'ի ձեռնարկ նորալուր և
յանդուգն։ Գնաց 'ի բանակ Թշնամեաց՝
յետ խնդրելոյ հրաման 'ի ծերակուտէն.
զգացուցեալ նմա թէ խորհի մեծ ինչ
և պիտանի խորհուրդ , բայց առանց
յայտնելի իմացուցանելոյ զայն։ Խաբեաց
զպահապանսն՝ որք կարծեցին թէ յիւր-
եանց ազգէ իցէ , իբր զի երևեցաւ առ-
արտաքս ամենևին անզէն. և զի խօսէր
լեզուաւ երկրին , զոր ուսեալ էր երբեմն
'ի դայեկէն՝ որոյ սնուցեալ էր զնա։
Հասա մինչև 'ի վրան արքային, որ ընդ
միումն 'ի դպրաց՝ որոյ չէր ինչ ընդ հա
տարազ զգեստու , այլ ռոճիկս զօրուն։
և ոչ կամեցեալ Մուկիոսի հարցանել՝
ո՞ր իցէ Թագաւորն, զանդիտեալ՝ գուցէ
յայտնեսցի , և տեսեալ թէ զօրականք՝
յոլովագոյնք են մատչին առ դպիրն ,
զնա կարծեաց Թագաւոր , և սպան զնա
դաշնակաւ փոխան արքայի ։ Անդէն
վաղվաղակի կալանաւորեալ ակամայ կամօք
տարեալ եղև յառաջ Թագաւորին
ցասուցելոյ. բայց և 'ի տեսիլ բիւրուց
ահեղ և անողորմ տանջանաց՝ որ 'ի
վերայ կային նմա , կայր անվեհեր և
երևէր առաւել ահընկէց քան ահաբեկ։
Նա եմ ( ասէ ) հռովմայեցի. Մուկիոս է իմ
ժա̃ անուն.

անուան. Կամեցայ սպանանել զԹշնամին իմոյ հայ-
րենեաց, յօժարամիտ դիմագրաւեալ ընդ մահու ա-
ռաւել եւ քաջութեամբ, քան զոր ցուցի՝ կա-
մելով [illegible] զկեանսն քո. Բզէ մեզ արժան է
Հռովմայեցւոց գործել քաջաբար, եւ կրել արիաբար:
Չեմ ես միայն՝ որ խորհեցայ զայս խորհուրդ
զքեզ. կան եւ այլ բազումք, որք անձնուէր ոգին
այսմ փառաց. սպասեսցեն ժամու եւ դիպւոյ
'ի հանդիպելոյ ժամանակի եւ 'ի ժամանակաւ, Թէ
սպանանել ոգին զքեզ ժամ 'ի ժամէ 'ի վտանգէ
կենաց, եւ գտանել հանդիպեալ 'ի Խորանին զօրաց
քո ըստ կամաց Թշնամի քո՝ որ սպասէ դիպող
ժամու հարկանել զքեզ. այս է պատերազմն,
զոր յայտնեմ քեզ երիտասարդք Հռովմայեցիք
մի երկնչիր 'ի Բաղմամբոխ պատերազմէ, միայն
ընդ միայնոյ ոգւոյ մարտիլ, եւ շնորհիւ անձնա-
պատ լինել, Թէպէտ 'ի մէջ միայն Բանակաց:
'Ի բարկութեն բրդեալ Պորսենն,
միանգամայն և զարհուրեալ խռովեալ
'ի վտանգէն զոր սպառնայր Մուկիոս,
հրամայեաց պատել զնա բոցով 'ի բռ-
նիպել զնա խոստովանիլ [illegible];
բայց Հռովմայեցին մխեալ զձեռն
'ի բոց անդր բորբոքեալ, ասէ անվեհեր.
Տե՛ս որք գիտեն քամահել զմարմին խորհեն
որք տեսանեն անձանց փառաց. և ոչ
անշէջ տոկայր կեղծեն. Յայնժամ Պոր-
սեն-

ամենայն յաւուր հարեալ էր այնպիսի
նորանշան տեսիլ, էջ յերկնից բեմն, և
մեկուսացուցել զՍուկիաս ՚ի բոցոյ ան-
տի, ասէ. ՚Ի [illegible]
[illegible]
[illegible] Յայնժամ
Սուկիաս՝ որպէս շնորհապարտ ազնուա-
բարոյութեան նր, յայտնեաց նմա, թէ
երեքհարիւրք էին երդուեալ դաւա-
ճանք կենաց նորա, և թէ նմա ևս վի-
ճակաւ լինել առաջին. և թէ այլք ևս
՚ի պատրաստի են գալ հետ զհետէ։
Վասն այսր քաջութեան՝ անուն կո-
չեցաւ նմա Մէհմէտ. որ թարգմանի ջա-
ջեռնեայ. զի անպիտանացուցեալ զձեռն
զաջոյ՝ վարէր ՚ի գործ զձախոյ ձեռն։

Օձահի հարեալ Պորոսնոյի ՚ի
վտանգէն յոր գտաւ, և յորոգայթից՝ որք
՚ի վերայ կային նմա օր ըստ օրէ, խորհե-
ցաւ Չիգրտիւ առնել հաշտութիւն. և
առաջի արար զպայման ՚ի ձեռն գեօ-
ղանաց,

պանաց, որք չոքան ընդ Մուկիոսի 'ի Հռովմ, և արարին հաշտութիւն ընդ Հռովմայեցիս ։ Եւ այսպէս անվեհեր քաջութի առն միոյ ազատեաց զՀայրենիս ։

ՃԼԱ. Բնաւորութիւն սիրոյ մօր և հայրենեաց յաղթեաց երբեմն քինաւորութեան սրտից և հզօրաց։

Կորիոլանոս ոմն մեծանուն զօրապետ Հռովմայեցի՝ թշնամի յայտնեալ տրիբունական իշխանութեան, որոյ անուան և եթ յիշատակումն բորբոքէր զնա 'ի բարկութիւն, անցոյց զանցոյց զամենեքումբք՝ իւրովք բուռն և խռովարար բանիւք. աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ թէ եկն եհաս դիպող ժամ արմատաքի խլելոյ իսպառ զտրիբունութի և հաստատելոյ անդրէն զհասարակապետութիւնն յիւր նախնական վիճակ։ Սակս կոչեցաւ 'ի դատաստան առաջի ժողովրդեան, և դատապարտեցաւ յաքսորս։ Կորիոլանոս ելեալ 'ի Հռովմայ՝ լի ոխութեամբ և ցասմամբ առ իւր հայրենիս, և խորհեցաւ ընդ միտս առնուլ ինչ վրէժ երևելի՝ խոյս ետ յԱնտիոն առ Վոլսկեանս, խրախուսել զնոսա վա-

վառիլ զինու. գիտելով թէ հզօր էին
զօրու և զրամովք. Իբրև գումարեցան
ամ զօրք Մոսկեանց՝ Կորիոլանոս զե
մն անցուցէ զժամանակն 'ի զուր, էառ
ընդ իւր զկամակարս 'ի Մոսկեանց. և
ձգեցաւ յեղակարծում ժամու 'ի վե
րկրին հռովմայեցւոց մինչև ազդ լինել
էր 'ի Հռովմ ինչ. Նա առ աւար բազում.
խաղաց ապա զօրովք իւրովք 'ի կողմն
Հռովմայ. և չոգաւ բանակեցաւ քառա-
սուն ասպարիսաւ հեռի 'ի քաղաքէն:
Մերձենալ նորա ելից զամ զՀռովմ
տարակուսանօք և արհաւրօք. երևէին ամ
ճանապարհք լի կանամբք, որք ընթա-
նային յայսկոյս յայնկոյս որպէս զմտա-
թափս. և Մհեանքն լի էին լալագին ծե-
րովք՝ որք խնդրէին զօգնութիւն 'ի դիցն.
Բայց դժուարին է ժողովրդեան՝ զար-
ժանի յարգ ընծայել որդեանց այլոց՝
յորժամ յիւր ձեռս է տէրութիւն.
Ընդոսնեալ արհամարհանօք զայրն ե-
րևելի զամբաստանեալ, տեսաք՝ որպէս
խրոխտանօք խիզախէր առ նա. և արդ
ահա նոյն ժողովուրդ յողոք և յաղեր-
խանարհի առաջի նորա, չգտեալ այլ
ապաւէն՝ բայց զնորին իսկ գթութիւն,
յոր ոգւով չափ կամի լինել ապաստան.

Ո՛չ յայս միտ էր ծերակոյտն, որ 'ի մէջ Թախանձելոյ ժողովրդեան՝ ոչ կարողացաւ չարձակել դեսպանս առ Կորիոլանոս, հրաւիրանաւ անդրէն հաստատելոյ զբնակութիւն իւր 'ի Հռովմ, և աղաչանօք վախճան առնելոյ մարտին։ Այլ թէպէտ և ամենեքին նոքա կամ ազգականք իւր էին, և կամ բարեկամք, սակայն և այնպէս ընկալաւ զնոսա անընտել իմն յախորտանօք և խստութ զայս միայն տուեալ պատասխանի. Եթէ Հռովմայեցիք կամին խօսել վասն հաշտութեան, յառաջ քան զա͞մ ոչ ինչ արասցեն դարձուցանել 'ի Վոլսկեանս զա͞մ զտեղիս և զա͞մ երկիրս՝ զոր առեալ է նոցա յառաջին պատերազմունս. և շնորհեսցեն նոցա զիրաւունս քաղաքացութեան, որպէս արարին ընդ Լատինս. այլ եթէ ոչ՝ զգուշ առնուլ ունին, եթէ պատերազմն ոչ միայն չարաչար նոցա ընթացեալ էր, այլ առաւել ևս գրգռեսցի և բորբոքեսցի. Եւ 'ի դառնալն միւսանգամ աղաչել՝ զի ցածուսցէ զխստութիւն իւր, լսել անգամ չառ յանձն։

Դարձեալ ևս յաւելան յայնժամ 'ի Հռովմ արհաւիրք և շփոթք. այլ ոչ իսպառ հատաւ յոյս նոցա. Քրմա-

տա·

տակութիւնս առաքեցին առ նա միւս-անգամ՝ 'ի քրմապետաց, հաւահմայից և 'ի քրմաց, զգեցեալք իւրաքանչիւր ըզհանդերձ պաշտաման իւրեանց, և ոչ թէ դիւցական փառօք. այլ վասն այսոր չեղև ինչ նմա փոյթ.

Տեսեալ՝ թէ իրքն հասին 'ի չա-բաչար պահման, տէկինայք Հռովմայ դիմեցին առ հասարակ 'ի տուն Վե-տուրեայ մօր Կորիոլանոսի, քաջ դիտե-լով՝ որդի սիրապատար ակնածութիւն յամի ցուցեալ էր առ սա քաջիկն այն Հռովմայեցի քաջ օրինակն երախտապար-տաց՝ նմանօղ իւր լինելոյ։ Յուշ եղև տիկնաց հռովմայեցւոց, զի թէպէտ և 'ի դերև ելին հրեշտակութիւնք ցայժմ վայր առաքեալք առ Կորիոլանոս, բայց կայ դեռ Հռովմայ միւս ևս ապաւէն, դիմելով 'ի մայր խրոխտ աքսորականին։ Վետուրիա ոչ դիտաց 'ի բաց կալ յայն-պիսում պահու 'ի ծառայութէ իւրոց հայրենեաց։ Նա ընդ իւր առեալ ըզՎոլումնիա զկին Կորիոլանոսի, երկոքումբք որդւովք՝ զորս ծնեալ էր 'ի նմանէ, և որոց մին դեռ տղայ էր 'ի գիրկս, չոգա-'ի բանակ թշնամեաց, ընդ իւր ունելով և զբազմութիւն յոյժ այլոց տիկնաց։

Ն

Եւ այնպէս կանայք ձեռն արկին պաշտ-պանել արտասուօք և աղաչանօք զքա-ղաքն, զոր այլ ոչ կարէին պաշտպանել արք զօրութեամբ զինուց։

Իբրև այդ եղև Կորիոլանոսի յու-մեմնէ յիւրոց զօրականաց, թէ կամի [illegible] ինձ տեսանել զմայր քո և զկին և զոր-դիս՝ որք գան առ քեզ, էջ յիւրմէ գահէ, և վազեաց որպէս խելայեղ՝ շփոթիւք և տագնապաւ, դիրկս արկանել մօր իւ-րում։ Այնժամ տիկինն արդարև հռով-մայեցի, փոխանակ աղերսանաց առնամ սրտմտեալ, և ձեռամբ յետս ընկըր-կեալ զորդին, ասէ ցնա խոժոռ դիմօք և ձայնիւ. Առաջ քան զընդունելութիւն գրկախառնութեանդ կամիմ գիտել. արդեօք ե-կաւորութեան 'ի խօսել՝ առ որդի՞ իմ եկի, եթէ առ թշնամի ոք. Եթէ եկի 'ի մայր քո հայեցեալ [illegible] գերի, թէ եկի առ որդւոյ քո։ Իսկ զիարդ [illegible] յա-[illegible]. ոչ [illegible] էր [illegible], [illegible] 'ի [illegible] զմեզ [illegible]. և [illegible] քոյ հայրենեաց։ Որպէս [illegible] զերկիրն՝ որ եւ մեզ օրոց և սնոյց զմեզ 'ի ծոց իւր. Որպէս [illegible] 'ի մեզ [illegible], որպէս և [illegible] մեզ քո [illegible]

[illegible]

Զհետ բանիցս Մեսրոպայ՝ յաւելան ողբք և հեծութիւնք մծ տիկնաց Հռոփսիմայ. որք լային զթշուառութիւն իւրեանց և զհայրենեաց. Ո՛չ կարաց Կորիոլանոս զդէմ ունել յանդիմանութեան մօր իւրոյ, առ որ ունէր հանապազ 'ի սրտի ակնածութիւն և սէր. Գիրկ

էարկ

եարկ զնովաւ. և 'ի դրկախառնութեան անդ առ Վետուրիա, յաղթեցեր ինձ յաղթութիւն անողորմ, որ վաղվաղակի եւս լիցի ինձ մահաբեր:

Զայս իբրև ասաց Կորիոլանոս առ Վետուրիա, երարձ զպաշարումն. և հաստատեաց դաշինս 'ի մէջ Հռովմայեցւոց և Վոլսկեանց, և այնու զերծաւ Հռովմ՝ ոչ այնչափ ակնածութե առ դեսպանս, առ կրօնս, և առ հայրենի դիս և 'ի քրմապետս նր, որչափ 'ի բուռն սէր ծնողի իւրոյ, կնոջ և որդւոց:

ՃԼԱ. Օրինակ պատուական անշահասիրութե, որում անօրէն՝ է օրէնք օրինապահն ապակինութեան:

Կուրիոս Հիւպատոս հռովմայեցի ընկալեալ կրկին յաղթանակ 'ի ձեռակուտէն վասն կրկին յաղթութեանց իւրոց 'ի վր Սամնիացւոց և Սաբինեանց. զորս և սակաւեաց խնդրել հաշտութի՝ ապա դարձաւ 'ի տուն իւր՝ որ յանդի:

'Ի ժամանակի յորժամ էր անդ Կուրիոս, Սամնիացիք՝ որոց ընտրեալ էր զնա իւրեանց փաստաբան և խնամա.

մակալը. առաքեցին առ նա զգլխաւորն
ազգին իւրեանց երեւելի ընծայիւք, յոր-
դորել զնա՝ զի օգնեսցէ նոցա իւրով մե-
ծարդութբ 'ի ծերակուտին, առ ընդու-
նելոյ պայմանս հաշտութեան նպաստաւորս։
Գտին զնա յանդի՝ յիւրում աղքատին
տան, զի նստէր 'ի տախտակի առ խա-
րուկաւ, եւ ճաշէր փայտեայ պնակաւ։
Նյս ամ հանդերձանք լեալ ցուցանեն,
թէ զինչ էր իւր կերակուր։ Բովանդակ
յայնմ տան չերեւէր ինչ արժանի զար-
մանալոյ՝ բայց 'ի տանուտերանէն։
Իբրեւ զեկուցին զպատճառ եկաւորութեն
իւրեանց առաջի արարին նմա զոսկին եւ
զարծաթն, զոր հասարակապետութիւն
իւրեանց հրամայեալ էր նոցա աւանդել
'ի ձեռս նր. բայց ոչ գիտէին նք զընա-
ւորութիւն Կուրիոսի։ Պատասխանի ետ
պատգամաւորացն շնորհաշուք գոհութբ,
բայց զընծայսն ընդունել չէառ յանձն
ամենեւին, 'ի վերայ բերեալ ազնուա-
բարոյութեամբ, որ վայել էր ճշմարիտ
Հռովմայեցւոյ. Աղքատել հաճոյ է ինձ,
ոչ ստանալ անձամբ ոսկի եւ ծանրութիւնս, այլ
հրամայել՝ որոց ստացեալ ունին զայն ստացուածս։
Նա յաղթող էր ընդ այն ժամանակս դրօշմ
նշանի Հռովմայեցւոց. Նաանձնակի

այնպէս հաճոյ էր նոցա անպաճոյճ շա-
փաւորութիւն, որ ոչ միայն շամաչէին
այլ պարծէին ևս ընդ աղքատութիւն.
Բայց հրապարակաւ պահէին զհրամա-
յական պատիւ այնպիսի աւագամեծար
մեծահանձնութեամբ և մեծամտութբ,
մինչև թուէր նոքիմբք դուշակել նոցա,
թէ հանդերձեալ են լինել տէր տիե-
զերաց. Ա՛յս այր մեծարու, ահընկէց 'ի
թշնամիս իւրոց հայրենեաց, և մեծա-
զգանչ յիւրում դարու, չունէր այլ
հայրենատուր եկամուտ, բայց դոյն
կալուած՝ թերևս ոչինչ աւելի քան
զեօթն լծվարաց երկիր. զի ոչինչ զան-
գիտէր աւել յատենի ժողովոց, թէ
„քաղաքացի՝ որ ոչ շատանայ եօթն լծ-
„վարօք, է քաղաքացի վնասակար՝՝.
Ո՞ երբէք իշխեցէ այժմուս համեմա-
տել զմեծակառոյց ապարանս մեծամեծ
տեարց (յորս հասարակօրէն ոչ այլ ինչ
երևի՝ մեծ, բայց իւրեանց պերճասէր
ունայնութիւն,) ընդ հիւղ Կուրիոսի.
զի յիրաւի թուի ինձ, զայդ անուն տալ
իւրում ցածուն և աղքատին խրճթի.
Կատոն գնայր ստէպ կիւրպ յայց աղքատին
տանս՝ որ էր 'ի սահմանս Սաբինեանց,
և մօտ իւրոց կալուածոց, և ակնկառոյց
հայէր

հայեր յայն զարմացմամբ, միանգամայն
և յարգանօք և տարփմամբ նմանօղ
լինելոյ տեառն նորա.

ՃԼԳ. Անշէջ արիական առաքինութիւն ոչ յա-
պաղեցուցանի սոսկալեաց շնորհաց, և ոչ յանդրդուելի
սոսկալի երեւութից ոչնչաց չերկնչել կանգնեցք.

Պիւռոս արքայ Էպիրացւոց կա-
մեցեալ զարհուրեցուցանել զՓաբրի-
կիոս դեսպան Հռովմայեցւոց որ եկեալ էր
առ նա խօսել զկալանաւորաց ըմբռնելոց
'ի յանցեալ կռուի, որոյ չէր երբեք տե-
սեալ զփիղս, տեսանել թէ իցէ այնպի-
սի անվեհեր, որ էր անընչասէր: Եւ վասն
զի յառաջին դարհուրանս առաւել ե-
րևի արիութիւն կամ տկարութիւն,
հրամայեաց փղապետին իւրում զինու
զարդու զարդարել զմեծն 'ի փղաց, և
տանել 'ի տեղի՝ ուր հանդերձեալ էր
խօսակից լինել ընդ Փաբրիկիոսի, և ունել
զնա անդ ընդ վարագուրաւ, առ երևե-
ցուցանելոյ՝ յորժամ հրամայեսցէ.
'Ի կատարել ժամու, և 'ի լինել նշանի, 'ի
բաց առաւ վարագոյրն. և երևեցուցան-
կարծակի այն վիթխարի գազան, ձգեալ
զկնճիթ իւր 'ի վերոյ քան զգլուխ
Փաբ-

Փաբրիկիոսի, և ձայն արձակեալ ահեղագոչ
Յայնժամ Փաբրիկիոսի շրջեալ մեղմով
զերեսս, առանց ինչ նշանի զարհուրա-
նաց և երկիւղի, ասէ ց'Պիւռոս ժպտե-
լով. Ոչ երէկ ոսկին քո զիս հրապուրեաց, և ոչ
այսօր փիղդ զարհուրեցուցանէ.

ԺԼԴ. Պիւռոսոյ է շնորհացանել զժամանակն
ընդ Հռոմ., նոքա 'ի սեղանի խորհուրդ 'ի
մէջ ատենա_ շօգտակարաց.

Սերոյիշեալն Պիւռոս և Փաբ-
րիկիոս այն ինչ բազմեցան յերեկոյին
'ի սեղան, խօսեցան զբազում ինչ իրաց.
զորոց եղեն զկրողութեց Յունաստանի,
և քննութիւնք զպէսպէս աղանդոց
փիլիսոփայից: Կինէաս պնդեալ յաւէտ
զԷպիկուրոսին. և մեկնեաց մանրա-
մասն զիմաստ Էպիկուրեանց զպէս, և
զհրաժեշտ կալոյ իմաստնոց ըստ նոցա
'ի հոգոց հրապարակական իրողութեց
և 'ի կառավարութենէ պետութեանց:
Ասէ. „Հաստատեն նք զվերջին վախ-
„ճան, և զգերագոյն բարի մարդոյ 'ի
„հեշտութիւնս. խորշին յաւագութեց
„և 'ի պաշտամանց, իբրև 'ի վնասուէ և
„'ի թունոյ այնր անուշակ անցաւութե,

„յոր

ն, յոր հաստեն զերջանկութիւն ։ Մէ_
,,դնեն յաստուածութեան սէր, առա_
,,քինութիւն, և բարկութիւն. պնդեն թէ
,,ոչինչ վայլթ է նորա զմարդկանէ, և
,,տարագրեն զնա 'ի կեանս խաղաղա_
,,կանս, յոր անցուցանէ զամ դարմ
,,անզործ՝ ընկղմեալ յամ ազգս գրգա_
,,նաց և փափկութեան''. Յայժ է հա_
ւանական, թէ գիրք և հեշտասէր կեանք
Տարենտացւոց՝ լեալ իցեն առիթ զրու_
ցացս ։ Այն ինչ Կինէասայ բանք 'ի բե_
րան էին, Փաբրիկիոս՝ որում նոր իմն
էր վարդապետութիւնս, և որ չիմանայր՝
ոմ այր մի ձառ առող յայսպիսի սկզբանց՝
իշխեցէ առ իմաստունս համարել զանձն,
մանաւանդ յայնպիսում իմաստալիր քա_
ղաքի, ձայն եբարձ ուժգնակի. Մի թէ
Հերակլէս, ո՞ր էր թէ Սամնիտցիք և Պիւ_
ռոս հաւատացուցէին յայսմ վարդապետու_
թեան 'ի պատերազմել երբեմն ընդ Հռո_
մայեցիս.

Ո՛ ի մէնջ 'ի բաղդատել զնախնի սո_
վորութիւնս ընդ մերումս, ակն ունիցի
տեսանել, թէ զոյգք որք լինէին 'ի սե_
ղանս քաջաց պատերազմողաց, ոչ միայն
յածէին զերգողութեամբ քաղաքականօք՝
այլ և զնիւթովք զինականօք և բա_
րոյա_

բղխականօք ։ Զբօսանք այսպիսիք հա-
մեմատըք մտացի խորհրդածութեամբք
և պատասխանատուութեք, չարժիցի՞ն ա-
ւելի քան զխնճոյս ինչ, յորս յոլովակի
'ի սկզբանէ խրախութե՛ մինչ 'ի վախ-
ճան, եպիկուրեան ձայնարձակութեամբ
անհանճար զրոյցք 'ի միջի լինին 'ի գո-
վեստ քաղցրութեան կերակրոց, զհամե-
ղութենէ արդանակացն, և զպատուակա-
նութենէ գինեաց և ծաղկահոտ
ցքեաց ։

ՃԷ. ԻՈՒԹԻԱՆ, ԷԱՐԵԽԱՐԳՈՒԱՆ Ւ ՀԱՐՍԱՍՈՒ-
ԹԻԱՆ ՓԱՂԱՔՇԻ Ւ ՓԱՂԱՔՇԱՅԱՐՈՅ ՆԱԽԻ ՉԻՆՈՀԵՃ
ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԵՆԷ Ւ ՇՓՈՆ ՏԱՐԱԴՐՈՒԹԵՆԷ
ՀԱՆՃԱՐԵՂ ՆԱԽԱՆՁԱՒՈՐԻՆ ։

'Ի միջ ամ սահմանադրութեանց
Նումայի, (Թգրին Հռովմայ՝ երկրորդէ
յետ Հռոմուլոսի) ասէ Պլուտարքոս,
մեծարգի եղև բաշխն ժողովրդեանն յար-
ուեստս և 'ի գործաւորութիւնս ։
Ընդաստին 'ի սկզբանէ բազմամարդացու-
Հռովմ յերկուց ազինց՝ 'ի Հռովմայեց-
ւոց և 'ի Սաբինեանց, կամ Թէ կամք իցեն
ասել, էր բաժանեալ յերկուս պառակ-
տմանս հակառակս, 'ի սակս այլևայլ

ժա ող.

ազգատոհմին նց, որով իբրու օտարք էին յաչս մեծամեծանց․ յորմէ ծագէին օր ըստ օրէ 'ի մէջ նց կռիւք և հակառակութիւնք․ Վասն զի տեսաց Նումա, թէ քանի պիտանի և օգտակար էր բաժանել 'ի քաղաքէ զայն ոգի երկպառակութեան, որ տայր առնել և խորհիլ միում' թէ ես եմ Սաբինեան․ և այլում' թէ ես եմ Հռովմայեցի․ միում' թէ ես եմ հնազանդեալ Տիտոսի․ և միւսում' թէ ես եմ հնազանդեալ Հռովմուլոսի։ Ապա խորհեցաւ ձեռն 'ի գործ առնել, Նա զի պնդկցէ մարմինք, որք ոչ միանան ըստ միմեանս յամբողջութե, դիւրաւ շաղին' յորժամ տրորին և 'ի փոշի լուծանին․ զի մանրութե մասանց դիւրայուցանէ զխառնուրդն․ վնկ հօրկ հնարեցաւ բաժանել զայն երկու մեծ մարմին Հռովմայեցւոց և Սաբինեանց 'ի մանր մանր մասունս․ որոց անջրպետ նանրցուցանէր զխտիր և զպէսպիսութի ազանց և ծագման, որ խափանարարն էր նց կատարեալ միաբանութե։ Այս հայեցեալ' բաշխեաց զժողովուրդն 'ի բզմ գործաւորութիւս, որպ 'ի նուագածութս, յոսկերիչս, 'ի հիւսունս, 'ի ներկարարս, և յայլ այսպիսի արուեստս․ կարգեալ զնս ըստ արուեստից 'ի պէսպէս

 դասս,

գասս, և կարողացեալ յիւրաքանչիւրում մի միայն մարմին. սահմանեալ, նա եղբայրակցութիւնս, տանս և համախմբութիւնս. շնորհել իւրաքանչիւրում 'ի հասարակութեանց անտի դիւր մասնաւոր առանձնաշնորհութիւն, և հաստատեալ պայսուիկ 'ի մէջ նց միաբանութիւն, որ մնացորդ նց զկենսն Հռովմայեցի և Սաբինեան։

Այս դնել սփոփութեան քաղաքացւոց, ջանալով զի մի անկցին 'ի թշուառութիւն, կամ զերծուցանելով զնո՝ թէ յայնմ վիճակի գտցին, գործ է գեղեցիկ՝ ողջամիտ քաղաքականութեան. և Նումա անդստին 'ի սկզբանէ թագաւորութեան իւրոյ, խնամ կալաւ այսմ առանձինն. Որպէս գիտէր, թէ աղքատքան զայլս միշտ դիւրամէտ են 'ի յուզել խռովութիւնս. զի անգոհ լեալ զարդի վիճակէ իւրեանց, փոփոխումն բաղձն ակնունին առանց ինչ կորուսանելոյ՝ սատանալ բնաւ. Ոչ ընուն ինչ և ոչ զպաշտօն քանզի տանուտէն. անփոյթ լինին կերակրել և դաստիարակել և խրատել զորդիս իւրեանց. նա ոչինչ միտնեն հաստել նց զհաց, և մշտնջենաւորել զտոհմ իւրեանց, յոր հաստատեն

է

է հզօր զօրութիւն և ճոխութիւն սահ-
մանաց։ Ապա 'ի բառնալ զայսմիկ ան-
պատշաճութիւն՝ բաշխեցի Հռոմայ յաղ-
քատ քաղաքացիս զերկիրս առեալս, զի
հեռի իցեն 'ի դատարկութենէ և յա-
նիրաւութեանց հետևորդաց նց, թողեալ
նց վայելել յօրինաւոր բերս վաստա-
կոց իւրեանց. և զի յօժարամտեսցին 'ի
խաղաղութիւն, պատուէալ 'ի մշակութ,
զոր չէր 'ի գործ արկանել յայլում ժա-
մանակի. Այլ արդարև չէր հնար նմա
պահել յայս սակս միջոց քան զայս
ճահողական և զթասիրական. որ չէր
ինչ ծանր և մեծամեծ, և չկայր և ոչ
ինչ առ առաւելուլ զարուց 'ի զարս
զզօրութիւն հասարակապետութեան, յա-
ճախեալ միշտ նորանոր քաղաքացիս։

ՃԼԴ. Պռոմէթէսէ է աշխատասիրութեանն, որ զանձն
առ իւր և առաքել երկրպագութեանէ. զի այլ ծա-
ծուկ իմաստութեամբ իւրով փրկութեան
հասարակաց կործանեցէ, ոչ երկեւ յայսմ.

Առ Թագ. րութ Տարկուինիոսի
Հռովմայ՝ պատահեաց յապարանս ար-
քայի հրաշանշան ինն. եւ յանկարծ օձ
մի 'ի փայտակերէն սեանէ՝ որ երկեւցոյց
յոյժ.

Յոյժ զԹագաւորն, և ստիպեն զնա ա-
ռաքել արս 'ի Պնեղիոն առ Հարցանե-
լոյ վասն այսր խորհուրդ 'ի պատգա-
մախօսէն. և զփոյթ կատարումն յանձն-
արարութեանս ոչ այլում արժան հա-
մարեցաւ վստահանալ, բայց իւրոց երկուց
որդւոց Տիտոսի և Դոմետիայ, որք
խնդրեցին միայն, զի լիցի նոցա ուղեկից
Բրուտոս՝ որդի հօրաքեռ իւրեանց՝ որոյ
անուն Թարգմանի անճև, ոմն Թէ անուրդ-
ումն և խօթամիտ. զայս մակդիր անուն
ընկալաւ նա խնդութ, զի էր արհամար-
հանօքս ծածկեսցէ զպատտիչն ժողովըր-
դեան Հռովմայ, որում դեռ չէր դիպող
ժամանակ հանդիսանալոյ.

Տարան ընդ իւրեանս երկոքին ար-
քայորդիք զԲրուտոս 'ի Պնեղիոն, ոչ
այնչափ ուղեկցութեան աղագաւ, որչափ
'ի զբօսանիլ զճանապարհայն աղաւաղութ
նր և անմտութ: Իբրև հասին՝ անդէն
վաղվաղակի ընծայեցին զդահամունս իւր-
եանց Ապողոնի. և ծաղր առնէին յոյժ
զԲրուտոս, զի ոչ մատոյց նմա ինչ՝
բայց ցուպ մի անհարթ. և այն էր եղէգն՝
զոր 'ի ծածուկ ծակեալ էր նր, և ան-
ցուցեալ յայն ձող ոսկի, 'ի խորհրդաւոր
նշանակ իւրոյ բնաւորութ և հանճարոյ.

Իբրև

իբրև կատարեցին որդիք Տարկուինիոսի՝ որ ինչ յանձն էր նց, և ընկալան ըղ-հրեշտակութեան իւրեանց զպտսխանի, կամ եղև նց է վայրաքննութբ իմանալ, թէ ո՞ ՚ի նոցանէ սահմանեալ իցէ լինել յաջորդ թագաւորութեան։ Նա պատասխանի պատգամախօսն։ Նա՝ որ նախ համբուրեսցէ զմայր իւր։ Բան եղին Տարկուինեանք ՚ի մէջ իւրեանց ՚ի ծածուկ ունել զբան . . . և հաստատեցին ՚ի մէջ իւրեանց արկանել վիճակ, թէ ո՞ ՚ի նոցանէ երկոցունց է հասանելն ՚ի Հռոմ յառաջագոյն համբուրեսցէ զմայր իւր։ Դիպուածս յայտ արար, թէ տխմար և անմիտ կարծեալ Բրուտոսն լաւ քան զայլսն իմացաւ զմիտ պատգամախօսին, զի կամաւ անկեալ ՚ի գետին համբուրեաց զերկիր. ՚ի մտի եդեալ՝ թէ նա է հասարակաց մայր ամ մարդկան։

Այս Բրուտոս եղև որ արտասահմանեաց զթագաւորութիւն Հռովմայեցւոց՝ ըղ-հասարակապետութիւն հաստատելով։

Ուշաք

ՃԼԵ. Որչափ 'ի մեծութեան կամ 'ի երանութեան ոք կեցէ, պարտ է նմա յուշի կալել և զվիճակ նախնին իւրոյ անփառաւորութեան կամ աղքատութեան:

'Ի Հանդիսի Սատուրնեան կամ Կռոնոսեան տօնից, որ կարգեալ էր 'ի պատիւ Սատուրնոսի՝ այն է Կռոնոսի՝ սովորութիւն իմն իմաստութք կարգեալ էր 'ի Հռովմ 'ի յիշեցուցանել Տեարց թէ՝ և ստրուկք մարդ են իբրև զնոսա, յորմէ և արժան է գթասիրել առ նա, և հայել 'ի նոսա իբրև 'ի ստորադաս սեղանակիցս և բարեկամս: Մինչ 'ի Հռովմ յայնմ արարողութեան, որում քան զամ հնար էր ողդել ամբարտաւանութի և անձնահաճութիւն, իբր 'ի յաղթականն հանդիսի, յորժամ յաղթօղն 'ի բարձանց շքեղաշուք կառաց տեսել էր ամենայն ժողովրդեան, դնէր նա 'ի թիկանց զմի 'ի ստրկաց՝ ասել նմա ը զահս պահս. Յիշեա, զի մարդ ես:



ՃԼԶ

ԺԸ. Ողջանեաց և սրբեաց համարձակելո-ութեան դեսպանաց Պրիվերնոնի, որով ստա-նան երանաւոր փառաւորութեան ճառողմե-ակցանէ:

Մի 'ի խոստովանող ծերունեաց՝ եհարց ցդեսպանս Պրիվերնոնի, զի՞նչ պատիժ արժանաւոր համարիք ձերոց քաղաքակցաց. յայնժամ մի 'ի նոցանէ ետ պատասխանի. Օրայն՝ որում արժանաւորեն համարեալքն արժանի ազատութեան. Տեսեալ հիւպատոսին զխոժոռութիւնն՝ զոր արկ 'ի սիրտս այս պատասխանի խրոխտ, և ոչ ցածուն՝ ում վայել էր յայնժամ. առ յորդորելոյ տալ մեւս եւս պատասխանի քաղցր, իբրում գորովական և սիրալիր հարցման, ասէ. Ապա եթէ ներողութեամբ մեք ճոխորդութեն զմարդիծն, ադրդեալ հաշտութեան հաւ-ջեք ընդ մեզ: Իսկ դեսպանն. Ճառագայթն և մշտնջենաւոր, եթէ դաւաճանեք լցեն ճակա-ռարք. անապաստ և ասպատակ, եթէ չեղեն այտպիսի: Իմանք 'ի ծերունեաց առաւել եւս զայրացան է այս երկրորդ պատասխանի. սպառնալիս իմն համարեալ զայն, և ոչ թէ բացերև յայտարարութիւն մարտի. բայց խոհականքն և զգօնաւորք այլազգ համարեցան: Ռամկի արարին, թէ

Թէ այդ է պատասխանի առն քաջասրտի
և նախանձաւորի իւրոյ ազատութեան։
Ասեն. Աղքատէն համարեցէք զնէ ժողովուրդ
ինչ համագամար, կամ զնէ աստանդաւոր որք
կայցեն ծածկեալ կամաւորապէս 'ի վիճակի՝ ընդ
որ է անգոհ, և ո՛չ խնդրեսցեն զերծանել զկող-
մանս իւրեանց յետանկատ ընկեցին. Ազատութեան
չէ արժանի. Բայց 'ի կողմանէ այնց՝ որք
ատենէին զայն յօժարութեամբ որպէս. և չէ՞ր ակն-
կալել համարձակութեան 'ի ժողովրդենէ՝ զոր
ծառայեցուցանէին կամին. Խուպաստոն ըն-
դեաց ազդու բանիւք զկարծիքս. և ասէ
'ի ձայն բարձր՝ լու 'ի լու ամենեցուն,
որք այլազգ ինչ խորհէին. Նոքա միայն՝
որք նախանձայոյզքն են ազատութեան, արժանի
են լինել համոզմայեցէ. Այս կարծիք զօրա-
ցան. և տուան Պրիվերնոնացւոց իրա-
ւունք Հռովմէական քաղաքացութեան։

ԾԷԹ. Որ բան նորալուր և օգտակար՝ ա-
ռնել պէտք 'ի սէրս ատամբակայ, քան թէ
բռնութեանք և ստրկութեանք ծնեալք
'ի կռեց։

Որ երբեմն զի ժողովուրդն Հը-
ռովմէական նեղեալ յոյժ յանիրաւու-
թեանց ծերակուտին խոյս ետ 'ի լեառն
նուէ.

նուիրական։ Ագրիպպաս Մենենիոս որ 'ի նորոց ծերունեաց՝ և այր մեծարու- քաջս ամենեցուն՝ յանձն առ 'ի վեր արկանել զպաշտօն միջնորդի և զգօնու- թեամբ իւրով ղեկոյց պապոտամբքն 'ի հաշտութիւն ընդ ծերակուտին։ Առաջի արար նմ̃ զողբալի հետեանս երկպառա- կութեանց, յորոց երբեմն լեալ էր կոր- ծանումն ծաղկեալ թագաւորութեանց. և զբազմապատիկ օգուտ միաբանութեան, որ ամբառնայր 'ի գերամբարձ զօրութի̃ և մեծութիւն եւս և զտևար պետու- թիւնս։ Իսկ 'ի վախճան բանին եբեր և առակ, զոր մ̃քին դիտէին լինել առա- պել, բայց նորութեամբն յայնժամ կարէ̃ ին ազդեաց 'ի սիրտս ամենեցուն։

,,Յորժամ անդամք մ̃դկային մարմնոյ՝ ասէ,
,,չէին ընդ միմեանս միաբան՝ ոմ̃ արդ,
,,և անդամք իւրաքանչիւր էին տարա-
,,խորհ և տարալեզու, ցասուցեալ այլոց
,,մասանց մարմնոյ՝ զի մ̃մքն աշխատէին
,,վասն ստամոքսի, և նա անգործ և հեղ-
,,գացեալ՝ վայելէր 'ի գործանս՝ զոր հան-
,,դերձէին նմա, առ հասարակ ընդդէմ
,,դարձան նմ̃ ։ Հաստատեցին բան 'ի
,,միջի, զի ձեռք այլ մի՛ տարցեն զկերա-
,,կուր 'ի բերան, և բերանն մի՛ 'ի ներքս
,,ընկալցի

,,ընկալցի, և ատամունք մի աշխատ լի-
,,ցին ՚ի ծաւքել: Բայց կամեցեալ ճնշել
,,այսուհետև զստամոքսն սովու, անդամք
,,ամ և առհասարակ մարմինն անկան
,,՚ի թմրութիւն և ՚ի նուաղումն. և
,,յայնժամ ծանեան յեղեղոց իւրաց, թէ
,,ստամոքսն ոչ կայր անգործ՝ որպէս կար-
,,ծէին. և թէ յառնուլն զնուունդ յայ-
,,լոց անդամոց, սնունդ մատակարարէր
,,և նա նմ, հաղորդեալ ամ մասանց
,,մարմնոյ մարսողութեամբ կերակրոց՝
,,զարիւն, որ զօրացուցանէր զնոսա և
,,պահէր ՚ի կեանս, հոսեալ ընդ ամ
,,երակս". Համեմատեաց զայն ներքին
հակառակութիւն մասանց մարմնոյ՝ ընդ
երկպառակութեան, որ որոշէր առ ժամն
զժողովուրդն ՚ի ծերակուտէն. և այս նը-
մանաբերութիւն որ էր յոյժ և նման,
հաճոյ եղև ժողովոյն.

ՃԾ Յովհաննու խրատ Մեղանեան առ էնի ծե-
րակուտէն, առ հասարակութեան պահել խնդրա-
կալելեան.

Ո՛րքան չերկնչիք ՚ի չորեքտասնի,
որչափ և մեծ իցեն. Ո՛հ այդպիսի, կարէ
իսկ երկնչել, բայց առ ապիրատութեան
և

և թուլութեան սրտի հայեցեալ յերեսս միմեանց՝ ոչ իշխէք մտել ՚ի մի կողմանց. յուսացեալ էցէք թերևս ՚ի դիս անմահս, որք յոլովակի ապրեցուցին զինքնակալութիւնս. օգնականութիւն դից ոչ ստացանի ուխտիւք, կամ տկար և վատասիրտ հայցուածովք. Արթնութիւն և ժրութիւն և քաջ խորհուրդ միայն արժանաւորեն զմեզ նոցուն պաշտպանութե̃. եթէ տայք զանձինս դատարկութեան և պղերգութեան, զո՞ւր խնդրէք զօգնականութիւն դից. բարկանան ձեզ և դառնան ՚ի թշնամութիւն. փոխանակ զի ոչ խորհիք իմաստութեամբ, այլ յիմարութեամբ.

## ՃԽԱ. Աթենեցուն՝ մանկտանց իշխանաւորաց արժան է ունել զիշխողութիւն կամ պատա- պետութիւն յաղագս երողութեանն.

Պոմպէոս ետ պահել Կեսարու զկուսակալութիւն (կրկին) Գաղղիոյ և Իլիրիկոյ զամս հինգ. և այն էր ՚ի մահ մերձաւորել զիւր զօրութիւն և զփառս, զիւր ապահովութիւն և զկեանս. Վասն զի այս շարունակութիւն եղև այն, որ ետ Կեսարու ժամանակ խորարմատ հաստ-

տա-

տատելոյ, մինչեւ անհնար լինել խլել զնա. եւ հարկ եղեւ ամիւ կամ ընդ օրինօք լինել նորա, եւ կամ ձեռնարկել ՚ի մարտ: Սրութիւն Պոմպէոսի անլուր էր եւ օտարոտի, մինչեւ բազում ճգամբ բանալ զաչս նորա:

Կատոն առ Ը̃դիմանալ այսմ օրինի ո՛չ կայաւ զշաւիղս՝ զոր կալեալն էր ընդդէմ առաջնոյն: Փոխանակ շրջելոյ զեւր բանս առ ժողովուրդն, շրջէ առ Պոմպէոս: „Ձհայիս (առէ,) զի
„առնես քեզ տէր գլխահար: Իբրեւ Է̃
„լծով լինիցիս եւ սկսանիցիս զգալ ըն-
„դեռն, ո՛չ կարասցես ո՛չ ՚ի բաց թօթա-
„փել, եւ ոչ բառնալ, անկանիցիս քո ըն-
„ռամբդ ՚ի վը̃ հասարակապետութե.
„եւ յայնժամ յո՛ւշ լիցի քեզ՝ բայց
„անագան, ազդարարութիւնք Կատոնի.
„յորս էր օգուտ քո անձնական, եւ
„օգուտ եւս արդարութեան եւ օրինաց
„եւ առաքինութեան": Նոյն ասէր եւ Կիկերոն առանձինն առ Պոմպէոս: Բայց ո՛չ ազդու ազդարարութիւք առաջնոյն, եւ ո՛չ քաղցր խրատք երկրորդին՝ խզեցին զթուլութիւնն որով կաշկանդեալ էր: Համարէր զեւր զօրութիւն վերագոյն քան զա̃մ պատահար, կարծել

թէ

Թէ Կեսար յամմի պէտս ունիցի յիւրմէ։
(Յորմէ տուժեցաւ չարաչար կործանումն անձին և ազգատոհմի իւրոյ)։

Ճառ. ԱՂՋԵՆԵՑՈՒՆ հասանի պատուոբէլ հասա-
բաժէալ խաղախական անիրաւութեանց։

Ապականութիւն դատաստանաց հասանեցեալ էր անցեալ ըստ չափ։ Պատանի ումն վեհանուն ըզգացոյց զայս Պոմպէոսի պայսու ժամանակաւ։ Այս պատանի Պիսոն անուն՝ ամբաստան լինէր զումեմնէ Մանլիոսէ Կրիսպոսէ, որ յայտնի էր մեղաւոր, բայց պաշտպանեալ ՚ի Պոմպէոսէ. Պիսոնի տեսեալ՝ թէ մեղապարտն Խողոպրիլ ունի ՚ի ձեռաց, ՚ի դիմի հարաւ նորուն խնամակալութի, զոր և խոսին կշտամբէր։ Պոմպէոս ասէ. Խոչ ընդդէմ ոչ ամբաստան եղէր ընդէր։ Պիսոն ասէ. տուր ինձ երաշխաւորութիւն հասարակապետութեան, եւ յամբաստանել իմում ընդէն ըմբռնեսցես զեւ խաղախական, յայնժամ խոստանամ քեզ՝ եւ ճողոպրել այսց առ պատուոր ձեան ես պատապարութեան, յառաջ եւ քան զՄանլիոսն։

˅˅˅˅˅˅˅˅˅˅˅˅˅˅˅˅˅

ՃԼԴ. Պանծալի է նա, որ ճանաչելով զան-
ձին զօրութեան՝ չկամի այլ հրաժեշտ ՚ի
ծանրաբեռն իշխանութենէ փա-
ռաւորական երկրութեանց.

Մանլիոս Տորկուատոս անուա-
նեցաւ Հիւպատոս՝ քուէարկութեամբ
Պարխուրսկին երիտասարդաց, որ կոչեին
Վետուրեան. խուռն ընթանայր ժողո-
վուրդն զՄանլիոսիւ՝ որ էր անդ, շնոր-
հաւորել նմա զիւր առաջաշարժուլի.
Յայնժամ Մանլիոս մատուցեալ յա-
տեան Հիւպատոսին, աղաչեաց զնա զի
հաճեսցի լսել նմա. Այլին ամենին միտ
եդեալ՝ իմանալ թէ զինչ ունիցի խնդրել.
և ահա հրամայեաց նա յընդունելուէ
գերագոյն գահի հասարակապետութեն,
՚ի սակս տկարութեան իւրոյ տեսութե.
՚ի վերայ բերեալ թէ ,, բաւորելի յան-
,, դըժնութիւն է զօրագլխի, որպէս և
,, նաւուղղի, որոյ պէտս ունելով առաջ-
,, նորդութեան աչաց օտարի, պնդեսցէ՝
,, թէ այլք աւանդեսցեն ՚ի նա զհոգ զկեր-
,, եանց կենաց և զկարևոր իրողութեանց:
,, Վասն այսորիկ աղաչեմ (ասէ) զՀիւ-
,, պատոսդ պատուէր տալ նորոյ քուէ-
,, արկութեան Պարխուրսկի երիտարդաց

,, որ

„որ արկ զեւր քուեայս , և յորդորել
„զնոսա նայել յառաջ քան զընտրու-
„թիւն հիւպատոսաց 'ի հանգամանս
„պատերազմին՝ որ մղելոցն է յԻտալիա,
„և 'ի մէճակ՝ որ գտանի արդ հասարա-
„կապետութ՟": Հարիւրեակն արար պա-
տասխանի ; թէ ոչ փոփոխեմ զմիտս, այլ
առաւել ես հաստատեմ զոր արարի·

Յայնժամ Տորկուատոս Ման-
լիոսի կրկնեաց անդրէն՝ ասէ համար-
ձակագոյն ևս : Թէ հիւպատոս ընտրէք զիս,
ոչ տարայց անհամբերութեան ձերոց բարուց,
և ոչ դուք իշխանութեան իմոյ հրամանի.
Աղագա պատերազմի 'ի նոր ժուժկալութիւն.

Ձեռն. Ոչ էին տաժանագործութեան սովորա-
ձաղանաւոր ձառք գաղղիացւոց, որ քերօրինակ
ցարդացոյցն է ուշադրան ողջախոհութեան և
էջադրուակ հաւատարմութեան:

Զկնի յաղթութեան Մանլիոսի
հիւպատոսի Հռոմայեցւոյ՝ գաղղիական
Յունաց, յաւուրս լինելոյ նոր անդ. կին
մի 'ի կալանաւորաց նոր արար քաջուե
յիշատակաց արժանի . Անուն էր սորա
Քիոմարէ. և էր կին Որտիագոնի՝ միոյ
'ի գլխաւորաց կամ յիշխանաց Գաղղե-
ացւոց,

ացւոց, մեծանուն յոյժ իւրով ողջախո-
հութբ, ոմն և չքնաղ տեսլեամբ: Ի բզմ
կանանց միջի որք կալանաւորեցանն է
սմա ՚ի կոտորածի լերինն Սիմպոսի՝ հա-
բաւ ՚ի սէր ոմն հարիւրապետ ոմն արծա-
թասէր, միանգամայն և ըղձասէր: Նորէն
վաղվաղակի ջանացաւ համոզել զնա ՚ի
հաւանութիւն խորոց պղծ կմ՚ց. բայց
ոչ կարացեալ յաղթել դիմակալութե
նր և հաստատուն մտացն, խորհեցաւ՝
թէ իրաւամբք իցեն բռնաւորել զկին,
այր ձախորդութիւն ցածուցեալ իցէ զնա
՚ի տրկութիւն: Նա ՚ի մոռացուցանել
նմա զկնոյն, առաջի արար դարձուցա-
նել զնա յազատութիւն, բայց ոչ առանց
փրկանաց: Սակ էարկ է նմա զումար
ինչ դրամոյ. և ՚ի ծածկել զխարդաւա-
նութիւնն յայլոց հաւանայեցւոց, թո-
ղացոյց նմա առաքել առ ազգականս
իւր ոմն ՚ի կալանաւորաց՝ ընդ որ հա-
ճեցի. և նշանակեաց առ գետափն տեղի,
ուր փոխանակութիւն լիցի տիկնոջն է
ակւոյ: Դէպ եղև զի ՚ի կալանաւորաց
մինն գտաւ մի յիւրոց ստրկայ. ՚ի սա
արկ կինն զաչս. և վաղվաղակի հարիւ-
րապետն եհան զնա ՚ի գնդէն պահպանաց
էր մութն: Ի պալ գիշերի երկու ազգա-

ժբ կանք

կանք կամ բարեկամք տիկնոջն դստան ՚ի տեղին, ուր էած հարիւրպետն զկինն կալանաւոր ։ Իբրեւ ետուն մեզ զտաղանդն ատոկեան՝ զոր հասուցեալ էին, զի այն իսկ էր սակարկեալ գինն, ասէ տիկինն իւրով բարբառով ցայնոսիկ՝ որք եկեալ էին ընդունիլ զնա, մերկել ըզսուսերս, և սպանանել զհարիւրապետն՝ որ պատաղեալն էր ՚ի կշռել զոսկին ։ Յայնժամ կնոջն Բրախացեալ՝ զի եբարձ արեամբ նորա զնախատինս իւրոյ ողջախոհութեան, էառ զգլուխ զմպային՝ զոր նա ինքն քաջութեամբ եհատ. և թագուցեալ զայն ընդ իւրովք հանդերձիւք, չոգաւ առ այր իւր Որտիագոն՝ որ դարձեալ էր յիւր տուն, յետ կոտորածի իւրոցն ՚ի լեառնն Ոլիմպոս ։ Մինչեւ գիրկս արկեալ էր նմա, ընկեց զգլուխ հարիւրապետին յոտս նր̃ ։ Զահիհարեալ առնն ընդ այն տեսիլ՝ եհարց. Ո՞յր իցէ գլուխդ. և զի՞ եղեւ քեզ, զի ձեռն արկեր ՚ի գործ վերագոյն քան զկանացի բնութիւն ։ Յանկարծակի իմն շառագունեալ միանգամայն և վառեալ յանհնարին բարկութիւն, խոստովան եղեւ զլկանս, զոր ընկալաւ, և զվրէժխնդրութին զոր արար ։ Յամ̃ ծնացուածս ժամանակաց զոր եկաց

պահեաց միշտ զնոյն սէր մաքրութեան կենաց և վարուց, որ գլխաւոր պարծանք էն իգութեան, և յանձին կալաւ զպատիւ առնացի և մեծագործ քաջութեան։ Պլուտարքոս պատմէ զայս 'ի Ճառն առաքինութեանց և քաջագործութեանց Տիկնաց. և սա հատոյց 'ի մեզ զանուն նորա, զարժանաւորն աւանդելոյ

ապագայից։

ՃԼԵ. 'Ի չէաս կատարելութեան է ձարելոյ տիօրէնութեան հասարակութեան։

Բանն ազդու է իմաստուն խրատութիւն իշխանաց՝ առ զուսպ ունելոյ զքաղաքացիս երկիւղիւ, առ պահելոյ զբարեկարգութիւն յամ կողմանս հասարակութեան, առ զգուշաւորելոյ 'ի պահպանութիւն սովորութեանց և կանոնադրութեանց. և քանզի զօրաւոր արգել է ընդդէմ մոլութեանց, անկարգութեանց, օրինազանցութեանց, խռովութեանց և ցոփութեանց, որք օր ըստ օրէ առաւելուն, եթէ ընդ պահս պահս ոչ ընդդէմ դնիցին հաստատուն պատնէշք՝ որ զդէմ կալցին, կամ գէթ մեղմեսցեն զընթացս։

Գլխ. Ա. Ներքին և դժնդակ ժողովածութիւն Հռովմայեցւոց։

Որում արդարութեան մարթ իցէ ակնկալել յատենէ, յորում որոշեալ է մեղապարտ համարել. և իբրև այնպիսիս չարչարել զամենայն զնա, որք չեն 'ի կողմն Հռովմայեցւոց. և առատաձեռնել զամ նպաստս և շնորհս այնոց՝ որք բանսարկու և թշնամիս յայտնեցան նոցա։ Տես, ո՞ր վայր հասուցանէ խիղճ և անձուկ տերելոյ։ Շլացուցանէ զմեզ առ ամ պարտաւորութիւնս և պատշաճողութիս։ Եւ արդարութիւն, յորժամ լուծ լինի մերոց առաջադիր ըղձանաց, պատարագէ իբրև զայլ ամենայն։ Որչափ յառաջատիմք 'ի հռովմէական պատմութեան, տեսանեմք զի եւս քան զեւս զեղծանին և ապախտ առնեն զնախնի իմաստս ազնուաբարոյութեան և իրաւասիրութե, առ գիրկս արկանելոյ քաղաքավարութե իմն հակառակողի ամ կանոնաց առաքինութե։ (Կոմս. Հռով. հատ. Գ. երես. 698.)

Ոչ ի բազմ ժամանակս են, յորմէ հետէ 'ի պատրվակս յաղթեն արդարութեան, և իրաւունք հզօրին յորդորք շահասիրութեան անձին։ ('Ի նոյն. Գ. հատ. 242.)

Աեւ-

Սղէթանք չոր տասն Քարոզականք՝ ծող, չափով հատուածով ՚ի նոյն Աստուածորդւոյ:

Ի՛Հ և երկինք՝ անզօր կապանք են սի-րոյ. Է թանձանալ քո զայնոսիկ, սկիզբն արարացեն տաեւ՝ որք դադարեցին եր-կնչել:

Ի՛Նցեալքն ՚ի բուն յիւրեանց երկրի, պահեն զմի զիւրեանց ոյժ և զօրու-թիւն. բայց որք փոխադրին յերկիր օ-տար, ՚ի սուղ ժամանակի այլայլեալ յօռանան:

Ի՛Մնայն ինչ փայելչական է քաջատոհ-միկ առն:

Ի՛Ք նորութիւն է կասկածաւոր:

Ի՛Ր երկայնամիտ և հեզ՝ բժիշկ է սրտի-ցեց ոսկերաց՝ սիրտ հօգած,

Ի՛Ժր վաստակաբեկ հետևող բարեյու-սոյ, երբ տեսանէ զնախանձ չարեաց՝ ըն-նապէս փոխի ՚ի ձանձրոյթ և ՚ի տաղտ-կութիւն: Ի՛րք չարատէրք սովորաբար խնդրեն պղտորել զիրսն, կարծեն թէ առաւել յաջողի որս իւրեանց:

Ի՛Նխոհեմ է՝ և նաւավար և զօրավար, որ պէտս ունելով օտարին աչօք տանել զմի, խնդրիցէ յինքն պատսպարել ըն-կեանս

կեանս և զբաղդ այլոց ։

Անհնար է բարի առնել ամենեցուն, բայց հնար է ցուցանել զբարութիւն առ ամենեսին ։ Փոքր է սա՝ որ հաճէ զմիտս բազմաց, բայց ո՛չ նուազէ իւիք զգանձ բաշխողաց ։

Անձնական օգուտն իշխեցո՛ղ է մարդկան, մանաւանդ յայնս՝ որք պատահեալ են 'ի մեծամեծ իրողութիւնս ։

Անձինք իսկ համեստք գտանին երբեմն նշաւակ զրպարտ ամբաստանութեանց, և արհամարհանս իսկ ընդունին յանիրաւի, յորժամ իրք իւրեանց են ընդ նախանձալլուկ բուռն և խեղաբարոյ թշնամիս ։

Անձինք մեծամեծք չեն միշտ զերծ 'ի ծանակ տկարութենէ ։

Անմտութիւն բորբոքեալ 'ի սրտի երիտասարդի, գաւազան և խրատ հեռի է 'ի նմանէ ։

Անյագ է փառամոլութիւն, և չշատանայ դուզնաքեան, որում մարթ է աներկեան ակնկալել ։

Ապրուստ նց՟ (այ՟ կաշառառուաց) բազումք են, սակայն և այն ո՛չ մնասցէ առ նոսա ընդ երկար. քանզի վատ արանց ո՛չ երբէք հաստատութիւն ինչ կարէ լինել շատ ։

Առաջին օրէնք պատմութեան է՝ չիշխել ասել ինչ սուտ. երկրորդն՝ չիշխել 'ի չասել ինչ ճշմարիտ. և զի 'ի գրութեան մի՛ կայցէ կասկած ո՛չ կողմնակալութեան, և ո՛չ ոխութեան: Կիկերոն.

Առատաձեռնութիւնն է առաքինութի մեծահանձանց. որպէս արծաթսիրութիւնն է մոլութիւն փոքրոգեաց և անարգաց:

Աստուած բառնայ երբեմն 'ի զօրագլխաց զամենայն քաջալերութիւն և ընդունակութիւն:

Արդարև դժուարագիւտ է քաջութիւն և խոհեմութիւն. բայց արդարութիւն դժուարագիւտ ևս է քան զայլ ամ առաքինութիւն:

Բազում զօրէ բարկութիւն 'ի սրտապնդել զքաջութիւն:

Բազում անգամ՝ բան ծաղրական՝ քան զգժնէ, քաջ և 'ի դէպ՝ ըզմեծամեծ՝ գործ վճարէ.

Բախտն կուրացուցանէ զմարդ՝ յորժամ ոչն կամի թէ զերծցին յաղետից, զոր պատրաստեալ է նմ.

Բարկութիւն առանց հզօր զօրութեան՝ ակար

ակար գործի է վրէժխնդրութեան։

Բուռն հար դիպօղ ախթից դժարուէց։

Պատերազմն մտաց վերջացի յուէտ՝ արհեստ կռուարելոյ զքաղաքացիս, քան յաղթահարելոյ զթշնամիս։

Գնա՛ յուշիկ՝ ուր դժուարին են անցք։

Գնացք իշխանաց անվրէպ կանոն են հպատակաց, որոց ոչ պիտին 'ի գործել զաւրիս՝ հրովարտակք և կարգաւորութիւնք, այլ բարի օրինակք։

Գովեստ մեծ և սիրտ վեհանձնեայ։ մեռանիլ աղքատ ընչիւք, այլ ճոխ առաքինութ̃ք և փառօք։

Գովէր Պլատոն զդարն զայն, յորում յանցուածք էին համարակալութեան արժանաւորք՝ գուղնաքեայ ինչ թիթզունք արծաթոյ։ Սենեկա։

Դատարկութիւն և անգործութիւն՝ վնասակար աղբիւր են մեղկութեան՝ ցոփութեանց՝ և անկարգութեանց։

Պարանի և խաւանի 'ի յաջողուածս և 'ի հասարակաց գովասանութիւնս թոյն ինչ նուրբ, որ գաղտագողի մտանէ 'ի սիրտս և աղէ գաղտնի իմն ամբարտաւանութիւն, յորմէ և մեծամեծ իսկ արանց և իմաստնագունից՝ դժուարին է լինել զերծ։

Նրակ.

Երախտագիտութիւնն է առաքինութիւն, որ արգո՛յն է յա՟մ ժամանակի, և յաչս ա՟մ երկրի. իսկ ապերախտութիւն մոլութիւն ա՟մ ուրեք նողկալի.

Երանի՛ պետութեան, որոյ երևելի պաշտօնեայք նման են օրինաց, որ ո՛չ պատժեն զոք երբէք կրիւք և ցասումամբ. այլ միայն արդարութ՟ և հասարակաց օգտի դիտողութ՟.

Երբեմն վերին տեսչութիւն կուրացուցանէ զայնպիսիս՝ զորս խորհի պատուհասել.

Երկիր 'ի բնէ արգաւանդ և բարեբեր՝ թէ ոչ մշակիցի, ընդ բարի բուսոյ՝ բերէ և բա՟զմ մոլախոտս.

Օխա՞րդ փութահասցի յօտարոտիս, որ թշնամանայ իւրոց ազգայնոց.

Ընդ կրետացիս լե՛ր կրետացի.

Թագաւորին մի միայն անառիկ ամրոց՝ է սէր քաղաքացւոց. Սենեկա.

Թագաւորութիւն ազգէ յազգ փոխի վ՟ն անիրաւութեանց, բռնաւորութեանց, հարստահարութեանց՝ որք գործին 'ի նմա, և վասն դրժողութեանց, որք բազմօրինակ զօրանան 'ի նմա.

Ժողովրդոց քաջաց է ա՟մ ինչ.

Դաւ

Թի դալ 'ի խոյզ ճշմարտութեան,
անդ բանն և բարք հակառակ կան:

Իմաստնոյն պարտ է յերիւրել ը̃ ժամանակին: Սենեկ.

Իմաստութեան վարդապետ գանիւք բառնայ 'ի տղայոց զչնորս, որք յետոյ ընկրկեն զնա յառաքինի գործոց:

Իշխանաւորն է օրէնք խօսուն, և օրէնքն իշխանաւոր՝ համր: Կիկեր.

Լաւ է յաղթել՝ ըստ կանոնաց գործելով, քան չարաչար հնարիւք յաղթել անիրաւութեան:

Խոտիւ գնալ ը̃ այնոսիկ՝ որք կամին դառնալ 'ի զղջմանէ, է անխոհեմութի̃:

Ծեծեալ զերկաթ, մինչ ջերմ է:

Կան չար օրինակք, որք չար ևս են քան զնոյն ինքն զյանցուածս:

Մեանք առանց բարեկամաց՝ չէ՛ 'ի կենաց համարի:

Ոչ է ը̃ համբոյր գովեստի խածատողութի̃ նախանձու:

Կտրի առանց ինչ ախտակցութե̃ անդամ փուտ, զի մի և այլ անդամք փտեսցին:

Սաստատել պատիժ 'ի մի̃ յանցանաց՝ յորմէ քստմնի բնութիւն, է առաւել ուսուցանել մարդկան վարկանել զայն ոչ̃ կարելի իմն, քան խափանել:

Հաս-

Հաստատութիւն մտաց է բաղում ան-
գամ՝ փոխել զկարծիս։

Ճշմարտութիւնն միշտ մնայ անսայղ։
Ճշմարտութեն հնար է ըստ երաց ինչ
աղօտանալ, այլ ոչ շիջանել իսպառ։

Անխանք և նախանձ են մոլութիւնք՝
որք գիտեն մառայլ արկանել զերա-
պանծ համբաւոյ։

Մահ և կեանք ներ լեզուի է, և որ յաղ-
թէ նմա, կերիցէ զպտուղ նորա։

Մարդս չէ ամեհի և անընտել. և բռ-
նաւորութիւն ՚ի նմա՝ է անընտանուր
մոլութիւն, որում հնար է փոխել փո-
փոխութեամբ բնակութեան և այլ զբ-
կենաց. որովհետև այսպիսի հնարիւքըն-
տելանան և գազանք ամեհիք։

Մեծ յաջողուած յոլովակի է մեծ փորձելի։

Մեծարանք ընծայեալք առաքինութե,
Ճշմարիտ տանջանք են նախանձու։

Մի իմաստուն խորհուրդ աւելի արժէ
քան զհազար բազուկ։

Միաբանութեամբ իրք փոքունք աճեն,
անմիաբանութեամբ վատնին մեծամեծքն։

Մի սակս մահու թշնամւոյ քո ուրախ
լեցիր, գիտելով՝ զի ամենքին մեռանելոց եմք։

Յայնժամ սկսանի մարդ մեռանել, յոր-
ժամ սկիզբն առնէ կեալ։

Արո-

Յիրողութիւնս մարդոյ՝ խորագիտութիւն և խորամանկութիւն աւելի ազդեն քան զյայտնի զօրութիւն և զբացերև խոր-հուրդ։ Օձի պա՛րտ է գիտել միապէս ՚ի վեր արկանել զոյժ և զխորագիտութի։

Յոլովակի պատերազմն խափանէ զօրէնս՝ որ եդանն ՚ի ժամանակի հաշտութեան. և հաշտութիւնն նանրացուցանէ զայնս՝ որոց պատերազմն եդ սկիզբն. ո՜ր նաւն այլազգ ղեկավորի ՚ի խաղաղական պա-հու, և այլազգ յալէկոծութե։

Յորժամ ծովն է ՚ի խաղաղութե, չիք ոք՝ որ ոչ գիտէ վարել զնաւն. բայց իբրև յառ-նէ մրրիկ սաստիկ, և նաւն լինի ալեաց և հողմոց խաղալիկ, յայնժամ պէտք են առն իմաստնոյ և քաջի, հմուտ և փորձ նաւապետի։

Նախանձն անարգ քան զամենայն մո-լութիւնս՝ կուրացուցանէ զայնոսիկ, որք թշուառութե լինին այնմ անձնատուր։ Նետ զգուշացեալ սակաւ խոցէ։

Նախնի բնութե էր Հռոմայ

Նորոյ լինել ժողովրդոց հպատակաց,
և զլխահար ամբարտաւանս դիմակալաց։

Շարժումն և գրգիռ առաւել են օգ-տեն

Շեղջեալ ըղձանձ՝ շեղջեալ տրդոր՝ եթէ քաւես,
այս թէ ոչ՝ շեղջեալ ըղձանձ՝ լիւ և բաւես։
Սվրաքիոս։

Շուն վաղածին ծնանի լակոտս կոյրս։

Շփոթ է, որ ինչ 'ի փոշի մանրի։ Սենեկա։

Ազգի երկպառակութեան և կողմնասի-րութեան կործանումն է իրողութեց։

Ոչինչ բնաւորութիւն սոյնոյ դիւրամէտ առ նախանձ, ոմ՝ որոց տոհմ և բաղդ չէ որտիցն զուգական. վասն զի ատեան զա-ռաքինութիւն՝ ոմ բարի իմն արտաքին։

Ոչ միշտ գտանի ընդ իմաստութիւն 'ի գլուխ զօրագլխի։

Որչափ և բուռն խիղախիցէ ժողովուրդն, անսայ բանի՝ յորժամ լիցի վարիլ ընդ նմա դթութեամբ և արդարութեամբ։

Որպէս դիւրաւ սայթաքին երբեմն արք իմաստունք, ը պառ 'ի վայր մոլութեանց։

Որպէս զծնողաց խստութիւն, նոյն՝ ղհայ-րենեացն համբերութեամբ և ժուժկա-լութեամբ մեղմել արժան է։

Որ ոչ կարէ՝ զոր կամի, կամեսցի զոր կարէ։

Ուր արդիւնք են հաւասարք, հաւասար լինել պարտ է և պատուոյ։

Ուր

Ուր ինչ մի հակառակ ելանէ շահու
անձին, ոչ ջերմ գտանի պաշտօն ա̃ծային։
Ուր յանկ եղանեն պատրանք, սկիզբն առ-
նուն տուգանք։

Զանսալ երբէք թշնամւոյ, և ոչ երկըն-
չիլ ՚ի ձախորդութեան, այլ երկեցու-
ցանել առաւել ևս սրտապնդութի̃ և յոյս։

Զի՛ք ձոխութի̃ որչափ և մեծ իցէ, զոր մո-
լեգին շռայլութիւն ոչ վատնիցէ։

Զի՛ք յանցաւորութիւն, որում չիցէ ըն-
դունակ մարդկան չարութի̃։

Զի՛ք տեղի դեղոց բժշկութեան, ուր մո-
լութիւնք փոխեցան ՚ի բարս։

Պայծառանայ յաղթութիւնն՝ ՚ի յաղ-
թահարելն զմարտուցեալս, և ոչ ՚ի
ժանտանալն առ պարտեալս։

Պատուասիրութեան հնար է ծպտել և
զգենուլ զերևոյթ ա̃մ առաքինութեանց՝
առ հասանել իւրոց խորհրդոց, և երևել
յաչս մարդկան ցածութիւն, ուղղութի̃,
անշահասիրութի̃ անձին, և երախտաւորութի̃։

Պարտ է վարել ընդ իշխանաց իբրև ը̃
հրոյ, առ որ՝ թէ առաւել մօտաւորիս՝
այրէ. եթէ հեռանաս՝ սառնուս ՚ի ցրտոյ։

Պղերքիս հաստատէ ո̃մ առած ինչ եակն
և հիմնական մ̃ զօրավարի. թէ չէ պարտ
նմա երբէք դիմադրաւել անձամբ առ-
վտանգ.

վտանգ, յորժամ պատճառն չէ հանրական և որոշէլ. և թէ յայնժամ իսկ պարտ է նմ բացական լինել 'ի վտանգէ ըստ կարի :

Ինչ ոսկի է անծանօթութիւնն, զորոյ՝ խառնուրդ մեծապաշտութեան ոչ կարէ բառնալ զարժէս.

Մեր հպատակաց առաւել եւ հաստատա-պինդ ամրութիւն է աթոռոյ:

Սէրն ծառայէ այլում հաւատարմութեն և նախանձաւորութեն քան զերկիւղ.

Սիրտ պատրաստական 'ի ձախորդութիւնս յուսոյ, և 'ի յաջողուածս զգոն է 'ի փոփոխութենէ բաղդի 'ի հակառակն.

Սուտ գրգռէ, և անմիտ սէր փառաց:

Մտորադասութիւն և հնազանդութիւն, երկու գլխաւոր պատճառ են մեծութեան և զօրութեան պետութեանց ազգաց:

Սնոտամիտք դիւրաւ ընկղմին 'ի ծու-ղակ յիւրեանց փայփայեալ կրից:

Պլուտարքոս.

Տեսչութիւնն յոլովակի 'ի ձեռն առ-նու զմի չարագործ 'ի պատուհասել զայլ չարագործ.

Տոյժ համբաւոյ և հաւատարմութեան ապաքէն մեծ է և անկշռելի:

Ցանկութիւնն կրէ 'ի կապարճս ազգ-ազգս նետից, է որ կապարեայ, է

որ

որ ոսկեղէն, և է որ թօյեղէն. որովք լսո-ցէ բազմօրինակ. ոմն սիրահարի ձայնէ հաճոյից, ոմն մեծապետաց, և ոմն պարտուոյ. ամն է ցանկութի:

Փորձ կենդանեաց պատերազմի բառնայ զերկիւղ ճշմարտին:

Բաշխադեալ ելք կուրացուցանեն եր-բեմն զանփորձս, և լինին նոցա մա-հաբերք:

## Վ Ե Ր Ջ



# ՅԱՆԿ

### Ըստ կարգի Այբուբենից

| | Երեսաթիւք |
|---|---|
| Ագահութիւն. | 31.127. |
| Ազնուութիւն մարդկան. | 21. |
| Ազատութիւն առաքինեաց. | 130. |
| Ամանութիւն. | 32. |
| Անիրաւութիւն. | 55. |
| Անիրաւութիւն դատաւորաց. | 195. |
| Անձին խնամութիւն. | 158. |
| Անչափաւորութիւն. | 124. |
| Անյիշաչարութիւն. | 78.88. |
| Աննախանձութիւն. | 121. |
| Անունն Բաղ Հարցեդունացի. | 59. |
| Անշահասիրութիւն կամ ազատասիրութիւն. | 170. |
| Աշխատութիւն եւ Հեշտութիւն. | 56. |
| Աշխատասիրութիւն. | 65. |
| Աղբերասիրութիւն. | 86. |
| Ապէ ()Փառատեայ. | 86. |
| Ապաշխարութիւն. | 9. |
| Ապաստանութիւն. | 28. |
| Առաքինութիւն. | 23.134. |
| Ատենաբանութիւն Կիկերոնի. | 112. |
| Արդարութիւն. | 42. |
| Արժանապատուութիւն. | 107. |

| | |
|---|---|
| [illegible] | 157. |
| [illegible] | 27. 105. |
| [illegible] | 23. |
| [illegible] | 28. 29. |
| [illegible] | 36. 38. 41. 70. |
| [illegible] | 152. |
| [illegible] | 72. |
| [illegible] | 35. |
| [illegible] | 164. |
| [illegible] | 87. 106. |
| [illegible] | 35. |
| [illegible] | 66. |
| [illegible] | 115. |
| [illegible] | 76. |
| [illegible] | 119. |
| [illegible] | 154. |
| [illegible] | 125. 132. |
| [illegible] | 102. |
| [illegible] | |
| [illegible] | 23. |
| [illegible] | 53. |
| [illegible] | 31. |
| [illegible] | 31. |
| [illegible] | 84. |
| [illegible] | 89. |
| [illegible] | 190. |
| [illegible] | 26. |


[illegible] [illegible]

| | |
|---|---|
| [illegible]. | 77. |
| [illegible]. | 41. |
| [illegible]. | 25. |
| [illegible]. | 186. |
| [illegible]. | 129. |
| [illegible]. | 120. |
| [illegible]. | 44.53. |
| [illegible]. | 68. |
| [illegible]. | 176.194. |
| [illegible]. | 72. |
| [illegible]. | 28. |
| [illegible]. | 135. |
| [illegible]. | 43. |
| [illegible]. | 57. |
| [illegible]. | 183. |
| [illegible]. | 26. |
| [illegible]. | 128.160. |
| [illegible]. | 45. |
| [illegible]. | 54. |
| [illegible]. | 33. |
| [illegible]. | 69. |
| [illegible]. | 39. |
| [illegible]. | 85. |
| [illegible]. | 73. |
| [illegible]. | 56. |
| [illegible]. | 190. |
| [illegible]. | 57. |


[illegible]

Ղօղութեան Եզեկիայի. 103.
Մահ Կատարի. 109.
Մանկանց դարձ Հաւանել. 147.
Մարկեղոս աւետարանիչ. 108.
Մեկեդոն քաղկեդոնեցի. 55.
Մոլութեան. 25.
Յաջողումն յաւիտենական. 45.46.50.52.68.
Յիշատակ նահատակաց. 27.
Յոռութեանց դատաւորաց. 133.
Նախագուշութեան. 124.
Նախանձ. 39. 43.
Նախատեսութեան. 33. 117.
Ներգործութեան աստուծոյ. 184.
Շիդեոն ափրիկեցի. 62. 64.
Շիրիմ մեծին Աղեքսանդրի. 104.
Ովրապետոս. 87.
Ուշադրութեան. 32.
Չար ոռնեալ. 24.
Չարախօսութէ. 34.
Պատուիրանին Նիկերոնի. 113.
Պարտութեան Պոմպէոսի. 79.
Պատիւ. 26.
Պետրոս պապանի. 189.
Պետանիք չինաց. 42.
Պեղեոն արքայ. 174.
Պոսիդոնիոս փիլիսոփայ. 70.
Պրուշ հանապազորդութեան. 87.


Սուրբ

Սատուրնեան հանդէսք . տե՛ս Տօն կռոնոսեան .
Սթափութիւն Կեսարու . 93 .
Սրբութիւն . 67 .
Սնունդ շաղախոյ . 36 . 48 .
Սոկրատէս . 20 .
Ստահակութիւն աշակերտի . 120 .
Վախճան . 50 .
Վեհանձնութիւն . 173 .
Վէրս փիլիսոփայ . 84 .
Տաղ Վերգիլիոսի . 102 .
Տգիտութիւն 107 .
Տհաճութիւն հռովմայեցի Մաղետայ . 94 .
Տնտեսութիւն . 34 .
Տօն Կռոնոսեան . 182 .
Փառքերոս եղկելոց . 57 .
Փոփոխութիւն բաղդի . 153 .
Քաղաքավարութիւն . 9 .
Քաջագործութիւն Պաղղիոնեայ . 191 .
Քաջութիւն զօրաց . 126 .
Օգնութիւնք աշխարհապահք . 88 .
Օտարոտս ոչնչին եղանակաւ . 97 .
Օրէնք . 123 . 127 .

# ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խնդալից հոգւով գոհաբանեմ զպաշտելի Անուն Ամենատեառն, շնորհ ունիմ բարեգխպուն ժամանակին. որ թոյլ ետ սկզբնաւորս գործոյս հաւաքածոյ՝ փութով ՚ի փոխճան, և տեսանել զթերամամանեց երկս ձեռաց իմոց ՚ի սակաւ միջոցի տպագրութե կենդանացեալ, ՚ի յիշատակ ինձ և իմոյ ազգատոհմի։

Սան որոյ աղերս ՚ի մէջ մատուցեալ առաջի ընթերցանողաց իմոց աղաչեմ կրկին՝ ներողամիտ գտանիլ ինձ յայս գործ, յոր ձեռնարկի ՚ի վեր քան զծաիմոց կարեաց. զի չէին ինձ կամք

ղա-

զանուն գրագիտի ստանձնել,
այլ գրասիրի. և ոչ պարծանս նո-
րացոյց գրատպութե՟ հռչակել
զինէն, այլ նախանձեցուցանել նա-
խանձու բարեաւ զամ՟ զհամազգի
ուսումնասէր Մանկունս մեր. յօ-
րինակէ իմմէ քաջալերեալ կամ
պատկառեալ՝ առ այսպիսի աշ-
գաշահ իրողութիւնս ամենացան-
կալի Հայրենեաց մերոց թեա-
կոխել: Ո՛ի թէ այր անցեալ դե-
րիտասարդութ՟ և անուս բոլո-
րովին՝ այսչափ փոյթեռանդն բերի
ջանալ ծանօթանալ գիտութե՟
Իմաստնոց, և 'ի լոյս ընծայել զա-
ռաքինութիւնս նոցա կամ զմո-
լութիւնս 'ի հրահանգ վարուց և
բարուց ս″րասեր համբակաց,

մր-

որչափ նոքա կարասցեն հմտա-նալ, իմաստնանալ և առաքինա-նալ. եթէ ծնողք նոցա ծանու-ցանեն զճաշակ գրականութեան, յորդոր լիցին և վերակացու՝ ան-ընդհատ առաջնորդել որդւոց իւրեանց ՚ի հանապազորդութիւն ուսման, ապախտ արարեալ զայս-օրեայ վաստակս նոցա: Թերևս այս այս իցէ պատճառ, զի նօսր է յոյժ թիւ ուսելոց յազգի մե-րում. զի ծնողք՝ խաբեալք կոյր զկուրայն անխմաստ կարծեօք ՚ի մանաւոր շահուց՝ զորս որդիք իւրեանց ՚ի ձեռս բերեն այժմ անարգ աշխատանօք, զրկեն զին-քեանս և զորդիս իւրեանց յե-դուց ՚ի մեծամեծ յապագայ շա-հուց.

հուց։ Նուա՛ղ, թէ ոչ զդատաստա-
ցին յայտնեալ է։
Նպաքէն ըստ այսց տապա-
րիսեալ զՀամարձակութ իմ յառ-
եան Գրիտնոց, ընծայեմ զայս
մեծապատուարժ սրտիւ դեռաբոյլ
Սուսմնկանց ազգիս 'ի վայելս՝
պարտաւորելով զնոսա 'ի յիշել
բարեմաղթութ 'ի Տեառն զՀայր
իմ զԱրեմիա, և զմայր իմ Օա-
յիմ՝ զՀանգուցեալս առ Տէր։
դասել զնոսա 'ի դաս աջակող-
մեան արդարոց. և զմխածին ժա-
ռանգական աղդատոՀմի իմոյ զԱ-
րեմիա քանեՀինգամեայ զին-
ուորական Սպայն 'ի Հեծեալս-
զնդի (կոչեցելոյ Լէյբ Գվարդեյ
Ուլանսկոյ Պօլք) Օդեսսոյիս Սոյ-
սե-

սերութեան Ռուսաց, դշխե-
զակիլն Աւպետութեան սրբոյն
Ամենայն դ. կարգի՝ անձեւ, զի լիցի
յօդուած և՛ի փառս Հայրենեաց
և սուրբ Եկեղեցւոյ մերոյ։ Եւ
զայլ ամ՝ կենդանիս և զհանգու-
ցեալս մեր երկնից օթեւանացն իւ-
րոց արժանիս առնելով։

Ամէն։

# Ուղղագրութեան

| Սխալս | որ ՚ի Տողս | Երեսաց | այսպէս Կարդա՛ |
|---|---|---|---|
| րին ․մին երե | 1 | 15 | րէ ․նմին երե |
| քան գովեսցեն | 11 | 57 | քան թէ գովես-ցեն զքեզ |
| յաղթեսցես | 2 | 62 | յաղթեսցէս |
| զազդ | 7 | 68 | ազդէ |
| հաւատարմու-թեան | 10 | 70 | հաւատարմու-թեան |
| զապաւէնել | 11 | 72 | չապաւէնել |
| մարդ | 9 | 78 | զմարդ |
| խմաստից | 14 | 138 | իմաստից |
| շուեցեն | 23 | 139 | շուեչեն |
| մի | 2 | 143 | մի՛ |
| վարէլ | 16 | 144 | վարել |
| ջամամասարաջան․ | 6 | 149 | ջամամասարաջան․ |
| այսպիսամ | 13 | 154 | այսպիսուամ |
| պատ․ւոյ | 6 | 156 | պատ․ուոյ |
| նը․ մանարերու-թիւն | 18 | 186 | նը․ մանարերու-թիւն |
| Պտէմամբէնէս | 1 | 198 | Պտէմամբէնէս |
| Հաստատութիւն | 1 | 202 | Հաստատութեան |

Յորէնակն էնը․

Գիրքը ենթարկված է ախտա
— — — — 42 թ.